

**ՆԿԻՐՎՈՒՄ Է  
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ 20-ԱՍՅԱԿԻՆ**

**ПОСВЯЩАЕТСЯ  
20-ЛЕТИЮ ОБРАЗОВАНИЯ  
НАГОРНО - КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
ИНСТИТУТ ИСТОРИИ

**БОРЬБА АРМЯН ЗА ВОССОЕДИНЕНИЕ  
НКАО С СОВЕТСКОЙ АРМЕНИЕЙ**

Сборник документов и материалов

Составители: к.и.н., доцент Карен Хачатрян  
д.и.н. Грант Абраамян

ЕРЕВАН  
ИНСТИТУТ ИСТОРИИ  
2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԼՂԻՄ-ի ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փաստաթղթերի և նյութերի ժողովածու

Կազմողներ՝ պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյան  
պ.գ.դ. Հրանտ Արախանյան

ՍԵՐՈՊ ՍՈՔ. ԱՇԵՆԱ  
ՍԱՏՆԱԾՈՐ  
76



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
76

ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ  
2011

ՀՏԴ 327(479.25): 325: 947  
ՊՄԴ 66.4 (2Հ)+66.5(2Հ)+63.3 (2)  
Հ 307

Հրատարակության է հանձնարարել ՀՀ ՊԱԱ պատմության  
ինստիտուտի գիտական խորհուրդը

Утверждено к изданию ученым советом Института истории НАН РА

Կազմողներ և խմբագիրներ՝ պ.գ.թ., որոցնառ Կարեն Խաչատրյան  
պ.գ.դ. Հրանտ Աբրահամյան

Составители и редакторы: к.и.н., доцент Карен Хачатрян  
д.и.н. Грант Абраамян

Հ 307 Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար:  
Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան,  
Հ. Աբրահամյան. - Եր.: ՀՀ ՊԱԱ Պատմության ինստ., 2011, - 175 էջ:

Ժողովածուում ընդգրկված փաստաթղթերն ու նյութերն ընդգրկում են 1923–1988 թթ.: Դրանք հիմնավորում են այն փաստը, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե Ափյուռքում, է պայքարել է Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Նյութերը բացահայտում են նաև Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի առանձին դրվագները:

Հասցեագրված է Հայոց պատմությանը հետաքրքրվող լայն հանրությանը:

ՀՏԴ 327(479.25): 325: 947  
ՊՄԴ 66.4 (2Հ)+66.5(2Հ)+63.3 (2)

ISBN 978-9994173-59-4

© Պատմության ինստիտուտ, 2011

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի խորհրդայնացումով 1920 թ. աշնան վերջին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը քաղաքական նոր զարգացումներ ստացավ: Խորհրդայնացման կապակցությամբ Ադրբեջանի հեղկոմը նոյեմբերի 30-ին հանդես եկավ հռչակագրով, որում նշվում էր, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև սահմանային խնդիրներ այլևս գոյություն չունեն, Ջանգեզուրն ու Նախիջևանն անցնում են Հայաստանին, Ղարաբաղի Լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք: Հռչակագիրը դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում: Ավելին, Ադրբեջանի հեղկոմը շուտով «Բոլորին, բոլորին, բոլորին» խորագրով դիմումով (որում Լեռնային Ղարաբաղին վերաբերող մասը տարբերվում էր հռչակագրից) ազդարարեց. «Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՌՍԽՖՍՀ մասեր»: Որոշում-դիմումը տպագրվեց Երևանի «Կոմունիստ» թերթի 1920 թ. դեկտեմբերի 7-ի համարում:

Հիմնախնդրի լուծման իր քաղաքականություն էր իրականացնում նաև ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն: Վերջինիս կողմից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված որոշման 5-րդ կետով Հայաստանի կառավարությանը հանձնարարվեց Հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի` Հայաստանին պատկանելիության մասին»<sup>1</sup>: Բյուրոյի որոշումը ընդունվել էր միաձայն, կողմ էր արտահայտվել նաև Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարինան Նարինանովը:

Ի կատարումն կովկասյան բյուրոյի որոշման` 1921 թ. մայիսին կազմավորված ՌՍԽՖՍՀ ժողկոմխորհը, նախագահ Ալեքսանդր Սյանինկյանի ստորագրությամբ 1921 թ. հունիսի 12-ին ընդունեց համապատասխան հայտարարություն. «Ադրբեջանի ՍԽՐ հեղկոմի հռչակագրի (նկատի է առնվում 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկրետը` խմբ.) և Հայաստանի ու Ադրբեջանի ՍԽՐ-ների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է Հայաստանի Սո-

<sup>1</sup> ՌԱԱ (Հայաստանի Ազգային արխիվ), ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 13: Տե՛ս նաև Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992, էջ 633:

ցիպլիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս»<sup>2</sup>: Հայտարարությունը հայերեն, ռուսերեն ու թուրքերեն լեզուներով հրապարակվեց մամուլում. Երևանի «Խորհրդային Հայաստան» թերթում՝ հունիսի 19-ին, Բաքվի «Բակինսկի ռաբոչի» ռուսալեզու թերթում՝ հունիսի 22-ին:

1921 թ. հունիսի 25-ին Թիֆլիսում հրավիրվում է ՌԿ(բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի մայիսի 2-ի որոշումով կազմավորած Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշող հանձնաժողովի անդամիկ նիստը: Հանձնաժողովում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ալեքսանդր Բեկզադյանը նիստի մասնակիցներին հաղորդում է վերջին տարիներին հայ ժողովրդի կրած ծանր կորուստների, Հայաստանի սոցիալ-տնտեսական ներկա դժվարին կացության, երկրում կուտակված բազմաձև գաղթականների բնակեցման խնդրի (որը լուծելու համար տարածքներ են անհրաժեշտ), վերջապես՝ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանի համար ստեղծված ծանր վիճակի մասին: Հաշվի առնելով նշվածը՝ Բեկզադյանն առաջարկում է Ադրբեջանից և Վրաստանից հայկական տարածքների «կտրակցումներ» կատարել Հայաստանի օգտին: Սակայն հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչները կտրականապես մերժում են տարածքային փոփոխությունների մասին Բեկզադյանի առաջարկը, դա որակում որպես ազգայնական դիրքորոշում, իսկ հանձնաժողովի նախագահ, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Սերգեյ Կիրովը, որն աջակցում էր վրաց-ադրբեջանական այլանսին, շեշտում է, որ «Քաղաքական նկատառումներից ելնելով ներկայումս տարածքային կտրակցումների մասին խոսք անգամ լինել չի կարող»<sup>3</sup>:

Հանձնաժողովի հունիսի 25-ի նիստում առաջ քաշվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որի քննարկումը, սակայն, Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Հուսեյնովի խնդրանքով հետաձգվեց՝ հարցի վերաբերյալ Բաքվից անհրաժեշտ հրահանգներ և լիազորություններ ստացած չլինելու պատճառաբանությամբ<sup>4</sup>:

Ստեղծված լարված մթնոլորտում, որը սպառնում էր ձախողել հանձնաժողովի աշխատանքները, Մ. Կիրովը և Գ. Օրջոնիկիձեն հունիսի 26-ին շտապում են հեռագրել Բաքու՝ Ն. Նարինանովին.

<sup>2</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 636.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 640–642:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 642:

«Ձանգեզուրում ստեղծված իրավիճակում Հայաստանի սահմանների որոշման բանակցություններում ընդմիջումը թողնում է խիստ աննպաստ տպավորություն... Խնդրում ենք շտապ հրավիրել քաղբյուրը և ժողկոմխորի ու լուծել Ղարաբաղի հարցը»: Օրջոնիկիձեն և Կիրովը հայտնում են նաև հարցի վերաբերյալ իրենց կարծիքը. «Անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով ոչ մի հայկական գյուղ պետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»<sup>5</sup>:

Նույն օրը հրավիրվում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որտեղ Օրջոնիկիձեի և Կիրովի առաջարկությունն արմատապես սխալ է համարվում: Ինչ վերաբերվում է Ղարաբաղի խնդրում Բեկզադյանի հարցադրմանը, ապա ընդունվում է հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի տնտեսական բացարձակ կապն Ադրբեջանի հետ՝ հարցը պետք է լուծել հենց այդ իմաստով»<sup>6</sup>: Որոշման մասին 1921 թ. հունիսի 27-ին Բաքվից հաղորդելով Թիֆլիս Յուսեյնովին, նշվում է, որ հակառակ դեպքում Նարիմանովը սպառնացել է Ադրբեջանի ժողկոմխորի հրաժարականով: Պատասխանում Յուսեյնովը Նարիմանովին հայտնում է, որ որոշումը սառնությամբ կընդունվի, որովհետև իր հետ զրույցում Օրջոնիկիձեն շիտակ հայտնել է, որ Ղարաբաղի հարցի լուծումը խորհրդային իշխանության պատվի հարցն է և պետք է լուծել վերջնական ու այն ձևով, «ինչպես ես Ձեզ երեկ հաղորդել եմ»<sup>7</sup>:

Սակայն, անգամ բուլշևիկ բարձրաստիճան ղեկավարների վճռական «հրահանգը» չազդեց Նարիմանովի վրա: Ադրբեջանը կոշտ և անզիջում քաղաքականություն որդեգրեց Ղարաբաղի հարցում: Հանդիպելով ադրբեջանական կողմի նման դիրքորոշմանը, Ալ. Բեկզադյանը հունիսի 27-ին հրաժարվում է մասնակցելու անդրկովկասյան հանրապետությունների սահմանների հարցի որոշման հանձնաժողովի հետագա աշխատանքներին և այնուհետև, որպեսզի վիճելի հարցերը փոխանցվեն ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի քննարկմանը:

1921 թ. հուլիսի 2–7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի նիստում, որին Գ. Օրջոնիկիձեի հրավերով մասնակցում էր Հյուսիսային Կովկասում (Նալչիկում)

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 7–10:

<sup>6</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 645.

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 11:

իր հանգիստն անցկացնող ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Իոսիֆ Ստալինը, քննարկելով Ղարաբաղի հարցը, քվեարկության արդյունքում ընդունվում է արդարացի որոշում՝ «Լեռնային Ղարաբաղը մտցնել ՀՍԽՖՍՀ կազմ»։ Որոշմանը, սակայն, դեմ է արտահայտվում Ն. Նարիմանովը, նա պնդում է, որ պետք է հարցի վերջնական քննարկումը փոխադրվի ՌԿ(բ)Կ կենտկոմ։ Պլենումն ընդառաջում է Նարիմանովին և վերջինիս առաջարկի ոգով ընդունում նոր որոշում. «Քանի որ Ղարաբաղի մասին հարցն առաջացրել է լուրջ տարածայնություններ, – նշվում է նրանում, – ՌԿԿ կենտկոմի կողմից կայանալու է համարում այն փոխադրել ՌԿԿ վերջնական որոշմանը»<sup>8</sup>։

Սակայն հարցը կենտկոմ չհասավ։ Հաջորդ օրը, հուլիսի 5-ին, հրավիրվում է կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, ուր վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ հուլիսի 4-ի պլենումի որոշումները։ Առանց հարցի քվեարկություն կազմակերպելու պլենումը որոշում է. «Ելնելով մոսկովյանների ու հայերի միջև ազգային խաղաղության և Վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեյջանի հետ նրա մշտական կապից Լեռնային Ղարաբաղը թողնել ԱդրՍԽՖ սահմաններում նրան տրամադրել նարգային լայն ինքնավարություն...»<sup>9</sup>։

Հուլիսի 5-ի ոչ օրինական որոշման ընդունման գործում ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինի բացասական դերը մեծ էր, բայց, կարծում ենք, ոչ որոշիչ։ Այլապես ինչով բացատրել, որ Ստալինի ներկայությունը հուլիսի 4-ի նիստին չէր խանգարել Հայաստանի օգտին արդարացի որոշման ընդունմանը։ Չի բացառվում, որ հուլիսի 4-ի որոշումից հետո ադրբեյջանական կողմին հաջողվել էր ստանալու ՌԿ(բ)Կ կենտկոմի աջակցությունը։ Կամբյուրոյի հուլիսի 5-ի որոշման կայացման նշված վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պլենումին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Սյանիկյանը, Ն. Նարիմանովի օրինակով, չպնդեց Ղարաբաղյան հարցի վերջնական լուծումը ՌԿ(բ)Կ կենտկոմ փոխադրելու հարցում, որի իրավունքը նա ուներ։

Հայկոմկոմի առաջին համագումարում (26–29 հունվարի 1922 թ.) ունեցած ելույթում, հերքելով իր և ՀԿ(բ)Կ կենտկոմի հասցեին պատվիրակների կողմից հնչեցված ծանր մեղադրանքները և

<sup>8</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 649–650.

<sup>9</sup> Նույն տեղում։



խիստ քննադատությունը, որ վերջիններս Ղարաբաղի հարցում չդրսևորեցին վճռականություն և ավելի հաստատական չափերեցին երկրամասը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցում, Ալ. Սյանհիկյանը, կարծես արդարանալով, նշում է միայն, որ կովկասյան բյուրոյի ավելումի նիստը հիշեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «Այսպես՝ Ադրբեջանն ասում էր, եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, սակայն մենք նախ չենք մատակարարի»<sup>10</sup>:

ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի ավելումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ունահարվեցին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը (94,4 տոկոս) կազմող հայության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը:

Արտահայտելով հայ ժողովրդի կամքը, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը քննադատաբար վերաբերվեց Ղարաբաղը ՀՍՄԻ-ի կազմից դուրս թողնելու ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի հուլիսի 5-ի որոշմանը: Արդեն հուլիսի 16-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմը միանգամայն սխալ և անբավարար համարեց այն<sup>11</sup>:

Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկելու կովկասյան բյուրոյի ավելումի հուլիսի 5-ի որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չէր խնայում ստանալու արցախահայության համաձայնությունը Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու հարցում: Այդ նպատակին հասնելու համար ադրբեջանական իշխանությունները Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում լայն քարոզարշավ անցկացրեցին, սակայն՝ անենուրեք հանդիպեցին «սառը դիմադրության»: Բարձր ջանքերով Ատեփանակերտում հրավիրված շրջանի գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1921 թ. հուլիսի 28-ի համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից երևան ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունն օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»<sup>12</sup>: Այդպիսին էր Արցախի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ-ոք հաշվի չէր նստում:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2, ք. 13, 23:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 39, ք. 18:

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, ք. 41-42:

Այդուհանդերձ, արցախահայության և Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաստատական և հետևողական ջանքերի շնորհիվ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները երկու տարվա համառ դիմադրությունից հետո ստիպված էին նահանջել և 1923 թ. հուլիսի 7-ի հռչակագրով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ<sup>13</sup>: Ճնշումների պայմաններում գնալով այդ քայլին՝ ադրբեջանական կողմը, սակայն, նոր ծուղակ էր նախապատրաստում արցախահայության համար: Մարզի սահմանները հետագայում այնպես «ճշգրտվեցին», որ Լեռնային Ղարաբաղի որոշ տարածքներ (Գյուլիստանի մելիքությունը, Խանլարի շրջանի մեծ մասը, սահմանային որոշ հատվածներ, այդ թվում՝ Լաչինի (Քաշաթաղի)) անջատվեցին մարզից և դրվեցին Ադրբեջանի անմիջական ենթակայության տակ: Դա կատարվում էր Արցախը մայր Հայրենիքից արհեստականորեն բաժանելու նպատակով:

1927 թ. Խորհրդային Ադրբեջանի Գետաբեյկի շրջանի հայ բնակչությանը 10 բնակավայրեր փոխանցվեցին Շամխորի շրջանին: Վարչական այս փոփոխությունները նպատակ էին հետապնդում թույլ չտալու, որպեսզի հայ բնակչությունը մեծամասնություն կազմի որևէ շրջանում:

Այդուհանդերձ՝ ինքնավար մարզի կարգավիճակի շնորհիվ էր նաև, որ Խորհրդային տարիներին արցախահայությունը դիմակայեց Ադրբեջանի ստորանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու խնդիրը մտահոգել է ողջ հայությանը, այդ թվում ՀԽՍՀ իշխանություններին, և գտնվել նրանց ուշադրության ոլորտում Խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում: Ստալինյան բռնապետության պայմաններում, երբ այլախոհության յուրաքանչյուր դրսևորում դաժանորեն պատժվում էր, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, սատարելով արցախահայությանը, փորձում էր կենտրոնական իշխանությունների առջև բարձրացնել ԼՂԽՂ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու հարցը, սակայն առանց արդյունքի:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում, 1945 թ. գարնանը Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, արձագանքելով Համասփյուռքյան կազմակերպությունների

<sup>13</sup> Стн Нагорный Карабах в 1918–1923 гг., т. 669–670:

կոչերին, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև բարձրացրեց Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները (Կարս, Ադրահան, Սուրմալու) Խորհրդային Հայաստանի հետ միավորելու խնդիրը: Վերջինիս արդարացի լուծման անհրաժեշտությունը հիմնավորվում էր ոչ միայն պատմական արդարությունը վերականգնելու առումով, այլև աշխարհով մեկ սփռված հայության հայրենադարձությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար: Այս կապակցությամբ Հայաստանի ղեկավարությունը չանտեսեց և հերթական անգամ բարձրացրեց նաև Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու հարցը: 1945 թ. նոյեմբերի 11-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանն անձամբ դիմելով Ի. Ստալինին իրավացիորեն նշում է, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու անհրաժեշտությունը բխում է ոչ միայն պատմաձևակութային, տնտեսական և քաղաքական տեսակետից, այլև Ղարաբաղի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունից<sup>14</sup>: Սակայն Գր. Հարությունյանի կողմից բարձրացված խնդրի շուրջ շահագրգիռ քննարկումներ այդպես էլ չծավալվեցին և հարցը հերթական անգամ դուրս մղվեց օրակարգից:

Երկու տարի անց, 1947 թ. աշնանը, Գր. Հարությունյանը կրկին բարձրացնում է Ղարաբաղյան խնդիրը, այս անգամ այն կապելով Հայրենիքի ճանհան բռնած տասնյակ հազարավոր սփյուռքահայերի տեղավորման հրատապ խնդրի հետ: ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Զավեն Գրիգորյանի հետ միասին Գրիգոր Հարությունյանը Մոսկվայում հանդիպում է Ստալինի հետ, լուրջ և համոզիչ փաստարկներով հիմնավորում հարցը դրական լուծելու անհրաժեշտությունը: Հայաստանի ղեկավարության համառության շնորհիվ խնդիրն այս անգամ թեև քննարկման առարկա է դառնում, սակայն Ստալինի և Ադրբեջանի ղեկավարության խորամանկ հակաառաջարկով տեղափոխվում է այլ հարթություն: Ընդառաջելով Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության «համատեղ ներկայացրած» խնդրանքին, ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1947 թ. դեկտեմբերի 23-ի և 1948 թ. մարտի 10-ի որոշումներով արտոնում է Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը<sup>15</sup>:

<sup>14</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 74:

<sup>15</sup> Հարցի վերաբերյալ մանրամասն տե՛ս Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, 2001, էջ 83–87:

1949 թ. Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հերթական անգամ փորձում է քննարկման առարկա դարձնել ղարաբաղյան խնդիրը: Գր. Հարությունյանը կրկին դիմում է Ի. Ստալինին: Սակայն Լ. Բերիայի և Մ. Բաղիրովի ջանքերով հարցի քննարկումն ավելորդ է ոչ նպատակահարմար է համարվում:

Այսպիսով, պատմական տվյալ ժամանակաշրջանում թուրքադրբեջանական հակահայկական գործունեության հետևանքով հայկական տարածքները Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը դարձյալ չստացավ իր արդարացի լուծումը:

Արցախի խնդիրը ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև հերթական անգամ հրապարակայնորեն բարձրացնելու համար նպաստավոր իրավիճակ ստեղծվեց 1960-ական թթ., երբ Խորհրդահայությունն ազգային զարթոնք էր ապրում: Նույն ժամանակաշրջանում արցախահայությունը նոր թափով զանգվածային շարժում ծավալեց Արցախը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու պահանջով: 1963 թ. ԼԴԽ-ի և հարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի ստորագրությամբ բողոքագիր դիմում ուղարկվեց ԽՍՀՄ կենտրոնի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովին: Նշելով Ադրբեջանի կազմում արցախահայության գոյության և Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների խտրականության քաղաքականության մասին, բողոքագիրները պահանջում են «անհապաղ վճռել ԼԴԽ-ը և հարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ԽՍՀ-ի մեջ վերամիավորելու կամ ՈԱՖԽՅ-ի կազմի մեջ մտցնելու հարցը»:

Խորհրդային Հայաստանում նույնպես արձագանքեցին արցախահայության պահանջին: 1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամյա սգո տարելիցի կապակցությամբ ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ բազմահազարանոց հավաքներում առաջ քաշվեց նաև Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու պահանջը:

1965–1966 թթ. ինչպես Արցախից, այնպես էլ Երևանից, հայկական այլ շրջաններից բազմահազար ստորագրություններով նամակներ ուղղվեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդ, Նախարարների Խորհուրդ, ԽՍՀՄ կենտրոն՝ Ղարաբաղյան հարցը հայ ժողովրդի օգտին լուծելու պահանջով: Դրանցից պետք է առանձնացնել Լեռնային Ղարաբաղի ու Խորհրդային Հայաստանի մտավորականների, գիտության և մշակույթի գործիչների կողմից Մոսկվա ուղարկված բազմահազար ստորագրություններով նամակները: ԽՍՀՄ կենտրոնի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնևին 1966 թ. օգոստոսին Երևանից ուղարկված նամակում, որը ստորագրել էին

շուրջ 2000 հայ մտավորականներ՝ Մ. Սարյանը, Պ. Սևակը, Զ. Սահյանը, Ե. Քոչարը և այլք, մասնավորապես նշվում էր. «Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսաձևով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով: Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է՝ հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եվ քանի որ գոյություն ունի Հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից»<sup>16</sup>:

Խնդրից անմասն չմնաց նաև ՀԽՍՀ ղեկավարությունը: Արձագանքելով հայության կոչերին, ԶԿԿ կենտկոմի քարտուղար Անտոն Քոչինյանի և ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ Բարսեղ Մուրադյանի ստորագրություններով 1966 թ. սեպտեմբերի 30-ին Մոսկվա, ԽՄԿԿ կենտկոմ, ուղղված ընդարձակ և բովանդակալից նամակում Հայաստանի ղեկավարները, հեմելելով պատմական անժխտելի փաստերի վրա, հիմնավորում են Լեռնային Ղարաբաղը (ինչպես նաև Նախիջևանը) Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու «անհրաժեշտությունը»: «Մեր կարծիքով, – նշվում է փաստաթղթում, – նպատակահարմար կլիներ քննարկել և դրական լուծել Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին փոխանցելու հարցը... Սակայն, եթե ներկա փուլում Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը կապված է հայտնի բարդությունների հետ, ապա Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը չի կապված որևէ դժվարությունների հետ և կարող է իրականացվել անցավագին:

Հնարավոր անցանկալի արձագանքների մասին մտավախությունները հիմնադուրկ են, քանի որ հարց է դրվում ոչ թե Ադրբեյջանական ԽՍՀ-ի տարածքի ինչ-որ մասի օտարման, այլ ինքնավար ազգային մարզը միութենական հանրապետության հետ միաձուլելու մասին, որոնց հիմնական բնակչությունը միատարր՝ հայկական է»<sup>17</sup>:

Այսպիսով, հետստալինյան տարիներին հայ ժողովրդի և Խորհրդային Հայաստանի ղեկավարության ծայրը Արցախի խնդրում առավել հաստատական դարձավ, և պատահական չէր, որ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը 1966 թ. հանձնարարեց Խորհրդային Հայաստանի և Ադրբեյջանի ղեկավարներին քննարկել ԼՂԽՂ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու հնարավոր

<sup>16</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65 բ, թ. 1–2:

<sup>17</sup> Նույն տեղում, գ. 65 ա, թ. 1–9:

րութիւնը: Սակայն Խորհրդային բարձրաստիճան գործիչների արդրեջանամետ դիրքորոշման պատճառով Խնդրի արդարացի լուծումը դարձյալ ձախողվեց<sup>18</sup>:

Ադրբեջանի կենտրոնական իշխանութիւնների կողմից ԼՂԻՄ-ի նկատմամբ շարունակվող և տարեցտարի սաստկացող հակահայկական քաղաքականութիւնը 1970-ական թթ. ընդվզումների և ազգային ինքնագիտակցության նոր արթնկումներ առաջացրեց հայ հանրութեան մեջ:

1976–1977 թթ. ԽՍՀՄ-ում ծավալվեցին Սահմանադրության նոր նախագծի քննարկումներ: Խորհրդային Հայաստանի ղեկավարութիւնը և հայ հասարակայնութեան բազմաթիվ ներկայացուցիչներ Ղարաբաղի Խնդիրը դարձյալ բարձրացրեցին ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւնների առջև: Դիմումների, հուշագրերի, պահանջագրերի, տեղեկատու և այլ փաստաթղթերի նոր հեղեղ տեղաց դեպի Մոսկվա:

Մոսկվան, կարծես, ստիպված էր տեղի տալու, ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահութեան 1977 թ. նոյեմբերի 23-ի նիստի արձանագրութեան մեջ հայութեան պահանջը հիմնավորելու նպատակով մտցվեց հետևյալ արդարացի ձևակերպումը «Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն է միացվել Ադրբեջանին: Ընդ որում՝ հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկութիւնը և տնտեսական շահերը: ...Հարկավոր է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ-ի հետ: Այդ ժամանակ ամեն բան իր օրինական տեղը կընկնի»: Սակայն հերթական անգամ Ադրբեջանի և Խորհրդային ազդեցիկ ղեկավար մի շարք գործիչների ջանքերով ԽՍՀՄ կենտրոնի քաղբյուրուն մերժեց առաջարկութիւնը և հարցը հանեց օրակարգից:

Խորհրդային վերջին տասնամյակների ընթացքում արցախահայութեան դրութիւնն էական որևէ փոփոխութիւն չկրեց, ընդհակառակը ավելի վատթարացավ: Լիովին խաթարվեցին մշակութային և սոցիալ-տնտեսական կապերը Խորհրդային Հայաստանի հետ:

Տասնամյակների ընթացքում շարունակում էր նվազել ԼՂԻՄ-ի հայ բնակչութեան թվաքանակը՝ 1920 թ. 94,4 տոկոսից 1979 թ. իջնելով 75 տոկոսի: Դրան հակառակ, աճում էր ադրբեջանական բնակչութեան թիվը: Խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում

<sup>18</sup> Стів Перестройка и национальнѳе отношѳения, Ереван, 1989, էջ 40:

Աղբբեջանի քաղաքականությունը թեև ուղղված էր մարզի աղբբեջանացմանը, սակայն, Ղարաբաղի հայ բնակչությունը 70 տարի շարունակ դրսևորեց անհնազանդություն և նշտական պայքար նդեց տարածքային և մարդկային կորուստների, նյութական գրկանքների, մարդու իրավունքների ոտնահարումների դեմ:

1985 թ. գարնանից ԽՍՀՄ-ում ծավալված ժողովրդական գործընթացները նոր հույսեր արթնացրին Ղարաբաղյան խնդիրը արդարացի լուծելու համար: Հասունանում էր համայն հայության համաժողովրդական ազգային-ազատագրական պայքարի վճռական փուլը, որն էլ ավարտվեց պատմական հաղթանակով: Ղրա վառ ապացույցն է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը հերոսական պայքարի շնորհիվ ձեռք է բերել իր անկախությունը, կազմավորել ժողովրդավարական պետություն, որի թիկունքին կանգնած է մարտունակ հայկական բանակը՝ ԼՂՀ պետականության և անկախության, արցախահայության բնականոն զարգացման ամենավճռորոշ երաշխավորը:

\*\*\*

ժողովածուի փաստաթղթերն ու նյութերն ընդգրկում են 1923–1988 թթ.՝ ԼՂԻՄ կազմավորման մասին որոշումից, վերջինիս Ասհմանադրության (Կանոնադրության) հրապարակումից 1924 թ. մինչև ԼՂԻՄ ժողպատգամավորների խորհուրդների 20-րդ գումարման 8-րդ նստաշրջանի՝ ԼՂԻՄ-ը Խորհրդային Աղբբեջանի կազմից դուրս հռչակելու, որպես Արցախի ինքնավար մարզ Խորհրդային Հայաստանին վերամիավորվելու մասին 1988 թ. հուլիսի 12-ի որոշումները:

ժամանակագրական կարգով ներկայացված փաստաթղթերն ու նյութերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) տարբեր ֆոնդերից, ժամանակի մանուկից, հրատարակված ժողովածուներից և գրքերից: Խորհրդային գրաքննության պայմաններում դրանք հիմնականում անհասանելի էին լայն զանգվածներին:

ժողովածուում ընդգրկված որոշ փաստաթղթեր ներկայացված են մասնակի կոճատումներով (ցույց է տրված հետևյալ նշանով [..]), կատարված են ուղղագրական և կետադրական շտկումներ, անհրաժեշտության դեպքում տրված են լրացուցիչ բացատրություններ:

Կարեն Խաչատրյան

## ПРЕДИСЛОВИЕ

Советизация Армении к концу осени 1920 года инициировала виток новых политических процессов, развернувшихся вокруг проблемы Нагорного Карабаха. На волне советизации ревком Азербайджана 30 ноября 1920 г. выступил с Декларацией, где отмечалось, что между Советским Азербайджаном и Советской Арменией более не существуют пограничных проблем, Зангезур и Нахичевань отходят к Армении, а горной части Карабаха предоставляется право на самоопределение. Декларация была опубликована 2 декабря в бакинской газете «Коммунист». Кроме того, азербайджанский ревком выступил с Обращением «Всем, всем, всем!», в котором, в частности, прокламировалось: «...С сегодняшнего дня объявляются ликвидированными споры о границах между Арменией и Азербайджаном. Нагорный Карабах, Зангезур и Нахичевань считаются частью Армянской Социалистической Республики» (по содержанию раздел, посвященный Нагорному Карабаху, здесь отличался от текста Декларации). Данное обращение-постановление было опубликовано в ереванской газете «Коммунист» 7 декабря 1920 года.

Подобное разрешение проблемы поддерживалось и кавказским бюро ЦК РКП(б). Последним было принято постановление от 3 июня 1921 года, в соответствии с 5-ым пунктом которого армянскому правительству поручалось подготовить Декларацию с указанием «о принадлежности Нагорного Карабаха Армении»<sup>19</sup>. Постановление бюро было принято единогласно, председатель ревкома Азербайджана Нариман Нариманов также проголосовал в поддержку документа.

Во исполнение постановления кавказского бюро, Совнарком Армянской ССР, образованный в мае 1921 года, принимает 12 июня того же года соответствующий декрет, подписанный председателем Совнаркома Александром Мясникяном: «На основании декларации Ревкома Социалистической Советской Республики Азербайджана и соглашения между правительствами Советских Социалистических Республик Армении и Азербайджана объявляется, что Нагорный Карабах отныне является неотъемлемой частью Социалистической

---

<sup>19</sup> НАА (Национальный Архив Армении), ф. 4033, оп. 2, д. 1187, л. 13. См. также Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992, с. 633.



Советской Республики Армении»<sup>20</sup>. Декрет на армянском, русском и турецком языках был опубликован в органах партийной печати: 19 июня в ереванской газете «Советская Армения», а 22 июня – в русскоязычной бакинской газете «Бакинский рабочий».

25 июня 1921 г. в Тифлисе было созвано первое заседание комиссии для определения границ между советскими республиками Закавказья, учрежденной 2 мая 1921 г. по решению пленума кавказского бюро ЦК РКП(б).

На заседании комиссии единственный представитель Армении Александр Бекзаян рассказал участникам о тяжелых потерях, понесенных армянским народом в последние годы, возникшей в Армении катастрофической социально-экономической ситуации, проблемах обустройства сотен тысяч беженцев, сконцентрированных в республике (для разрешения проблемы требовались дополнительные территории) и, наконец, о критических последствиях для страны подписанного в Москве русско-турецкого договора от 16 марта 1921 г. Учитывая вышеизложенное, А. Бекзаян предложил осуществить в пользу Армении «прирезки» армянских территорий соседних Азербайджана и Грузии. Однако, азербайджанский и грузинский представители комиссии категорически отвергли предложение А. Бекзаяна о территориальных изменениях, квалифицировав его как проявление национализма, а председатель комиссии, представитель Советской России Сергей Киров, всячески содействующий грузино-азербайджанскому альянсу, подчеркнул, что «в настоящее время по политическим соображениям не может быть и речи о территориальных прирезках»<sup>21</sup>.

На заседании комиссии был поднят также вопрос Нагорного Карабаха, однако данное обсуждение, по просьбе представителя Азербайджана М. Гусейнова, было отложено, под предлогом отсутствия у азербайджанского делегата необходимых полномочий и указаний из Баку.<sup>22</sup>

В сложившейся напряженной обстановке, грозящей провалом работы комиссии, С. Киров и Г. Орджоникидзе 26 июня посылают Н. Нариманову срочную телеграмму следующего содержания: "Перерыв переговоров об установлении границы с Арменией при существующей

---

<sup>20</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 636.

<sup>21</sup> Там же, с. 640–642.

<sup>22</sup> См. там же, с. 642.

обстановке в Зангезуре произведет крайне невыгодное впечатление... Просим созвать экстренно Политбюро и Совнарком и разрешить вопрос о Карабахе...». С. Киров и Г. Орджоникидзе в телеграмме изложили также свое мнение по этому вопросу: «...необходимо руководствоваться таким принципом: ни одно армянское село не должно быть присоединено к Азербайджану, равно как ни одно мусульманское село нельзя присоединять к Армении»<sup>23</sup>.

В тот же день созывается совместное заседание политбюро и оргбюро ЦК компартии Азербайджана, на котором предложение Г. Орджоникидзе и С. Кирова оценивается как в корне ошибочное. Что касается поставленного А. Бекзадяном вопроса о передаче Нагорного Карабаха Армении, то на заседании принимается следующее решение: «... полит, и оргбюро считают неприемлемым (передачу Нагорного Карабаха - ред.), ввиду безусловного экономического тяготения Нагорного Карабаха к Азербайджану, в каковом смысле и должен быть разрешен вопрос»<sup>24</sup>. 27 июня 1921 года Н. Нариманов информирует Гусейнова из Баку о принятом решении, а при принятии комиссией решения о присоединении Карабаха к Армении пригрозил отставкой Совнаркома Азербайджана. Гусейнов, в свою очередь, сообщил Нариманову, что решение Баку несомненно будет встречено крайне холодно, поскольку в беседе с ним Орджоникидзе прямо сказал, что карабахский вопрос есть вопрос чести всех Советских республик и его нужно решить окончательно и «в том виде, как я Вам передал вчера»<sup>25</sup>.

Однако, даже решительное «указание» высокопоставленных большевистских лидеров не подействовало на Н. Нариманова, Азербайджан в вопросе Нагорного Карабаха занял жесткую и бескомпромиссную позицию. Столкнувшись с подобной позицией, А. Бекзадян 27 июня отказался от дальнейшего участия в работе комиссии для определения границ между советскими республиками Закавказья, потребовав, чтобы спорные вопросы были переданы на рассмотрение кавказскому бюро ЦК РКП(б).

4 июля 1921 г. на очередном заседании пленума кавказского бюро ЦК РКП(б) (пленум работал со 2-го по 7-ое июля) принял участие Иосиф Сталин, прибывший на заседание по приглашению Орджоникидзе с Северного Кавказа (Нальчик), где он проводил свой

---

<sup>23</sup> НАА, ф. 1, оп. 1, д. 105, л. 7–10.

<sup>24</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 645.

<sup>25</sup> НАА, ф. 1, оп. 1, д. 105, л. 11.

отдых. На заседании было принято справедливое решение по проблеме Нагорного Карабаха в следующей редакции: «Нагорный Карабах включить в состав ССР Армении». Однако, против данного решения выступил Н. Нариманов, который потребовал перенести вопрос на окончательное решение в ЦК РКП(б). Пленум пошел навстречу Нариманову и изменил свое решение, приняв постановление в духе его предложения: «Ввиду того, что вопрос о Карабахе влечет серьезное разногласие, кавказское бюро ЦК РКП считает необходимым перенести его на окончательное решение в ЦК РКП»<sup>26</sup>.

Но вопрос так и не был перенесен в ЦК. На следующий день 5 июля созывается внеочередное заседание пленума кавказского бюро, на котором постановления пленума от 4 июля подвергаются пересмотру. Без прений и голосования пленум постановляет: «Исходя из необходимости национального мира между мусульманами и армянами и экономической связи Верхнего и Нижнего Карабаха, его постоянной связи с Азербайджаном, Нагорный Карабах оставить в пределах Аз. ССР, предоставив ему широкую областную автономию...»<sup>27</sup>.

Негативная роль члена ЦК РКП(б) И. Сталина в вопросе принятия злочастного постановления от 5 июля конечно велика, но, по нашему мнению, не следует ее переоценивать. Иначе, чем можно объяснить, что присутствие И. Сталина на заседании 4 июля не препятствовало принятию справедливого решения в пользу Армении. Не исключено, что после принятия решения от 4 июля азербайджанской стороне удалось заполучить поддержку Центрального Комитета РКП(б) в пользу пересмотра названного решения. В пользу версии о незаконном принятии кавбюро постановления от 5 июля свидетельствует также тот факт, что на пленуме представитель Советской Армении А. Мясникян, в отличие от Н. Нариманова, не настоял на перенесении принятия окончательного решения по Карабахскому вопросу в ЦК РКП(б), хотя и был наделен таким правом.

В своей речи на Первом съезде компартии Армении (26-29 января 1922 г.) А. Мясникян, пытаясь опровергнуть озвученные депутатами в его собственный и в адрес ЦК компартии Армянской КП(б) тяжелые обвинения и жесткую критику в том, что в вопросе Карабаха ими не была проявлена должная решительность и непреклонная требовательность в вопросе присоединения края к Советской Армении, смог

---

<sup>26</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 649–650.

<sup>27</sup> Там же.

лишь отметить: заседание пленума кавказского бюро напоминало борьбу прежних руководителей закавказских республик: «...Так, Азербайджан говорил, что если Армения потребует Карабах, то не опустим керосина»<sup>28</sup>. Однако, можно предположить, что в закулисных переговорах Нариманов в качестве решающего аргумента использовал не только азербайджанскую нефть, но и турецкий фактор.

Незаконное постановление пленума кавказского бюро ЦК РКП(б) от 5 июля нарушило один из основополагающих принципов международного права - принцип права наций на самоопределение, попирая права армянского населения Нагорного Карабаха, составляющего преобладающее большинство края (94%), и проигнорировало интересы Советской Армении.

Выражая волю армянского народа, руководство Советской Армении крипически отнеслось к постановлению кавказского бюро ЦК РКП(б) от 5 июля. 16 июля ЦК Армянской КП(б) Армении признал постановление неудовлетворительным и целиком ошибочным<sup>29</sup>.

После постановления пленума кавказского бюро от 5 июля о вхождении Нагорного Карабаха в состав Советского Азербайджана, азербайджанское руководство не жалело сил и средств, чтобы получить согласие армян Арцаха на прямое административное подчинение Азербайджану. Чтобы достигнуть этой цели азербайджанские власти развернули в различных районах Нагорного Карабаха широкую пропагандистскую кампанию, но повсюду наталкивались на «холодное противодействие». В одной из секретных докладных записок направленной из Карабаха в Ереван, с информацией о работе организованного усилиями Баку 28 июля 1921 г. в Степанакерте съезда представителей исполнительных комитетов района, отмечалось: «Положение отчаянное, просим предпринять действия, направленные на присоединение Нагорного Карабаха к Советской Армении»<sup>30</sup>. Таково было единодушное пожелание всего армянского населения Арцаха, но никто с ним не считался.

Тем не менее, благодаря твердым и последовательным действиям армян Арцаха и руководства Советской Армении, власти Советского Азербайджана вынуждены были после двух лет противодействия отступить и предоставить Нагорному Карабаху по Декларации от 7

---

<sup>28</sup> НАА, ф. 1, оп. 2, д. 2, л. 13, 23.

<sup>29</sup> См. там же, оп. 1, д. 39, л. 18.

<sup>30</sup> НАА, ф. 113, оп. 3, д. 7, л. 41-42.

июля 1923 г. статус автономной области<sup>31</sup>. Азербайджанская сторона, вынуждено пойдя на этот шаг, готовила, в то же время, для армян Арцаха новую ловушку. Так, границы области впоследствии были «уточнены» таким образом, что отдельные части Нагорного Карабаха (Гюлистанское меликство, большая часть Ханларского района, некоторые приграничные территории, в том числе и Лачинский (Кашагагский) участок) были отрезаны от области и перешли под непосредственное подчинение Азербайджана. Все эти манипуляции проводились для искусственного изолирования Арцаха от исторической Родины.

В 1927 г. 10 армянонаселенных пунктов Гетабекского района были переданы Шамхорскому району. Эти и иные подобные административные изменения ставили своей целью не допустить возможности преобладания армянского населения в том или ином районе.

Так или иначе, но именно благодаря приобретенному статусу автономной области армяне Арцаха смогли противостоять в советские годы провокациям Азербайджана и проводимой им политике национальной дискриминации. Арцах был и остался армянонаселенным.

Проблема объединения Нагорно-Карабахской автономной области с Советской Арменией стала предметом озабоченности всех армян, в том числе и руководства АрмССР, и весь советский период находилась в сфере их особого внимания. В условиях сталинской деспотии, когда всякое проявление инакомыслия жестоко подавлялось, руководство АрмССР, поддерживая армян Арцаха, пыгалось поставить перед центральными властями вопрос объединения НКАО с Арменией, но безрезультатно.

Весной 1945 г., на заключительном этапе Второй мировой войны, руководство Советской Армении, пойдя навстречу призывам различных организаций армянской Диаспоры, поставило перед центральными властями СССР вопрос объединения с Советской Арменией армянских территорий, насильственно отторгнутых Турцией (Карс, Ардаган, Сурмалу). Необходимость справедливого решения этой проблемы обуславливалась не только восстановлением исторической справедливости, но и потребностью организации процесса репатриации армян в Армению. В связи с этим, руководство Армении в очередной раз

---

<sup>31</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 669–670.

подняло проблему присоединения Нагорного Карабаха к Советской Армении. 11 ноября 1945 г. первый секретарь компартии Армении Григор Арутюнян лично обратился к И. Сталину. Справедливо отметив, что необходимость объединения Нагорного Карабаха к Советской Армении проистекает не только с историко-культурной, экономической и политической точки зрения, но и из единодушного стремления к воссоединению всего армянского населения Карабаха<sup>32</sup>. Однако, соответствующие дискуссии по поставленной Г. Арутюняном проблеме так и не были проведены и вновь сняты с повестки дня.

Два года спустя, осенью 1947 г., Г. Арутюнян вновь инициирует карабахский вопрос, связав его на этот раз с необходимостью разрешения срочной проблемы по размещению десятков тысяч армяно-репатриантов, возвращающихся на Родину. Григор Арутюнян вместе с секретарем ЦК компартии Армении Заветом Григоряном встречается в Москве с И. Сталиным, серьезно и убедительно аргументируя необходимость положительного разрешения этого вопроса. Благодаря упорству армянского руководства вопрос в этот раз становится предметом обсуждения, но вследствие хитроумного контрпредложения Сталина и азербайджанского руководства проблема переводится в другую плоскость. Идя навстречу «совместно представленным» просьбам руководства Армении и Азербайджана, Совет Министров СССР своими постановлениями от 23 декабря 1947 года и от 10 марта 1948 г. принимает решение по проведению переселения азербайджанского населения из Армянской ССР в Азербайджанскую ССР<sup>33</sup>.

В 1949 г. руководство Советской Армении в очередной раз делает попытку обсуждения карабахской проблемы. Г. Арутюнян вновь обращается к И. Сталину. Однако, усилиями Л. Берии и М. Багирова подобное обсуждение было объявлено излишним и нецелесообразным.

Таким образом, вследствие развернутой турецко-азербайджанским альянсом антиармянской деятельности, проблема возвращения армянских территорий Советской Армении на данном историческом периоде так и не получила своего справедливого разрешения.

В 1960-ые годы вновь сложились благоприятные условия для публичного обсуждения и постановки перед центральными властями

---

<sup>32</sup> НАА, ф. 1, оп. 034, д. 27, л. 74.

<sup>33</sup> См. подробнее Վրդաբյան Ա., Հայաստանը Ատալիկից մինչև Խրուշչով, Երևան, 2001, էջ 83–87 (Вирабян А., Армения от Сталина до Хрущева, Ереван, 2001, с. 83–87).

СССР проблемы Арцаха, при этом советские армяне переживали в тот период процесс национального пробуждения. Именно тогда армяне Арцаха с новой силой развернули массовое движение с требованиями присоединения Нагорного Карабаха к Советской Армении. В 1963 г. первому секретарю ЦК КПСС Никите Хрущеву было послано из НКАО письмо-протест, под которым подписались порядка 2500 армян из Карабаха и прилегающих армянских районов. Подписанты, раскрыв предысторию проблемы, положение армян Арцаха в составе Азербайджана, политику национальной дискриминации, осуществляемой азербайджанскими центральными властями, потребовали «незамедлительно решить вопрос воссоединения Нагорного Карабаха и всех прилегающих армянских районов с Армянской ССР или же включения их в состав РСФСР».

Советская Армения также отреагировала на требования армян Арцаха. В 1965 г., во время первых в истории СССР беспрецедентных многолюдных митингов в день 50-летней трагичной годовщины Геноцида армян, 24 апреля, было выдвинуто также требование о введении Карабаха в состав Советской Армении.

В 1965–1966 гг. в Верховный Совет, Совет Министров СССР, ЦК КПСС направлялся поток писем с многими тысячами подписей жителей Арцаха, Еревана и других районов Армении, с требованиями решить Карабахскую проблему в пользу армянского народа. Особо следует выделить письма интеллигенции, деятелей науки и культуры из Нагорного Карабаха и Советской Армении, адресованные в Москву. В августе 1966 г. генеральному секретарю ЦК КПСС Леониду Брежневу было направлено письмо, которое подписали порядка 2000 представителей армянской интеллигенции – М. Сарьян, П. Севак, А. Сагьян, Е. Кочар и многие другие, где, в частности, отмечалось: «Карабах - это Армения территориально и по национальному составу, это Армения - по укладу, духовному складу и быту. История Карабаха - это история Армении, армянским является язык, искусство и литература Карабаха. А так как существует Армянская ССР, нецелесообразно ее нераздельную часть искусственно отделять от Советской Армении»<sup>34</sup>.

Руководство Армении также не осталось безучастным. Как отклик на призывы армянского народа, 30 сентября 1966 года в Москву в ЦК КПСС было направлено пространное и содержательное письмо, подписанное первым секретарем ЦК КП Армении Антоном Кочияняном и

---

<sup>34</sup> НАА, ф. 1, оп. 46, д. 65 б, л. 1–2.

председателем Совета Министров АрмССР Бадалом Мурадяном, в котором руководители Армении, опираясь на неоспоримые исторические факты, аргументировали «необходимость» включения Нагорного Карабаха (также как и Нахичевани) в Советскую Армению. «По нашему мнению, было бы целесообразно рассмотреть и решить положительно вопрос передачи Нахичевани и Нагорного Карабаха Армянской ССР... Однако, если возвращение Нахичевани Армянской ССР на современном этапе будет сопряжено с известными сложностями, то возвращение Нагорного Карабаха Армянской ССР не связано с какими-либо трудностями и может быть осуществлено безболезненно.

Опасения возможной нежелательной реакции лишены основания, так как вопрос ставится не об отторжении какой-либо части территории Азербайджанской ССР, а слиянии автономной национальной области с союзной республикой, коренное население в которых однородно - армянское»<sup>35</sup>.

Таким образом, в постсталинские годы глас армянского народа и руководства Советской Армении по проблеме Арцаха стал более решительным, и не случайно, что секретариат ЦК КПСС поручил в 1966 году руководителям Советской Армении и Азербайджана обсудить возможность присоединения НКАО к Советской Армении и представить свои предложения в ЦК КПСС. Однако, по причине проазербайджанской позиции, занятой советскими высокопоставленными руководителями, справедливое разрешение проблемы вновь не было принято<sup>36</sup>.

Из года в год продолжающаяся и ужесточающаяся антиармянская политика центральных властей Азербайджана вызвала в 1970-ые годы у армянской общественности новый всплеск негодования, приведя к росту национального самосознания.

В 1976–1977 годах развернулись широкие обсуждения вокруг принятия новой Конституции СССР. Руководство Советской Армении и многочисленные представители армянской общественности вновь подняли Карабахскую проблему перед центральными властями СССР. Поток заявлений, меморандумов, требований, справочных материалов и иных документов разного уровня хлынул в Москву.

---

<sup>35</sup> См. там же, д. 65 а, л. 1–9.

<sup>36</sup> См. Перестройка и национальные отношения, Ереван, 1989, с. 40.



Казалось, что Москва готова была уступить и 23 ноября 1977 года, идя навстречу требованиям армянского народа, в протокол заседания Президиума Совета Министров СССР, была внесена следующая формулировка: «Вследствие ряда исторических обстоятельств... Нагорный Карабах искусственно был присоединен к Азербайджану. При этом не были учтены историческое прошлое области, ее национальный состав, желания народа и экономические интересы... Надо присоединить Нагорный Карабах («Арцах» – по-армянски) к Армянской ССР. Тогда все станет на свои законные места». Но в очередной раз, усилиями ряда влиятельных советских и азербайджанских руководящих работников, Политбюро ЦК КПСС отклонило предложение и вывело вопрос из повестки дня.

В последние десятилетия советского периода положение армян Арцаха так и не претерпело существенных изменений, более того, оно еще более ухудшилось. Полностью были разрушены культурные и социально-экономические связи края с Советской Арменией. Постоянно сокращалась численность армянского населения НКАО: если в 1920 г. армянское население края составляло 94%, то в 1979 г. - 75%. В противоположность этому, росла численность азербайджанского населения. Таким образом, весь советский период политика Азербайджана была направлена на азербайджанизацию области. Однако, армянское население Карабаха в течение 70 лет противостояло дискриминации и вело постоянную борьбу, направленную на предотвращение территориальных и человеческих потерь, преодоление материальных лишений, против попрания прав человека.

Развернувшиеся с весны 1985 г. в СССР демократические процессы вселили новые надежды на справедливое разрешение карабахской проблемы. Назревал решающий этап всенародной национально-освободительной борьбы армянского народа, завершившийся исторической победой. Ярким ее свидетельством является современная Нагорно-Карабахская Республика, которая благодаря героической борьбе армянского народа достигла независимости, сформировала демократическое государство, на защите которой стоит боеспособная армянская армия – надежный гарант государственности и независимости НКР, последовательного развития народа Арцаха.

\*\*\*

Документы и материалы сборника охватывают 1923–1988 гг.: с декрета об образовании НКАО и публикации ее Конституции (Положения) в 1924 г. до решения Восьмой сессии Совета народных депутатов НКАО 20-го созыва от 12 июля 1988 г. – о провозглашении выхода НКАО из состава Азербайджанской ССР и воссоединении с Советской Арменией, как Арцахская автономная область.

Представленные в хронологической последовательности документы и материалы выбраны из различных фондов Национального архива Армении (НАА), периодической печати исследуемого периода, опубликованных сборников и книг. В условиях советской цензуры опубликованные материалы были недоступны для широких масс общественности.

Некоторые документы представлены с сокращениями (показано следующим знаком [...]), с исправленной орфографией и пунктуацией, с необходимыми примечаниями.

**Карен Хачатрян**

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ  
ДОКУМЕНТЫ И МАТЕРИАЛЫ

№ 1

**ВЫПИСКА ИЗ ДЕКРЕТА АЗ ЦИК ОБ ОБРАЗОВАНИИ  
АВТОНОМНОЙ ОБЛАСТИ НАГОРНОГО КАРАБАХА**

7 июля 1923 г.

[...] Аз ЦИК Советов постановляет.

1. Образовать из армянской части Нагорного Карабаха автономную область, как составную часть АССР, с центром в местечке Ханкенды.
2. Органами управления автономной области являются Областной Исполнительный комитет и местные Советы. [...]
5. Для выработки положения области и фактической передачи административных единиц в автономную область Карабаха, а также определения границ автономной области создать смешанную комиссию из представителей: Нагорного Карабаха, Курдистана и центральной власти АзССР, коей комиссии вменить в обязанность закончить свою работу к 15-му августа с.г.

Зам. пред. Аз Цик *М.Б. Касумов*

*Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992, с. 669–670, („Бакинский рабочий“, 9 июля 1923 г.).*

№ 2

**ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА ЗАСЕДАНИЯ  
ПРЕЗИДИУМА ЦК АКП (б) ОБ УТВЕРЖДЕНИИ КОНСТИТУЦИИ  
АВТОНОМНОЙ ОБЛАСТИ НАГОРНОГО КАРАБАХА**

3 июля 1924 г.

*Слушали:*

1. Проект Конституции Автономной Области Нагорного Карабаха. (гг. Багиров, Каракозов и Теймур Алиев).

## **Ստանովիլի**

Проект Конституции одобрить. Предложить Президиуму АзЦИК-а срочно провести проект в советском порядке и опубликовать Конституцию на поркском, армянском и русском языках.

Секретарь ЦК АКП *С.М. Киров*

*К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918–1925: Документы и материалы. Баку, 1989, с. 248–249, (П.А.А.Ф.И.М.Л., ф. 1, оп. 74, д. 137, л. 98).*

№ 3

### **ԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ\***

#### **ԻՆՔՆԱԿԱՐ ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴՐԻ ՇՐՋԱՆԻ**

##### **ԸՆԴԻՏԱՆՈՒՐ ԻԽՆՈՒՆՔՆԵՐ**

1. Ինքնավար Լեննային Ղարաքադը կազմում է Ադրբեջանի ՍԽՐ բաղկացուցիչ մասը:
2. Բոլոր գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դադարեցնելու մասին Ինքնավար Լեննային Ղարաքադում կատարվում է մայրենի լեզվով:
3. Ինքնավար Լեննային Ղարաքադը մասնակցում է Ադրբեջանի ՍԽՐ հանրապետական բոլոր մարմիններում համեմատական չափի սկզբունքով:

---

\* Սահմանադրության տեքստը հայերեն և թուրքերեն լեզուներով տպագրվել է Բաքվի «Կոմունիստ» օրաթերթի 1924 թ. հունիսի 6-ի թիվ 145-ում, ռուսերեն լեզվով՝ ռուսալեզու «Բակինսկի ռաբոչի» թերթի 1924 թ. նոյեմբերի 26-ի թիվ 269-ում: Սահմանադրությունը գործել է եական դեր է խաղացել մինչև 1929 թվականը, երբ Ադրբեջանի իշխանությունների կողմից այն չեղյալ համարվեց:

## Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը (տերիտորիան)

Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մեջ մտնում է այն տարածությունը, որը բռնված է հետևյալ գավառների քաղաքներով և գյուղերով:

Շուշու գավառից՝ Շուշի քաղաքը և Ստեփանակերտը, գյուղերը. Կարաթետուկ, Ուլուբաբ, Կայաբաշի, Սարի-Քեշիշ, Կիշլաղ-Քենդ, Շալվա, Սեյիտ-Քեզլի, Ղաշբուլաղ, Մեհտիքենդ, Բարուրա, Սունժինսկոյի, Խնձորիստան, Իսմայիլ-Քեզլի, Մալիքեզլի, Խալիփալի, Խոջալի, Ղուշնիլար, Քեորֆա-Աֆուսլի, Ջարուսլի, Նախիջանսկ, Փիրջանալ, Ղահրազ, Քեսթուկ-Աշդարա, Աղբուլաղ, Կարազաբուն, Լիսագորսկ, Կերկիժան, Ջամիլի, Բալուջա, Ղայբալիքենդ, Փախլիզ, Խնածափ, Մեհտի-Քենդ, Վերին-Սզնիք, Ղանուրչիլար, Ներքին Սզնիք, Սղնափ, Չանափաչի, Ղարաբուլաղ, Ղուշի-Բաբա, Սարուշեն, Խաչմաչ, Տուբնակալ, Հարալի, Պիրում-Քենդ, Մխիթարա-Քենդ, Ղադրաղան, Հարով, Ղաշուքենդ, Շուշե-Քենդ, Ղաշալթի, Հյունոտ, Քեշիշ-Քենդ, Ղաշալթի-Խոզաքիր, Քենդխուրդ, Քարահունջ, Սուշկասառ, Ղավախան, Մաշադի-Քենդ, Կուչում-Քենդ, Աղ-Քենդ, Աշան, Հաջի, Ենգի-Քենդ, Կարա-Քենդ, Եմիչճա, Ջամեթթ, Կրդարժի, Միրի-Քենդ, Կարադուլլի, Խոնաշեն, Բախրումլի, Խոջալու, Սուգան, Աբդուլլար, Կոտլեարովկա, Կուրոպասուկինո, Նիկոլանսկա, Սկոբլևսկա, Սոս, Մխտորաշեն, Խերխան, Ծովատեղ, Հերիեր, Մավաս, Ամարաս, Բիլբիլակ, Աղբուլաղ, Ուզում-Քենդ, Ղոպխտիկ, Թաղլար, Ազդի, Ջարդանաշեն, Շեխեր, Ջաղավուզ, Թաղավարդ, Ղուզե-ճարտար, Գիշի, Գյունե-ճարտար, Իսպահանջուղ, Յենդիջա, Ղաշբաղի, Խանաբաղ նոր, Խանաբաղ հին, Քեշիշքենդ, Խրամորթ, Վերին Յելչիբաղ, Ներքին Յելչիբաղ, Տող, Մամեդաձոր, Սուլավարդին, Շեխեր, Հսկակու, Թաղուտ, Սուսալլիս, Կովչատչի, Տուսի, Հողեր, Ծակոռի, Ջրակուս:

Ջիվանշիրի գավառից՝ գյուղեր. Հասանրիջ, Ումուղլի, Կիրանլու, Իմարար, Կարավենդ, Չախար, Ղուզու, (Բաղդուս), Կրզըլ-Կայա, Յայջա (Տրիգասո), Ջարդախաչ, Չարեքտար, Բաղու-Կայա, Բալլու-Կայա, Ախմախի, Բագարքենդ, Քոլատակ, Ղաղմանլու, Ղովչանլու, Չորմանլու, Վանք, Տրումբուն, Հոռաթաղ, Շահմասուր, Ներիշտար, Քիչիկ-Կարաբեզ, Ուլու-Կարաբեզ, Կուսասառ, Աղլարա-Մարդակերտ, Ղամիրլու, Հոռաթաղ, Բուրուջ, Յարրմջա, Մարաղա, Մարգուշեվան, Բրուջ, Լեոն-Արխ (Մարով), Մենգրեվսկ, Ջարդախուլու, Լյուլասագ, Օրլով-Ղենիսովկա, Ղազանչի, Ջան-

յաթաք, Գյուլյաթաղ Արխավանդ, Ղամիլի, Թալիշ, Տուրուս, Ղաստագիր, Տոնաշեն, Մադաղիս, Ղամիրլար, Վերին-Չայլու, Ներքին-Չայլու:

Կարյագինի գավառից՝ գյուղեր. Հաջիբենդ, Առաքել, Բանագուր, Բինյաթլի, Ղուլանլար, Իսխալան, Ղաշբաշի, Ծամծոր, Կեյնաառ, Մյուլքիդարա, Իծաբերդ, Վանք, Հարրուք, Կանրակյուն, Կոչբեկ, Ղուշչիլար, Մելիքջանլու, Նորաշեն, Տայք, Թաղատեր, Տոր, Շաղախ, Վորդնաշատ, Աղբուլաղ Ախուլլու, Քյուքուշլու, Թուլատան, Ղուրուզի, Կոգուլլու, Խարմանջուղ, Իղիլեցիք:

Ղուբաթլի գավառից՝ Ղարաղչաղն իր գաղութներով:

### Կենտրոնական իշխանության կազմակերպումը

1. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի իշխանությունը նրա ընդգրկած ամբողջ տարածության վրա պատկանում է Խորհուրդների Համագումարին, Կենտրոնական գործադիր կոմիտեին և տեղական Խորհուրդներին:

2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Խորհուրդների համագումարը, որը հրավիրվում է ոչ պակաս քան տարին մի անգամ:

3. Մեկ համագումարից մինչև մյուսի հրավիրելու ժամանակամիջոցը լիակատար իշխանությունն ամբողջովին անցնում է Խորհուրդների Կենտրոնական գործադիր կոմիտեին:

4. Խորհուրդների համագումարների և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումները կյանքի մեջ անցկացնելու համար, Կենտրոնական գործադիր կոմիտեն ընտրում է ժողովրդական կոմիսարների Խորհուրդ, որը կենտրոնացնում է իր մեջ շրջանի կառավարության գործը, ստանձնելով Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության իրավունքները:

*Օսմոթություն.* Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահը միաժամանակ հանդիսանում է և ժողովրդի նախագահ:

5. Ինքնավար շրջանի կառավարության առանձին բաժինները վարելու համար սահմանվում են ժողովրդական կոմիսարիատներ՝ ա. Ներքին գործերի՝ սոցիալական ապահովության և կոմունալ տնտեսության ենթաբաժիններով,

բ. Արդարադատության,

գ. Լուսավորության,

դ. Առողջապահության,

- ե. Երկրագործության,
- զ. Կենսորոնական վիճակագրական վարչության,
- է. Ժողովրդական տնտեսության խորհուրդ:

6. Շրջանի գինվորական գործերը վարում է Ջինվորական կոմիսարիատը՝ կազմակերպված ընդհանուր հիմունքներով:

Շրջանի Ջինվորական կոմիսար նշանակվում է Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողկոմխորհի համաձայնությամբ Ադր. ՍԽՐ Ջինվորական կոմիսարիատի կողմից:

7. Աշխատանքի, ֆինանսների և բանվորագյուղացիական տեսչության կոմիսարիատների լիազորներ նշանակվում են Ադր. ՍԽՐ համապատասխան կոմիսարիատների կամ լիազորների կողմից՝ Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողկոմխորհի համաձայնությամբ:

8. Կռիվը հակահեղափոխության դեմ մնում է Ադր. ՍԽՐ Չեկայի մարմինների իրավասության ներքո, որը կազմակերպվում է տեղում Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողկոմխորհի համաձայնությամբ:

9. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Ներքին գործերի, Արդարադատության, Լուսավորության, Առողջապահության, Երկրագործության կոմիսարիատներն իրենց բոլոր գործառնությունների մեջ ինքնավար են և պատասխանատու Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենսորոնական գործադիր կոմիտեին:

10. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության անմիջական ղեկավարությունը պատկանում է Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության խորհրդին:

11. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության խորհուրդը իր գործունեության մեջ ղեկավարվում է իր կազմած արտադրական ծրագրով, որը ներկայացնում է Ադր. ՍԽՐ Գերագույն տնտեսական խորհրդին՝ ընդհանուր պետական տնտեսության ծրագրի հետ համաձայնեցնելու համար:

## Իշխանության կազմակերպումը տեղերում

Իշխանության մարմիններ տեղերում համարվում են.

1. Բանվորների, գյուղացիների և կարմիր գինվորների ներկայացուցիչների խորհուրդը (գյուղական և քաղաքային) և նրանցից ընտրված գործադիր կոմիտեները:



2. Գավառական և գյուղական համագումարները և նրանցից ընտրված գործադիր կոմիտեներն ու նրանց նախագահությունները:

3. Խորհրդային իշխանության տեղական մարմինների ընտրության ժամանակամիջոցն ու կարգը, ներկայացուցիչների թիվը և այդ մարմինների ներքին կազմակերպության ընդհանուր կանոնները, վարչական խնդիրների և իշխանության սահմանագծունը նրանց միջև, ինչպես և սահմանագծունն իրավական խնդիրների տեղական մարմինների և կենտրոնականի միջև՝ սահմանվում են Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական գործադիր կոմիտեից և հաստատվում Ադր. ՄԽՐ Կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից:

*«Կոմունիստ», Բարու, № 145, 6 հուլիսի, 1924 թ.:*

№ 3<sup>1</sup>

## ПОЛОЖЕНИЕ ОБ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ НАГОРНОГО КАРАБАХА

### Общие положения

1. Автономная Область Нагорного Карабаха является составной частью АССР.
2. Все делопроизводство, суд и обучение в школах Автономной Области Нагорного Карабаха ведется на родном языке.
3. Автономная Область Нагорного Карабаха участвует в республиканских органах Азербайджана по принципу пропорциональности.

### О территории Автономной Области Нагорного Карабаха

В состав Автономной Области Нагорного Карабаха входит территория, занимаемая городами и селениями из следующих уездов.

Из Шушинского уезда – гор. Шуша и Степанакерт (Ханкенды); селения: Каракетгук, Улубаб, Каябаши, Сары-Кепиш, Кишлаг-Кенд, Шальва, Сеид-Бекли, Дашбулаг, Мехти-Кенд, Бадара, Сундженское, Хинзиристан, Исмаил-Бекли, Мали-Бекли, Халифали, Ходжалы, Кушиллар, Керпа-Афгалы, Зарысль, Нахичеваник, Пирджамал, Даграс, Кяпук-Агдар, Агбулаг, Аранзамин, Лысагорск, Киркиджан,

Джамиллы, Балуджа, Каубаликенд, Пахлоль, Ханадзах, Мадагкенд, Сизник Верхний, Демурчиляр, Сизник Нижний, Сигнах, Чанахчи, Карабулаг, Купи-Баба, Сарушен, Хачмас, Тукнакал, Гарали, Пирумкенд, Мхьгаркенд, Даг-Даган, Гаров, Дашкенд, Шушиканд, Дашалпы, Гюног, Кешипкенд, Дашалпы-Хозабюр, Кендхурт, Караундж, Мулкапаг-Гавахан, Машпикенд, Кузумкенд, Ачикенд, Гепан, Гаши, Еникенд, Каракенд, Емица, Джамиаг, Кагарза, Мирикенд, Карадаглы, Хонашен, Бахрамлы, Ходжаллы, Муганлу, Абдаллар, Коляровка, Куропаткино, Николаевка, Скобелевка, Сус, Сухторашен, Хирхан, Завадх, Гер-Гер, Мовас, Амарас, Биль-Билияг, Агбулаг, Кузумкенд, Трахтик, Таг, Азох, Зарданашен, Шехер, Джагауз, Тагаверт, Гюсей-Чертаз, Гепан, Гюней-Чертаз, Испаганджуг, Ениджа, Дашбаши, Ханабаг-новый, Ханабаг-старый, Кешипкенд, Хорамурт, Кличбаг верхний, Кличбаг нижний, Туг, Мамедадзор, Сулакагин, Шихинлы, Акаку, Агагуг, Сусалх, Ковшаллы, Домы, Гога, Цакоры, Чиракуз.

Из Джеванширского уезда - селения: Гасагриз, Умуллы, Керанлу, Имарат-Геравенд, Усаджик (Чафар), Козлу (Багдас), Кизиль-Кая, Яйджа (Тюгаг), Зардахач, Чаректар, Баклу-Кая, Ахмахлы, Базаракенд, Колагак, Дагманлу, Давпанлу, Чорманлу, Ванк, Тромбон, Орагаг, Шахмасур, Нарипшар, Кичик-Карабек, Улу-Карабек, Касапет, Абгара-Мардакенд, Даширлю, Арагаг, Бурудж, Ярымджа, Маргаллы, Маргушевхан, Бруч, Левон-Арх, Левон-Арх (Саров), Мингрельское, Чардахлу, Лютасаз, Орлово-Денисовка, Казанчи, Джан-Ягаг, Гюль-Ягаг, Сорхавенд, Мехмана, Дамирлы, Тальш, Турус, Дастигир, Тонашен, Мадагиз, Демирляр, Верхнее Чайлу, Нижнее Чайлу.

Из Карягинского уезда - селения: Агджакенд, Аракюл, Паназур, Биниаллы, Даланлар, Ожелан, Дашбашир, Замзур, Кейна-Таг, Мюльки-Дара, Хозаборт, Ванг, Гадрут, Комракюч, Кочбек, Купшиляр, Мелик-Джантур, Норашен, Таанг, Тагасыр, Сур, Шагах, Вартапег, Агбулаг, Ахулу-Кюглу, Булутан, Дудукчи, Коллу, Хирманджук, Эдилли.

Из Кубалинского уезда - селение Каладараси с выселками.

### **Организация центральной власти**

Власть в Автономной Области Нагорного Карабаха на занимаемой территории принадлежит Съезду Советов, Центральному Исполнительному Комитету и местным Советам.

Высшей властью Автономной Области Нагорного Карабаха является Съезд Советов, который созывается не реже одного раза в год.

В период между двумя Съездами вся полнота власти переходит к Центральному Исполнительному Комитету Советов.

Для проведения в жизнь постановлений Съезда Советов и Центрального Исполнительного Комитета Автономной Области Нагорного Карабаха ЦИК избирает Совнарком, который сосредоточивая у себя все дело управления Областью, наделяется правами президиума ЦИК-а.

*Примечание:* Председатель ЦИК-а является вместе с тем и председателем Совнаркома.

Для заведывания отдельными отраслями управления Областью, учреждаются Народные Комиссариаты:

1. Внутренних дел, с подразделом Собеза и Коммунального хозяйства.
2. Юстиции.
3. Просвещения.
4. Здравоохранения.
5. Земледелия.
6. Ц. С. У.
7. С. Н. Х.

Военными делами Области ведет Военный Комиссариат, организуемый на общем основании.

Военный Комиссар Области назначается Военным Комиссаром АССР, по соглашению с Совнаркомом АОНК.

Уполномоченные Народных Комиссаров Труда, Финансов и Рабоче-Крестьянской Инспекции, назначаются соответствующими Народными Комиссариатами или Уполномоченными АССР, по соглашению с Совнаркомом АОНК.

Борьба с контрреволюцией остается в ведении органов ЧК АССР, организуемых последней по соглашению с СНК Нагорного Карабаха.

Народные Комиссариаты АОНК: Внутренних дел, Юстиции, Просвещения, Здравоохранения, Земледелия автономны в своих действиях и ответственны перед ЦИК-ом АОНК.

Непосредственное руководство промышленностью АОНК принадлежит Совету Народного Хозяйства АОНК.

Совнархоз АОНК в своей деятельности руководствуется произведенными планами, представляемыми им в Высший Совет Народного Хозяйства АССР, для согласования с общегосударственным хозяйственным планом.

## Организация власти на местах

Органами власти на местах являются:

1. Советы рабочих, крестьянских и красноармейских депутатов (городских и сельских) и выбираемые ими Исполнительные Комитеты.

2. Съезды Советов - районные (уездные) и сельские, а также избираемые ими Исполнительные Комитеты и их Президиумы.

3. Сроки и порядок избрания местных органов Советской власти, норма представительства и общее положение относительно внутренней организации этих органов по разграничению предметов ведомства и власти между ними, равно как разграничение таковых между ними и Центральными органами Области устанавливается ЦИК-ом АОНК и утверждается АзЦИК-ом.

*„Бакинский рабочий“, № 269, Баку, 26 ноября, 1924 г.*

№ 4

В ЦК ВКП (б)

Ноябрь, 1945 г.

Иосиф Виссарионович!

Нагорно-Карабахская автономная область, примыкающая к территории Армении, с 1923 г. входит в состав Азербайджанской ССР. Население этой области является в основном армянским. Из 153 тыс. населения - 137 тыс. является армянским.

Сельское хозяйство Нагорного Карабаха является аналогичным с горной частью Армении. Вхождение Нагорного Карабаха в состав Армении намного способствовало бы развитию его, улучшилось бы руководство хозяйством. Массово-культурное и политическое обслуживание населения на родном языке усилилось бы при руководстве со стороны республиканских органов Армении.

Вхождение Нагорно-Карабахской области в Армению дало бы возможность местным кадрам продолжать высшее образование на родном языке в вузах Армении. С другой стороны, Армянская ССР могла бы получать национальные кадры из Нагорно-Карабахской области,

которые отличаются своей деловитостью и в настоящее время, естественно, не могут быть полностью использованы в Азербайджане.

Исходя из этого и желания населения Нагорного Карабаха, Центральный Комитет и Совнарком Армении вносят на рассмотрение ЦК ВКП (б) и Союзного Правительства вопрос о включении в состав Армянской ССР Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР в качестве Карабахской области.

При положительном решении этого вопроса ЦК и Совнарком Армении войдут в Правительство с предложением о восстановлении бывшего центра Карабаха города Шуши, разрушенного перед установлением Советской власти.

Секретарь ЦК КП (б) Армении *Арутюнов Гр.*

*НАА, ф. 1, ол. 034, д. 27, л. 74.*

№ 5

## ՍՈՍՍ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՒԵՏԻ ՆԱԽԱԳԱՐ ԸՆԿ. Ն.Ս. ԽՐՈՒՇՉՈՒԿԻՆ\*

Թանկագին ընկեր Խրուշչով.

Մարդիկ բոլոր տեսակի կենդանիներից տարբերվում են իրենց հատուկ առանձնահատկություններով, որից վճռականը հանդիսանում է խելացիությունը, որի ղեկավարությամբ կարողանում է գերիշխել ամբողջ աշխարհի վրա: Իսկ գիտակից և խելոք մարդ լինելու համար պահանջվում է կուլտուր-լուսավորչական հիմնարկների լայն ցանց, նրանց ուղեղում գիտելիքներ պատվաստելու համար...

Բայց ի՞նչ է կատարվում մեզ մոտ Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզում:

Չնայած մարզում որոշ պայմաններ ստեղծված են, Բարսիլից անընդհատ ճաղիտ հաղորդումներ է տրվում, բայց քանի որ ազգաբնակչության 90 %-ից ավելին հայեր են, արդյոք աղյուսակներ են լեզվով այդ հաղորդումները որևէ ներգործուն ազդեցություն են թողնում, թե ժամանակ անցկացնելու և ժողովրդին թնրեցնելու

---

\* Նաևակի բովանդակությունից երևում է, որ այն գրվել է 1962 թ.:

Նախատակով է, որ հնարավորություն չեն տալիս Երևանից ռադիոհաղորդումները լսելու:

Ինչպես վերը նշվեց, մարզը հիմնականում հայկական է, որը Սովետական Հայաստանից ընդամենը 6–7 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում, միայն ադրբեջանական մի փոքր շրջանով է անջատված, որը ևս նախկինում եղել է հայկական տարածք (դա կարող են ապացուցել նշված շրջանում պահպանված հնությունները), սակայն նախկինում Թուրքիայի աջակցությամբ մուսավաթական Ադրբեջանը բռնազրավել և բնակեցրել է իրենց ազգակիցներով: Ղարաբաղի ժողովուրդը լավ գիտե, որ մարզի միացումը Ադրբեջանական ռեսպուբլիկային հանդիսանում է ազգային ինքնորոշման խախտման կոպիտ քայլ, որն առիթ է հանդիսացել այնտեղի ազգաբնակչության անընդհատ արտահոսքի և էկոնոմիկայի քայքայմանը (փաստերը կարող եք ստուգել տեղում):

Տեղի ազգաբնակչությունը լավ հասկանալով իրերի դրությունը մի շարք անգամ հարց է բարձրացրել մարզը միացնելու Հայկական ռեսպուբլիկային, բայց այդ օրինակոր պահանջը միշտ էլ մնացել է անհետևանք: Մարզային ղեկավարները չեն շահագործված, որովհետև գիտեն, որ Հայաստանին միացնելուց, որպես միատարր ազգ, ավտոնոմ իրավունքները կվերացրվի և իրենք կզրկվեն իրենց ներկայիս զբաղեցրած փառահեղ պաշտոններից: Իսկ Ադրբեջանի ռեսպուբլիկայի ղեկավարներն այդ հարցում ունեն իրենց նախնիներից ժառանգած նուրբ քաղաքակրթությունը, ինչպես սառը պատերազմի ձև: Ջանում են աննկատելիորեն բոլոր հայերին «փախցնել» և դատարկ տարածությունում բնակեցնել իրենց ազգակիցներին:

Ընկեր Խրուշչով, բոլորը հնարավոր չէ գրելու, մեր երիտասարդության ուսման ծարավը մայրենի լեզվով հագեցվում է Հայաստանում, Ղարաբաղի ժողովրդի կուլտուր-լուսավորչական աշխատանքի սպասարկումը մայրենի լեզվով ևս պետք է ստացվի Հայաստանից, բայց վերջինս իրավունք չունի, քանի որ վարչական ղեկավարությունը վերապահվում է Ադրբեջանական ռեսպուբլիկային: Ուստի խնդրում ենք Ձեզ հաշվի առնեք մեր ժողովուրդի իղձերը և Ղարաբաղի Ավտոնոմ Մարզը միացնեք Հայկական ՍՍՌ-ին: Հուսով ենք, որ կընդառաջեք մեր խնդրին, և մենք կկարողանանք ազատ կերպով այս օտար միջավայրերից նորից վերադառնալ մեր հայրենի օջախը, ապրել բավտավոր, ինչպես մնացած ռեսպուբլիկաների անկախ ժողովուրդները:

Նամակը գրում են մի խումբ դարաբաղցիներ, որ զոհ դարձած հալածողների՝ ապրում են Հայաստանի տարածքում:

Հնարավոր չէ անուն ազգանուններս և հասցեներս նշելու, քանի որ առանց հաշվի առնելու մեր օրինավոր պահանջները, դրա համար հալածում են:

Մեր նամակի պատասխանը սպասում ենք Ձեր արդար որոշման հայտարարությունով:

*Ատորազրություններ*

*ՀԱԱ, ֆ. 1, ց. 42, գ. 85, ք. 36:*

№ 6

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՐ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻՅՅԻ  
ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. Ն.Ս. ԽՐՈՒՇՉՈՎԻՆ**

**Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր \***

Մենք, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի կոլտնտեսականներս, բանվորներս ու ծառայողներս և Ադրբեջանական ՍՍՌ

---

\* Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և հարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի՝ խորհրդային Միության կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար և Նախարարների խորհրդի նախագահ Նիկիտա Խրուշչովին հղած հանրագրությունն առաջին անգամ հրատարակվել է Բեյրութի «Ափյուռք» շաբաթաթերթի 1963 թ. դեկտեմբերի 31-ի համարում: Փաստաթղթի բովանդակությունից երևում է, որ այն պատրաստվել է 1962 թ. մայիսից հետո: Բնագիրը շրջանառության մեջ է դրվել 1963 թ.:

Փաստաթղթում արտացոլվում է արցախահայության տվյալ ժամանակի կացությունը, տրվում է նաև նախորդ տասնամյակների պատկերը, երբ «ժողովրդի թշնամի Բագիրովն» էր իշխում Ադրբեջանում: Ամենից ուշագրավն այն է, որ արցախահայությունն երբեք չի հրաժարվել իր ինքնությունն անխաթար պահելու նախանձախնդրությունից, այդ ուղղությամբ հետևողականորեն պայքարելու կամք ցուցաբերելուց:

Արցախահայության դիմումը հրատարակվել է նաև «Ալիք» (Թեհրան), 1964 թ. մայիսի 23, 24 և 25, «Յուսաբեր» (Կահիրե), 1964 թ. հունիսի 14, 15 և 16, «Ազդակ» (Բեյրութ), 1964 թ. հունիսի 21, 22 և 24, «Հայաստան» (Փարիզ), 1964 թ. մայիսի 21 և 28, թերթերի համարներում: Փաստաթուղթը արձագանք է գտել նաև ամերիկյան մամուլում:

Շամխորի, Խանլարի, Ղաշքեսանի, Շահունյանի շրջանների հայ ազգաբնակչությունն, մեր կյանքի ծանր պայմանների պատճառով հուսահատության հասնելով, որոշեցինք դիմել Ձեզ՝ արդարության ու պաշտպանության համար:

Անհիշելի ժամանակներից Քուռի, Արաքսի, Սևանա լճի միջև ընկած մեր հողը, որ պատմականորեն հայտնի է «Արցախ» անունով, միշտ էլ Հայաստանի անբաժանելի մասն է կազմել: Թուրք-մոնղոլների արշավանքները հայերին դուրս են մղել հարթավայրերից, գյուղերն ու քաղաքները ոչնչացվել են և քոչվորների համար վերածվել արոտավայրերի: Հայերին հաջողվել է ամրանալ ու պաշտպանություն գտնել Ղարաբաղի նախալեռնային ու լեռնային շրջաններում միայն:

Ուսաստանին միանալուց հետո վերացվեց Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյության ոչնչացման վտանգը, չնայած դեռ մնում էր ցարական իշխանության ծանր լուծը: Ցարական իշխանությունը 1903–1905 թթ. աճող հեղափոխական շարժումից պաշտպանվելու նպատակով արհեստական թշնամանք ու կոտորած հրահրեց հայերի ու Ադրբեջանցիների միջև: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը Ղարաբաղի հայկական շրջանները մեկուսացրեց արտաքին աշխարհից և ոչնչացնում էր հայերին ամեն տեղ, ուր այդ հնարավոր էր: Ղարաբաղի հայությունը, ուժերի գերագույն լարմամբ, չհնազանդվեց Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը, հերոսական ջանքերով պաշտպանելով իր անկախությունն ու ինքնուրույնությունը [...]

Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Ադրբեջանի սովետական կառավարությունն ընդունեց Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանին վերադարձնելու մասին ղեկավարացիա, որը ստորագրել և 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում հրապարակել է Ն. Նարինանովը:

Սակայն այդ արդարացի որոշումը չիրականացվեց: 1921 թ. մարտին, Թուրքիայի հետ կնքված դաշնագրով, Նախիջևանը մտցվեց Ադրբեջանական ՍՍՌ-ի կազմի մեջ: 1923 թ. Ղարաբաղի լեռնային մասին տրվեց ինքնավարություն՝ Ադրբեջանական ՍՍՌ-ի սահմաններում, իսկ գերակշռող հայկական ազգաբնակչությամբ Շամխորի, Խանլարի, Ղաշքեսանի, Շահունյանի շրջանները (շուրջ 90 %) ուղղակի մտցվեցին Ադրբեջանական ՍՍՌ-ի մեջ: Այսպիսով Ղարաբաղի հայությունը կորեցին Հայկական ՍՍՌ-ից և ինքնավարությունը չընդգրկեց բոլոր շրջանները: Ինքնավար մար-



զի իրավունքներն աստիճանաբար սահմանափակվեցին և այժմ համարյա իսպառ վերացվել են:

Ադրբեջանական ՍՍՌ-ի հայ ազգաբնակչության նկատմամբ վարվել է ուղղակի ազգայնական քաղաքականություն, ստեղծվել են սահմանափակումներ և կյանքի ծայրահեղ աննպաստ պայմաններ: Եթե ինքնավարության ստեղծման առաջին շրջանում որոշ բան, այնուամենայնիվ, արվել է մարզի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ, ապա հետո ամեն մի ձեռնարկում արգելակվել է. սկսված ամեն մի բան խոչընդոտվել է և կամ տրվել ադրբեջանական շրջաններին: Մինչդեռ մեր մարզի նկատմամբ ներկայացվել են բարձր և ուժից վեր պահանջներ (ներքնակների, վերնակների ու բարձերի միջից հարկադրաբար բուրդ հանելու և մթերման հանձնելու դեաբերը):

Հայ ազգաբնակչության տնտեսական վիճակի վատթարացման և մարզից հարկադրաբար հեռանալու նպատակով ձեռնարկված այդ սքողված միջոցառումներից բացի ձեռնարվել են նաև վնասարարական գործողություններ:

ժողովրդի թշնամի Բագիրովը ադրբեջանցիներով էր վերաբնակեցնում Մարտունու և Մարզի այլ շրջանների հայկական գյուղերը, չնայած այն բանին, որ Ադր. ՍՍՌ-ի մի շարք շրջաններում գոյություն ունեին ոռոգվող հողերի ազատ տարածություններ: Դրա հետևանքով այդ գյուղերում քիչ էր մնում, որ առաջանային ազգամիջյան ընդհարումներ: Բագիրովի հետևորդները չեն մոռացել նրա ցուցումները: Հայ ազգաբնակչության շահերի անվերջ ու սխտեմատիկ ոտնահարումով, թշնամական միջոցառումներով նրանք ջանում էին ոչ միայն ոչնչացնել մարզի ինքնավարությունը, այլև հայ ազգաբնակչությունը դուրս մղել Ղարաբաղից:

Բերենք մի քանի օրինակներ.

- Ստեփանակերտի հացի գործարանը ենթարկվում է Ադրամին (30 կմ հեռավորության վրա գտնվող ադրբեջանական շրջկենտրոն): Ադրամի շրջանում պիտի կազմակերպեն Ստեփանակերտին հաց մատակարարելու գործը, պլանավորեն այլուր բաց թողնելն ու հացի որակը:

- Մարզի առողջապահական բաժինը ենթարկվում է Ադրամին, որտեղից նշանակվում կամ հեռացվում են մարզի առողջապահական աշխատողները: Հիվանդանոցներն ու այլ հիմնարկներն ապահովվում են և ավելի ճիշտ՝ չեն ապահովվում անհրաժեշտ գույքով ու դեղանյութերով: Մարզի դեղատները նույնպես ենթարկ-

վում են Աղդամին, ինչպես մատակարարման, այնպես էլ աշխատակիցներ նշանակելու առումով:

- Շինարարական վարչությունը ենթարկվում է Մինգեչաուրին, որը 120 կմ հեռու է Ստեփանակերտից: Պրա անհապաղ արդյունքը եղավ այն, որ լավագույն մեքենաներն ու մեխանիզմները տեղափոխվեցին Մինգեչաուր, իսկ դրա փոխարեն բերեցին անպետք, հնացած սարքեր, տեխնիկա: Ստեփանակերտի ավտոպարկի գլխավոր աշխատողներն ազատվել են և նրանց տեղերն ուղարկվել են ադրբեջանցիներ:

- Մարզի մետաքսի կոմբինատը, որն ունի 3000 բանվոր (մարզի միակ արդյունաբերական ձեռնարկությունը), ենթարկել են Նուխու հանապատասխան, բայց փոքր հզորության մի ձեռնարկության, որը 120 կմ հեռու է Ստեփանակերտից: Ներկարարական ֆաբրիկան տեղափոխել են Նուխի, որի հետևանքով կրճատվել է աշխատավարձի ֆոնդը և իջեցվել է Ստեփանակերտի բանվորների աշխատավարձը: Ինձրիստանում, Սեյիդշենում, Ղշլաղում և այլ գյուղերում փակվել են մետաքսամանվածքային ֆաբրիկաները:

- Մարզի «Սոյուզպեչատի» բաժինը (թերթերի և հրատարակչությունների առաքման բաժին) տեղափոխվել է Աղդամ (1962 թ. մայիսից): Աղդամը պետք է պլանավորի, թե մենք ինչ պիտի կարդանք: Իսկ Ստեփանակերտի «Սոյուզպեչատի» աշխատողները մնացել են անգործ:

- Ստեփանակերտի ցեմենտ-բետոնի գործարանը ենթարկվում է Բարդայի շրջանին (60 կմ հեռավորությամբ), որը բացարձակապես ոչ մի կապ չունի գործարանի հետ:

- Թարթառգետի շինարարության հարցը մտցված է եղել հետպատերազմյան հնգամյակի մեջ, բայց լիապես չի կատարված: Թարթառգետը կոչված է լուծելու մարզի էներգետիկայի և էլեռնային ու նախաէլեռնային շրջանների ոռոգման հարցը: Մինգեչաուրի շինարարության պատճառով դադարեցվել է Թարթառգետի շինարարությունը, իսկ Մինգեչաուրը չի կարող լուծել Թարթառգետի հարցերը:

- Մարզի համար վերջին հնգամյակների մեջ մտցված մի շարք օբյեկտների (հրուշակեղենի կոմբինատը, Կուրոպատկինոյի գինեգործարանը և ուրիշներ) շինարարությունները չեն կատարվել:

- Չնայած անհրաժեշտ նախադրյալների ու կադրերի առկայությանը, յոթնամյա պլանով նախատեսած Ստեփանակերտի ավտովերանորոգման գործարանը կառուցվել է Կիրովպարտում:

- Քառասուն տարիների ընթացքում գյուղերի և մարզային կենտրոնի միջև ոչ մի կիլոմետր ճանապարհ չի կառուցվել և չեն բարելավագվել եղած ճանապարհները:

- Ոչ մի հնարավոր գործ չի ձեռնարկվել մարզի գյուղատնտեսության զարգացման համար: Չեն ընդարձակվել այգիների, տեխնիկական կուլտուրաների, հացահատիկի ու կարտոֆիլի տարածությունները: Չկա բերքատվության աճ: Անկում է ապրում անասնապահությունը, դեկավարությունը ոչ մի ուշադրություն չի դարձնում ոռոգմանը: Լեռնային Ղարաբաղի մի շարք գետերի վրա ոռոգման նպատակով ջրամբարներ են կառուցվել, բայց այդ ջրերից օգտվում են միայն աղբբեջանական գյուղերը: Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսականները իրավունք չունեն օգտագործելու իրենց գետերի ջրերը: Հնուց Լեռնային Ղարաբաղը հռչակված էր թե՛նու այգիներով, որոնք շատ հաճախ ծանր տքնությամբ աճեցվել են ժայռոտ սարավանդերին: Այդ այգիներն օգտագործվում էին սպիրտ, դրշաբ ստանալու, շինանյութի և վառելիքայտի համար: Հաշվի չառնելով ազգաբնակչության բողոքը, արգելվել է սպիրտ թորելը և առաջարկվել է թե՛նիները օգտագործել միայն շերամ կերակրելու համար: Դրա հետևանքով ոչնչացվում են թթուսները, մերկանում են ժայռոտ լանջերը:

- Չեն ուսումնասիրվել մարզի հողակլիմայական պայմանները. ենթաշրջանների նեղ մասնագիտական արդյունագործական բաժանում չի կատարվել: Մարզուշենի մարզային փորձակայանը ենթարկվում է Բաքվին:

- Անկում է ապրում լուսավորությունն ու մշակույթը: Լուսավորության բնագավառում պետք է նշել դպրոցների վատ աշխատանքը, որ հատկապես ակներև է դառնում Հայկական ՍՍՌ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների ժամանակ: Փակվել են Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը, Երաժշտական դպրոցը: Ստեփանակերտի թատրոնը մշակութային մեծ նվաճում է, բայց նա ստեղծվել է Բաքվի հայկական թատրոնի վերացման հիման վրա, չնայած նրան, որ Բաքվում կա մեծաքանակ հայություն:

Ավտոնոմ մարզի և նրա հայկական ազգաբնակչության նկատմամբ կիրառված ապրիմի գործողությունների թվարկումն անգամ բնութագրում է մարզի ազգաբնակչության ծանր իրավիճակը: Դա ծաղր է ինքնավարության, հայ ազգաբնակչության շահերի ու սովետական քաղաքացու իրավունքների նկատմամբ: [...]

Լեռնային Ղարաբաղի հիմնարկ-ձեռնարկները՝ 40–60 կմ հեռավորության վրա գտնվող ադրբեջանական շրջանների համապատասխան ձեռնարկություններին ենթարկելու (Ադրան, Բարդա, Մինգչեաուր, Կիրովաբադ, Նուխի և այլն) փաստերը, մարզի հիմնարկություններն ու ձեռնարկությունները Ադրբեջանական ՍՍՌ-ի շրջաններ տեղափոխելը, մարզի՝ այլևս նախատեսված արդյունաբերական և այլ անհրաժեշտ ձեռնարկությունների կառուցման խափանումը, հասցրել են մարզի վարչատնտեսական գործունեության կատարյալ քայքայման:

Այդ միակողմանի վնասակար միջոցառումների պատճառով մարզի հայ ազգաբնակչությունը զրկվել է աշխատանքից ու բարեկեցությունից ու հարկադրաբար թողնում է իր հարազատ օրրանը, որին և ձգտում են ադրբեջանական իշխանությունները:

Ահա թե ինչով պետք է բացատրել վերջին 25 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության աճի կատարյալ բացակայության փաստը: Պետք է նշել, որ վերը նշվածի շնորհիվ Ղարաբաղը միաժամանակ բնակեցվում է ադրբեջանցիներով: Ուղղակի տարվում է ազգային-չոլիմիստական, պանթուրքիստական քաղաքականություն, որը միանգամայն աներևակայելի է ու անհարիր Սովետական իշխանության պայմաններում, բայց, ըստ երևույթին, ընդունելի է Ադրբեջանի հանրապետության ղեկավարության համար: Այդ քաղաքականությունը ավելի նողկալի ձևեր է ընդունել մարզից դուրս գտնվող հայկական շրջաններում (Շամխորի, Շահումյանի, Խանլարի շրջաններ):

Ստեղծվել է անհանդուրժելի դրություն: Խտրականությունն ամենուր է և ամեն ինչում: Մեր վիճակն այժմ վատթար է, քան 1918–1920 թթ.՝ թուրք մուսավաթական և անգլիական նվաճման շրջանում: Ամեն ինչ կատարվում է բարեկամության ու եղբայրության քողի տակ: Մենք առաջ էլ բողոքել ենք, որ փաստորեն չկա ինքնավար մարզ: Փորձեր են արվել պարզելու մասայի դժգոհության պատճառները, բայց դրա համար գործադրվել են անթույլատրելի մեթոդներ:

Օրինակ, Բագիրովը Ստեփանակերտում հրավիրել էր կուսակցական ակտիվի նիստ և առաջարկել. «Ովքեր ճիշտ չեն համարում Ղարաբաղի՝ Ադրբեջանական ՍՍՌ-ին միացումը, թող դուրս գան ժողովից»: Պարզ է, թե տվյալ դեպքում ինչով կարող էր վերջանալ ժողովից դուրս գալը:

Մեկ ուրիշ դեպք, որ տեղի է ունեցել վերջերս, երբ պատճառները պարզաբանելու համար կարծիքներ են հարցրել միայն մարզի ղեկավարներից և այն էլ Բաքվում (ընկ. Մուխիտդինով):

Ճնշման և խտրականության քաղաքականությունը առաջացնում է արդարացի ատելություն հանրապետության և մարզի ղեկավարության նկատմամբ: Ցավալին այն է, որ այդ հողի վրա առաջանում են ազգամիջյան անցանկալի փոխհարաբերություններ:

Մենք խնդրում ենք անհապաղ վճռել Լեռնային Ղարաբաղը և հարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ՍՍՌ-ի մեջ վերամիավորելու կամ ՌԱՖՍՌ-ի կազմի մեջ մտցնելու հարցը:

Մենք խնդրում ենք Ղարաբաղի հայության նկատմամբ գործադրել միայն Լեւինյան ազգային քաղաքականություն:

*Ստորագրություններ*

*«Ախյուռք», Բեյրութ, 31 դեկտեմբերի, 1963 թ.:*

№ 7

## ՍՍԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ\*

Լ.Ի. ԲՐԵՃՆԵՎԻՆ  
Ա.Ն. ԿՐՍԻՂԻՆԻՆ  
Ա.Ի. ՄԻԿՈՅԱՆԻՆ

Մենք երկար ժամանակ տարակուսանքի մեջ էինք՝ գրե՞լ արդյոք այս նամակը: Մենք կարծում էինք, թե Ադրբեջանի ԿԿ կենտրոնն ու կառավարությունը կփոխեն իրենց վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նկատմամբ, թե մեր մարզի ղեկավարման գործում նրանց թույլ տված սխալները բխում են գործերի, Լեռնային Ղարաբաղի աշխատավորների շահերի ու պահանջանունքների չինացությունից: Սակայն, ավաղ, մենք մոլորության մեջ էինք:

Բոլորին հայտնի է, թե ինչպիսի տեմպերով են զարգանում մեր երկրի ժողովրդական տնտեսությունը, մշակույթը, գիտությունն ու

\* Նամակի բովանդակությունից երևում է, որ այն գրվել է 1965 թ.:

տեխնիկան: Այդ զարգացումը տեղի է ունենում բոլոր հանրապետություններում, մարզերում, երկրամասերում ու շրջաններում: Իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, չգիտես ինչո՞ւ, տխուր բացառություն է կազմում:

Ո՞րն է պատճառը: Չէ՞ որ Ղարաբաղի հողը դարեր ի վեր համարվել է առատաբաշխ ու բարեբեր, և ոչ իզուր տեղը: Ղարաբաղյան այգեգործներն ու հացագործները, բանջարաբույծներն ու անասնապահները, որմնափորներն ու կահույքագործները համարվել են իրենց գործի հմուտ վարպետներ: Չէ՞ որ Լեռնային Ղարաբաղը, որ Կասպանի ու Ջանգեզուրի լեռների շարունակությունն է հանդիսանում, հարուստ է պղնձի, մոլիբդենի, պղծճի, իսլանդական շալտի և այլ հանքային թանկարժեք հանածոների վիթխարի պաշարներով, ինչպես նաև հանքային բուժիչ ջրերի տասնյակ աղբյուրներով: Ինչու՞ նրանք չեն օգտագործվում: Ինչու՞ գերազանցապես գյուղատնտեսական մարզ համարվող Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության 45 տարիների ընթացքում չի ձեռնարկվել ջրատնտեսական որևէ խոշոր միջոցառում, երբ ամեն տարի երաշտի պատճառով կորցնում ենք տասնյակ հազար տոննաների բերք, իսկ մեր լեռնային գետերի ջրերը հոսում են անօգուտ կամ ոռոգում են միայն մեր հարևանների դաշտերը: Ինչու՞ գյուղատնտեսական այս մարզում մինչև այժմ չի կառուցվել գյուղատնտեսական մթերքներ մշակող արդյունաբերական որևէ խոշոր ձեռնարկություն: Ինչու՞ այդ տեսակի միակ ձեռնարկությունը, Ստեփանակերտի սննդի կոմբինատը, որի շինարարությունը ձգձգվել էր ուղիղ 8 տարի, շահագործման հանձնվելուն պես էլ փակվեց, իսկ սարքավորումները քանդվեցին ու բաշխվեցին հարևան աղբրեջանական շրջաններին: Եվ դա այն ժամանակ, երբ մեր մարզում սպառման օջախների բացակայության պատճառով ամեն տարի չեն հավաքվում ու փչանում են հազարավոր տոննաների բանջարեղեն ու մրգեր:

Վերջին չորս-հինգ տարիներին նկատվում է մարզի ձեռնարկություններն ու շինարարական կազմակերպությունները հանրապետական կազմակերպություններին կամ մարզից դուրս գտնվող մարմիններին կցելու միտում: Այս և ուրիշ պատճառներով 1962 թ. մեր մարզում բռնկվել էին աշխատավորների դժգոհություններ ու ընթոստացումներ: Վախենալով հետևանքներից՝ Աղբրեջանի ԿԿ կենտկոմն ու կառավարությունը շուտափույթ ընդունեցին ծավալուն որոշում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական տնտեսության զարգացման ու աշխատավորների մշակու-

թային-կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցառումների մասին»։ Այդ որոշման մեջ գրեթե չեն նախատեսվում մարզի տնտեսական վերելքն ապահովող միջոցառումներ։ Եվ, այնուամենայնիվ, նախատեսված միջոցառումների 70–80 տոկոսը մնացել է թղթի վրա, դեռ ավելին. տարեցտարի մարզի արդյունաբերությունն են է գնում։ 1964 թ. համեմատությամբ ընթացիկ տարում համախառն արտադրանքի պլանը իջեցվել է 16,9 տոկոսով, երբ անցյալ տարվա պլանը կատարված է եղել 100,9 տոկոսով։

Ստեփանակերտում գորգագործական նոր ֆաբրիկա են կառուցել և ավարտելուն պես փակել։ Կրճատվել են ֆաբրիկայի գործող բաժինները, որի հետևանքով ավելի քան 100 վարպետներ մնացել են անգործ։

Մարզի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունում՝ Սետաքսի կոմբինատում, կրճատվել են ուղրման և գործվածքային արտադրությունները, 130 բանվորներ ազատվել են աշխատանքից։ Ինչպես նշեցինք, մարզի շատ կազմակերպություններ ու ձեռնարկություններ տրվել են մարզից դուրս գտնվող կազմակերպությունների իրավասությանը, որը շատ վատ է անդրադարձել աշխատանքի կազմակերպման վրա։ Մարզային շինարարական հ. 59 վարչությունում, որը տրվել է Սինգեչաուրի հ. 5 շինտրեստին, դա արտացոլվել է ավելի ցայտուն։ Այստեղ ծայրահեղ վատ է նյութատեխնիկական սպասարկումը, որի պատճառով շինարարական օբյեկտներում պարսպաբլոկներն ու հոսունությունը դարձել են սովորական երևույթ։ Միայն ընթացիկ տարվա հինգ ամսում 540 բանվորներից 220-ը հեռացել են մարզից։

Ստեփանակերտում հարյուրավոր անգործ մեխանիզատորներ ու վարորդներ կան։ Սակայն քաղաքի ու մարզի կառույցներում՝ որպես վարորդներ ու մեխանիզատորներ աշխատում են Սինգեչաուրից գործուղված մարդիկ, որոնք ստանում են գործուղման ծախսեր և անվճար օգտվում կոմունալ բոլոր ծառայություններից։

Մարզում տնտեսական ու մշակութային օջախներ ստեղծելու մասին մարզային կազմակերպությունների ու աշխատավորների խնդրանքներին Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները պատասխանում են մերժումով։ Պարզապես նրանք չեն ցանկանում Լեռնային Ղարաբաղում կատարել կապիտալ ներդրումներ։ Սակայն կլինել չարյաց կեսը, եթե նրանք բավարարվեին դրանով։ Դժբախտաբար մեր մարզի նկատմամբ նրանց վերաբերմունքի մեջ չի կարելի չտեսնել վատագույնը. նրանք անում են ամեն ինչ՝ մարզի տնտե-

սությունը խարխլելու, մշակութային ամեն մի առաջաքայլ խափանելու համար:

Պա դժվար չէ տեսնել գյուղատնտեսության օրինակի վրա:

Լեռնային Ղարաբաղի գյուղական աշխատավորները մեծ ոգևորությամբ են ընդունել ԽՄԿԿ կենտկոմի մարտյան պլենումի որոշումները, որոնք խոշոր հեռանկարներ են բացում գյուղատնտեսության առաջընթացի համար: Սակայն որքան էլ որ տարօրինակ լինի, այդ իսկապես լավ ու գործնական որոշումները մեզ մոտ ցանկյալի արդյունքը չեն տալու, որովհետև հանրապետական կազմակերպություններն առաջիկա հնգամյակի համար մեր մարզին նախատեսել են ոչնչով չհիմնավորված պլաններ:

1965 թ. նախնական պլանը հացամթերքների գծով հանրապետությունում իջեցվել է 36 տոկոսով, իսկ մեր մարզում՝ ընդամենը 18: Եվ այն դեպքում, երբ մարզում հացահատիկայինների համար չկան ոռոգվող հողեր, և մարզի կոլխոզներն ամեն տարի պետությունից գնում են 20–25 տոննա սերմեր ու խտացրած անասնակեր:

Համեմատեցեք մեր մարզի և նույն Ադրբեջանական ԽՍՀ Նախիջևանի ԻԽՍՀ պլանները: Նախիջևանի հանրապետությունը, որի տարածքը մեր մարզից ավել է 700 քառ. կմ, (իսկ ցանքատարածությունների ու ոռոգվող հողերի տեսակետից՝ ավելի շատ) պետությանը կվաճառի շուրջ 2.000 տոննա հաց, իսկ մեր մարզը՝ 5.000:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ փաստի վրա. 1966 թ. Նախիջևանի հանրապետությունը պետությանը պետք է վաճառի 11.800 տոննա բամբակ, 1970 թ.՝ ընդամենը 6,5 հազար տոննա: Իսկ մեր մարզի պլանը մինչև 1970 թ. մնացել է անփոփոխ: Եվ դա այն դեպքում, երբ հանրապետության Մինիստրների խորհրդի որոշմամբ բամբակի համար նախատեսված հողերի զգալի մասում արդեն խաղողի այգիներ են զգված:

Հանրապետությունում 1965 թ. նախնական պլանի համեմատությամբ մսի վաճառքի մակարդակը իջեցվել է 18 տոկոսով, իսկ մեր մարզում՝ միայն 2,5 տոկոսով: Առաջիկա 5 տարում նախատեսված է հանրապետությունում մսի արտադրանքն ավելացնել 2,7–3 տոկոսով, իսկ մեր մարզում 12–13 տոկոսով: Մինչև 1970 թ. հանրապետությունում մսի վաճառքը կավելանա ամեն տարի 2.000 տոննայով, որից 500–700-ը՝ մեր մարզի հաշվին, այն դեպքում, երբ հանրապետության ոռոգվող տարածքի 5 տոկոսը կազմող մեր անջրդի մարզի պլանը մինչև այժմ կազմել է հանրապետության պլանի 6–7 տոկոսը: Նախիջևանը 1966 թ. պետությանը



վաճառելու է 2.325 տոննա միս, իսկ մեր մարզը՝ 5.885, իսկ 1970 թ.՝ համեմատաբար 2.500 և 6.500 տոննա:

Մարզի տնտեսության զարգացման մեջ խոշոր դեր կարող է կատարել խաղողը: Մանավանդ, որ դա մեր տնտեսության անենաեկանառաքեր ճյուղն է: Բերքառատ տարիներին մարզը պետությանը վաճառել է 10.000 տոննա խաղող: Վերջին երկու-երեք տարվա ընթացքում խաղողի այգիների տարածությունն ավելացվել է ևս մի քանի հազար հեկտարով: Այդ նշանակում է, որ առաջիկա տարիներին բազմապատկելու է խաղողի արտադրությունը: Հետևաբար անհրաժեշտ է ավելացնել նաև պետական գնումների պլանը: Սակայն հանրապետական կազմակերպությունները կատարել են հակառակը, խիստ կրճատելով պետական գնումների պլանները, որով արհեստականորեն խանգարում են մարզի խաղողագործության զարգացմանը:

Ղարաբաղցիները դարեր ի վեր զբաղվում են թթաբուծությամբ, որի արտադրանքից (սպիրտ, զանազան հյութեր, չամիչ և այլն) ստանում են հսկայական եկամուտներ: Մարզի գիտնականների և հանրապետության Գիտությունների ակադեմիայի մասնագետների հաշիվներով՝ միայն թփից պատրաստած գինին մարզին ամեն տարի կարող է տալ 30 միլիոն ռուբլու եկամուտ: Դրա համար միայն անհրաժեշտ է ունենալ վերասարքավորված 15-30 ավտոմեքենա: Մի քանի տարի առաջ Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հատուկ որոշմամբ համապատասխան մարմիններին հանձնարարել էր մարզի կոլխոզներին տրամադրել այդպիսի մեքենաներ: Այս որոշումը մինչև այսօր չի կատարվել, որի հետևանքով մարզն ամեն տարի զրկվում է հսկայական եկամուտներից:

Առհասարակ, մեր մարզի նկատմամբ հանրապետական կազմակերպությունների կողմից միշտ էլ կիրառվում է հետաքրքիր մի խաղ. վերադասներն ընդունում են գեղեցիկ որոշումներ, տալիս բազմախոստում կարգադրություններ և այլն, իսկ ստորադասներն անպատիժ կերպով չեն կատարում այդ որոշումներն ու կարգադրությունները:

ԽՍՀՄ Պետականի «Ազրոլեսայրոեկտ»-ի աշխատողներից կազմված մի հանձնաժողով անցյալ տարի մեր մարզում արձանագրել է, որ 50.000 հեկտար հող էրոզիայի ենթարկվելով անպետքացել է գյուղատնտեսության համար: Հանձնաժողովը նշել է նաև, որ 150.000 հեկտար էլ էրոզիայի է ենթարկվում: Կուսակցության մարզկոմը և մարզխորհրդի գործկոմը, այդ հանձնաժողովի պնդումով, հարց են հարուցել, որպեսզի 50.000 հեկտարը դուրս գրվի

մարզի բալանսից և տրվի անտառային տնտեսություններին, իսկ 150.000 հեկտարի վրա կատարվի համապատասխան աշխատանք՝ հողերի կառուցվածքը վերականգնելու համար: Սակայն Ադրբեջանի կառավարությունը մերժել է այդ խնդրանքը և շարունակում է գյուղատնտեսական մթերքների պլաններ նախատեսել այդ անպետք հողերի հաշվին:

Սենք լրջորեն անհանգստացած ենք մարզի բնակչության մեծ հոսունությամբ: Մարդիկ զանգվածաբար հեռանում են մարզից՝ ուրիշ վայրերում աշխատանք գտնելու հույսով: [...]

1939 թ. մեր մարզում ապրում էր 150.000 մարդ, իսկ Ադրբեջանական ԽՍՀ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում՝ 127.000: 1964 թ. մեր մարզն ուներ 142.000 բնակիչ, իսկ Նախիջևանի ԻԽՋ-ը՝ 179.000: Ինչո՞վ բացատրել, որ մեր մարզի բնակչությունը տարեցտարի նվազում է, իսկ Նախիջևանինը՝ ավելանում, երբ Լեռնային Ղարաբաղը աչքի է ընկնում ծննդի բարձր տոկոսով, իսկ մարդկանց երկարակեցության տեսակետից, «Իգվեստիա» թերթի հավաստմամբ, զբաղեցնում է առաջին տեղը ամբողջ աշխարհում: Ո՞րն է Ղարաբաղի բնակչության հոսունության պատճառը:

Բանվորական ուժի հավաքագրման ճանապարհով ամեն տարի մարզից հանրապետության շրջաններն են տանում 250–300 տղամարդ: Տարբեր գայթակղությունների միջոցով պահում են նրանց, որից հետո յուրաքանչյուր այդպիսի տղամարդուն հետևում է նաև նրա ընտանիքը:

Չորս տարի առաջ Ստեփանակերտում բացվեց շինարարական ուսումնարան: Սենք կարծում էինք, թե այդ ուսումնարանը կդառնա դարբնոց՝ մարզի կոլխոզների ու նորակառույցների համար շինարարական կադրեր պատրաստելու համար: Սակայն ուսումնարանը դարձավ մեկն այն ուղիներից, որոնցով մարզից դուրս են մղում երիտասարդներին: Չորս տարվա ընթացքում ուսումնարանը թողարկել է 600 մասնագետներ, որոնցից 50-ը աշխատում են հանրապետության տարբեր շրջաններում, երբ մեր մարզի կոլխոզները խիստ կարիք են զգում շինարարական կադրերի: Այժմ ուսումնարանն ամեն տարի թողարկում է 200–250 վարպետներ: Սա նշանակում է, որ ուսումնարանի միջոցով ամեն տարի մարզից դուրս է գալիս 200–250 երիտասարդ, այսինքն՝ միայն այս ճանապարհով դատարկվում է տարեկան մեկ գյուղ:

Վերջերս մեր մարզ էր ժամանել ԽՍՀՄ Պետականի աշխատակից ընկ. Մոսկալենկոն, որը հետաքրքրվել է մարդկանց աշխա-

տանքի ընդգրկելու հարցով: Միայն Ատեփանակերտում գործազուրկների թիվը հասնում է 700-ի: Նկատի առեք, որ ավելի քան 2.000 արհեստավորներ էլ աշխատում են հանրապետության այլ շրջաններում: Այդ նշանակում է 25 հազարանոց քաղաքի յուրաքանչյուր տասներորդ բնակիչն անգործ է: Ընկ. Մոսկալենկոն համապատասխան տեղեկանք է ներկայացրել Ադրբեջանի ԿԿ կենտրոնին: Սակայն ոչ մի արդյունք:

Կողմնակի մարդը կարող է մտածել, թե երբ ինքնավար մարզում տնտեսական հարցերը չեն լուծվում, ապա թերևս նշակութային բանգավառում դրությունը բարվոք է: Չ՛է որ ինքնավարությունը հիմնականում նշակութային է: Այն բնակչությանն է տրվում ազգի ազատ զարգացումն ապահովելու նպատակով: Դժբախտաբար, նշակույթի բանգավառում մեզ մոտ դրությունն ավելի վատ է:

ԻՄՅՄ Սահմանադրությունը մեր երկրի հիմնական օրենքն է: Ըստ այդ սահմանադրության ինքնավար մարզում պետական իշխանության և պետական վարչության մարմինները պետք է գործեն տեղական ազգաբնակչության մայրենի լեզվով: Բայց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հիմնական օրենքի այդ հիմնական կետը համարվում է անօրեն: Մարզային բոլոր կազմակերպություններում (և ոչ միայն մարզային) գործավարությունը տարվում է ոչ հայերեն: Էլ չենք խոսում աշխատավորների դեպուտատների մարզխորհրդի նստաշրջանների, մարզգործկոմի նիստերի, գործնական ու հանդիսավոր խորհրդակցությունների ու ժողովների մասին:

Մարզխորհրդի գործկոմն ունի նախագահ (մասնագիտությամբ ազդոնում) և երկու տեղակալ (ազդոնում ու ճարտարապետ): Նրանցից ոչ ոք չի ղեկավարում (և ի վիճակի էլ չէ ղեկավարելու) մարզի նշակութային կյանքը, լուսավորությունը, առողջապահությունը: Իսկ կուսակցության մարզկոմում նշակութային շինարարության ու գաղափարական աշխատանքները «ղեկավարում է» մարզի դատախազի նախկին օգնականը՝ կիսազրագետ ու անօգնական մի մարդ:

Այսպիսի վիճակը ոչ ոքի չի անհանգստացնում:

Ինքնավար մարզը չունի իր հրատարակչությունը, պարբերական գրական-գեղարվեստական օրգանը (մինչև պատերազմն այդպիսի հանդես գոյություն է ունեցել), չունի երիտասարդական կամ լուսավորական հարցեր լուսաբանող որևէ թերթ, իսկ մինչև պատերազմը մարզում հրատարակվում էին երիտասարդական թերթ և լուսավորական բյուլետեն:

Այսպիսի պայմաններում մարզի միակ տպագիր մարմինը՝ «Խորհրդային Ղարաբաղը» (որն ունի «Պրավդայի» ֆորմատի կեսը) պարտավոր է կատարել Խորհրդային մամուլի ու հրատարակչության բոլոր պարտականությունները:

Մարզում աճել է գրողների մի մեծ խումբ: Նրանց լավագույն երկերն արժանացել են ընթերցողների ու գրական հասարակայնության ուշադրությանը: Սակայն վերջին երկու տարում այդ գրողների և ոչ մի գիրքը չի մտել Ադրբեջանի պետական հրատարակչության պլանների մեջ, թեպետ համապատասխան մարմինների կողմից հեղինակների վեց գրքեր երաշխավորված են եղել հրատարակության:

Մարզի դրամատիկական թատրոնն ու երգի-պարի պետական անսամբլը, որոնք կոչված են սպասարկելու ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև Բաքվի ու մյուս շրջանների հայ բնակչությանը, հազիվ քարշ են տալիս իրենց գոյությունը: Թատրոնը ստանում է պետական չնչին ֆինանսավորում, անսամբլը՝ ոչ մի: Իսկ հանրապետության համանման կոլեկտիվներն ստանում են այնքան, որքան անհրաժեշտ է:

Մենք ոչնչով չհիմնավորված ու անմարդկային ենք համարում Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ միջև գոյություն ունեցող արհեստական պատնեշները: Ղարաբաղի հայերն իրավունք չունեն լսելու իրենց մայր ժողովրդի շաղիհձայնը: Երևանի թատերական ու համերգային լավագույն կոլեկտիվները հյուրախաղերով պարբերաբար հանդես են գալիս Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի մյուս քաղաքներում: Ղա համարվում է բարեկամություն: Սակայն նրանց թույլ չի տրվում այցելել Ղարաբաղ՝ իրենց արյունակից եղբայրների մոտ: Սա ևս բարեկամություն է համարվում:

Ինչ-որ հրամանով ստեղծվել է այսպիսի կարգ. առանց կուսակցության մարզկոմի բյուրոյի որոշման Հայաստանի գրողը կամ արվեստի գործիչը իրավունք չունի գալ Ղարաբաղ՝ իր ընթերցողների ու երկրպագուների մոտ:

Լեռնային Ղարաբաղում հայերեն կրկնօրինակված ֆիլմեր չեն ցուցադրվում, եթե նույնիսկ նրանք գիտամասսայական բնույթ ունեն և ստեղծված են աշխատավոր լայն զանգվածների մեջ տարածելու առաջավոր փորձը, տեխնիկայի ու գիտության նորույթները: Ուղղակի պետք է կույր ու խուլ լինել՝ չտեսնելու, չզգալու համար այն ծրագրվածությունը, որով պարբերաբար խափանվում է մեր մարզի տնտեսական ու մշակութային առաջընթացը, ուռնա-

հարվում են ղարաբաղցի հայերի օրինական իրավունքներն ու ազգային արժանապատվությունը: Եվ այս բոլորը հասցրել է նրան, որ այժմ «հինքնավար» ածականը մարզի կողքին հնչում է որպես չար կատակ:

Հանրապետության ղեկավարները համարյա չեն լինում մեր մարզում: Իսկ տարբեր հանդիսավոր արարողությունների ու մարզային կուսակցական կոնֆերանսների ներկայանալուց չեն հանդիարում աշխատավորների հետ: Միտինգներում արտասանում են ոգեշունչ ճառեր, եղբայրության ու բարեկամության մասին, խոստանում ոսկու սարեր և՝ մարզից հեռանալուց՝ մոռանում այս բոլորը: Մարզի աշխատավորներին իրենց ուշադրությամբ երես չեն տալիս նաև ԽՍՀՄ կենտկոմի ներկայացուցիչները, որոնք տարին մեկ կամ երկու տարին մեկ Ղարաբաղ այցելելով, գրուցում են մարզկոմի առաջին քարտուղարի հետ ու վերադառնում են:

Հանրապետության ղեկավարներն իրենց յուրաքանչյուր ելույթում անդրադառնալով Լեռնային Ղարաբաղին, չեն կարող չթմբկահարել թե վերջինս Ադրբեջանի անբաժանելի մասն է կազմում:

Ղա քաղաքական ղեմագոգիա է, սարսափի խրտվիլակ, որ կիրառվել է դեռևս Բաղիրովի օրոք:

Ադրբեջանի ո՞ր մասն է այն, երբ իրենք՝ Ադրբեջանի ղեկավարները, Լեռնային Ղարաբաղին նայում են որպես օտարերկրացիներով բնակեցված մի երկրամասի: Մի՞թե նրանք կարծում են, թե աշխարհագրական քարտեզի վրայի ինչ-որ մի սև գիծը բավական է, որպեսզի երկվեղկի միասնական մի ազգ, միասնական իր հազարամյա պատմությամբ, հոգեբանությամբ ու ճակատագրով: Եվ դա՛ սոցիալիստական կարգի պայմաններում, լեռնինյան ազգային քաղաքականության դրոշի ներքո:

Լեռնային Ղարաբաղի բնակչության 85 տոկոսը հայեր են, և նրանք այս հողի վրա ապրում են անհիշելի ժամանակներից: Իսկ հողը պատկանում է նրան, ով ապրում է նրա վրա:

45 տարիներ կտրված լինելով իր ազգի հիմնական մասից՝ Ղարաբաղի հայությունը զրկված է եղել տնտեսական ու մշակութային մեծ առաջընթացի հնարավորություններից: Ադրբեջանական ժողովրդի, նրա կուսակցական կազմակերպության ու կառավարության ինտերնացիոնալ պարտքն է՝ հարգել Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքները, Լեռնային Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին: Ղա ղարաբաղցի աշխատավոր բոլոր հայերի՝ տասնամյակներով փայփայած իղձն է: Հարցրեք նրանցից յուրա-

քանջուրին (բայց ո՛չ այսպես կոչված, ղեկավար դրածոներին), և դուք կլսեք միայն խնդրանք ու աղաչանք վերամիավորման մասին:

Մենք ստորագրություններ չենք հավաքում: Առանց այդ էլ գրգռված են մարդիկ: Դժգոհությունն օրրստօրե ծավալվում է՝ ընդունելով ամենամասպատելի ու տհաճ ձևեր:

Դիմելով Ձեզ, մենք համոզված ենք, որ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտկոմը և Խորհրդային կառավարությունը, որոնք միշտ և ամենուրեք պաշտպանում են բոլոր ազգերի շահերը, անհասպաղ իրենց բարի ուշադրությունը կդարձնեն դարաբաղճի հայերի օրինական ձայնին:

*Ստորագրել են.*

*Բազրատ Ուլուբաբյան* – Գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար:

*Սերգեյ Շաքարյան* – Ստեփանակերտի քաղաքային գործկոմի նախագահ:

*Լազր Գասպարյան* – «Խորհրդային Դարաբաղ» մարզային թերթի խմբագիր:

*Գրիգոր Ստեփանյան* – մարզային ռադիոյի ավագ խմբագիր:

*Արամ Բաբայան* – Ստեփանակերտի հ. 2 սովխոզի դիրեկտոր:

*Արսեն Մուքանյան* – Սոսի Շահունյանի անվան կոլխոզի նախագահ, Ադրբեջանի Գերագույն Խորհրդի դեպուտատ:

*Գուրգեն Գաբրիելյան* – կուլտուրայի մարզային վարչության պետ:  
*Բոգրան Ջանյան* – բանաստեղծ:

*Միրայել Կորզանյան* – ժողովրդական դերասան:

*Արկադի Սանուշարյան* – Ստեփանակերտի հ. 59 շինվարչության պետ:

*Ալբերտ Սեյրանյան* – Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր:

*Սաքսիմ Ավանեսյան* – Ստեփանակերտի ռադիոյի ավագ խմբագիր:

*Սերգեյ Գրիգորյան* – հ. 59 շինվարչության գլխավոր ինժեներ:

*Թարգմանություն ռուսերենից:*

**ԽՍԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ\***

Մենք, Լեռնային Ղարաբաղից 13 կոմունիստներս, երբ մեկ ամիս առաջ նամակ հղեցինք ընկերներ Լ.Ի. Բրեժնևին, Ա.Ի. Կոսիգինին և Ա.Ի. Միկոյանին, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Սարգուն տիրող վիճակի մասին, այդ նամակում կոնկրետ փաստերով ասպացուցեցինք, որ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը (որի կազմի մեջ է մտնում մեր մարզը 1923 թ. հուլիսի 7-ից սկսած) շահագրգռվածություն չի դրսևորում Լեռնային Ղարաբաղի տնտեսության և մշակույթի զարգացման նկատմամբ և, ինչը որ շատ ավելի վատ է, ամեն կերպ արգելակում է նրա զարգացումը: Մենք խնդրեցինք մեր նամակի քննարկումը չհանձնարարել Ադրբեջանի ղեկավարությանը, քանի որ նա իր հասցեին արդարացի քննադատության ցանկացած փորձն ընկալել և ընկալում է որպես ազգայնականություն և քննադատողին հետապնդումների և հալածանքների է ենթարկում:

Մենք համոզված էինք, որ ԽՍԿԿ կենտկոմը, տեղում ծանոթանալով վիճակին, անհրաժեշտ միջոցառումներ կծեռնարկի՝ մարզի տնտեսության և մշակույթի զարգացումը ապահովելու համար: Սակայն գործը ընթացավ այնպես, որ մեր նամակից հետո, մեկը մյուսին հաջորդելով, մեզ մոտ ժամանեցին հանրապետության նախարարները, Ադրբեջանի կուսակցության կենտկոմի քարտուղար ընկ. Վեգիրովը, Նախարարների խորհրդի նախագահ ընկ. Ալիխանովը: Նրանք հանդիպեցին միայն մարզի ղեկավարության հետ (բացառությամբ ընկ. Վեգիրովի) դռնփակ պայմաններում, հերթական խոստումներ և հարցանքի ու եղբայրության գծով հավաստիացումներ տվեցին և մեկնեցին: [...]

Այս օրերին Ստեփանակերտ ժամանեց Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ելիստրատովը՝ նամակի հեղինակների հետ զրուցելու համար: [...]

Զրույցի ժամանակ մեզ հայտնի դարձավ, որ մեր նամակի այսպես կոչված քննարկման հաշվետուությունը կազմել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի հրահանգիչ ընկ. Եֆիմ Գինդիսը: Այդ հաշվետվությունում ընկ. Գինդիսը չափից ավելի եռանդ է ցուցաբերել, ինչպես ասվում է Դռոմի Պասայից ավելի կաթուղի ներկայանալու

\* Նամակի բովանդակությունից երևում է, որ այն գրվել է 1965 թ.:

համար: Առանց խղճի խայթի նա խեղաթյուրել է նամակը, անտեսել բոլոր փաստերը, որոնց դեմ անկարելի է առարկել. սննդի կոմբինատի փակումը, մարզային կազմակերպությունները հանրապետականներին կամ հարևան ադրբեջանական շրջաններին հանձնումը, «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական տնտեսության զարգացման գծով միջոցառումների մասին» հայտնի որոշման անտեսումը, թթի այգիների բնաջնջումը, խաղողագործության զարգացման արգելակումը, մարզի մշակութային հետ մնալու պատճառները, հայկական բնակչության իրավունքների ոտնակոխումը և այլն:

Պատասխանում այլ հարցեր և փաստեր վերաշարադրված են այնպես, որպեսզի հեշտ լինի առարկելը կամ ժխտելը: Իսկ ինչ վերաբերում է մեր ժողովներին, ապա մարդ իրեն պարզապես խրամանկելու և խաբելու համար ազատ է զգացել:

Այն հարցերին թե «ինչո՞ւ է չեն օգտագործվում քարածուխի հանքավայրերը, հանքային ջրերի աղբյուրները», ինչո՞ւ է այս գյուղատնտեսական մարզում մինչև օրս չի կառուցվել գյուղատնտեսական արտադրանքը մշակող ոչ մի արդյունաբերական ձեռնարկություն», «ինչո՞ւ է չի իրագործվում ջրատնտեսական որևէ միջոցառում», ընկ. Ելիստրատովը մի պատասխան ունի՝ «դրան չունենք»:

Նամակում մեջբերված թվերը, մարզի տնտեսության կործանարար պլանավորումը արտացոլող, վերցվել են Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հասցեագրված Մարզկոմի և մարզի Գործկոմի նամակից, որը չգիտես ինչու է չի ուղարկվել հասցեատիրոջը: Մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Սելբունյանը ծանօթացավ մեր նամակին հանրապետական ղեկավարների մեզ մոտ ժամանելուց առաջ: Այդ ժամանակ նա չառարկեց փաստերից ոչ մեկի դեմ, ընդհակառակը՝ կարծիք հայտնեց այն մասին, որ մենք քիչ օրինակներ ենք նշել, խոստանալով ավելի ծանրակշիռ և հանդիչ փաստեր ներկայացնել ԽՄԿԿ կենտկոմի հանձնաժողովին, եթե նա ժամանի: Սակայն հանգվելով, որ ԽՄԿԿ-ից ոչ մի հանձնաժողով չի ժամանի, երևի հանրապետական ղեկավարության ճնշման ներգործությամբ, նա օգնեց «հաշվետվության» կազմողին թվերը խեղաթյուրելու գործում:

Զրույցի ընթացքում ընկ. Ելիստրատովը մեր նամակի եզրափակիչ մասը անվանեց տեղական-ազգայնական:

– Ինչո՞ւ է, հարցնում էինք մենք:



– Որովհետև դուք ցանկանում եք գրկել Ադրբեջանը ամբողջ մարզից:

Վերջերս նույն ընկ. Ելիստրատովը, Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի նախագահության նիստի ժամանակ, մետաքսագործության վերաբերյալ հարցը բննարկելու ընթացքում, մեր մարզի ղեկավարներին հանդիմանեց նրանում, որ Լեռնային Ղարաբաղը հանրապետության վզի վրա է նստած, ոչինչ չի տալիս և խժռում ու խժռում է (այս մասին պատմեցին մեր ղեկավարները):

Ինչու է նա զայրանում, երբ ցանկանում են Ադրբեջանին գրկել այդպիսի «ծանր լուծից» մարզից, որը ոչ մի բան չի տալիս, այլ միայն խժռում և խժռում է:

– Իսկ ի՞նչ, եթե ապստամբի ադրբեջանական ժողովուրդը, – հարցրեց ընկ. Ելիստրատովը:

– Ինչո՞ւ և պետք է ադրբեջանական ժողովուրդը ապստամբի:

Մեր մարզի Մարտունիի շրջանի կենտրոնում ադրբեջանական փոթրիկ Վեյսալու գյուղակ կա, ենթարկվում է հարևան ադրբեջանական Ֆիզուլիի շրջանին: Հայկական ԽՍՀ Գորիսի շրջանի խորքում նույնպես ադրբեջանական մի գյուղ կա: Եվ այդ գյուղը՝ սարերով բաժանված և հանրապետության սահմաններից դուրս Ադրբեջանին է հպատակվում: Ստեփանակերտի շրջանի կենտրոնում Մալիբեյլի գյուղը ենթարկվում է Շուշիի շրջանին: Ինչո՞ւ է այդպես: Քանի որ ադրբեջանական բնակչությունը ղեկավարելը հեշտ է ադրբեջանցիներին: Նույնիսկ անհարմար է բացատրել ինչո՞ւ և:

Սակայն մեկ այլ «ինչո՞ւ»-ին ոչ մեկը չի ցանկանում պատասխանել:

Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզը չի կարող իր սեփական հիմնական ժողովրդի հանրապետության հետ լինել՝ խորհրդային սոցիալիստական հանրապետության, հենց կողքում բարգավաճող:

Ինչո՞ւ այս օրինական, միակ արդարացի պահանջը վիրավորում է ոմանց շահերը, իսկ ոմանց ազգայնականություն է թվում: 1920 թվականին Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորումը խորհրդային կառավարության և կոմունիստական կուսակցության կողմից ընկալվեց որպես հսկայական նշանակության ինտերնացիոնալ միջոցառում, հայերի և ադրբեջանցիների միջև բարեկամությունը և գործակցությունը հաստատելու համար: Խոշոր մարքսիստ-լենինյան Գ.Կ. Օրջոնիկիձեն պնդեց, որ դա «մեծագույն կարևորության քայլ է, պատմական մի ակտ, որը մարդկության պատմութունում իր կրկնօրինակը չունի»:

Նույնպիսի կարծիքի էր Նարինանովը, Խորհրդային Ադրբեյջանի առաջին ղեկավարը:

Ինչո՞ւ ներկայումս պատմական, քաղաքական և ինտերնացիոնալ արդարությունը վերականգնելու մասին խոսող մարդիկ դատապարտվում և հետաանդովում են:

Լեռնային Ղարաբաղում ազգայնականությունը չկա: Ազգայնականությունը պետք է որոնել այնտեղ, որտեղ դա կա: Ազգայնականությունը մեր իրավունքների, ազգային իրավունքների և արժանապատվության ոտնակոխումն է: Ազգայնականությունը դա Ադրբեյջանի գիտությունների ակադեմիայի կողմից 25 հազար տալաքանակով հայ ժողովրդի մասին նողկալի լուտանքի հրատարակությունն է, ինչը բնորոշվում է այսպես. «Անգործունյա, նվաստ, գող, նախանձոտ, վախկոտ, օրենքին չհպատակվող, անտերի աղաղակ և իրարանցում բարձրացնող, անհավատարիմ, կեղծավոր, հայիողյանքներ սիրող, չար, իր տիրոջ թշնամի»:

Ընդհանուր առմամբ, նրանք ուրիշ մինչև գլուխ շատ ավելի բացասականի են մոտ, քան դրականի...»: (1963 թ. հրատարակություն, էջ 121):

Իսկ երբ մենք հարցրեցինք «ինչո՞ւ է այդ զրպարտանքը հրատարակվել», Ադրբեյջանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ ընկ. Ռաջաբովը պատասխանեց. «Մենք հրատարակել ենք համաշխարհային մշակույթի հուշարձան»:

Ահա համառոտ կերպով այն ամենի մասին, ինչ պատահեց մեր նամակից հետո: Մենք գրեցինք Լեռնային Ղարաբաղի տագնապալից վիճակի մասին ԽՍՀՄ կենտկոմին: Սակայն մեր նամակի քննարկումով զբաղվեցին նրանք, ովքեր պետք է պատասխանատվության կանչվեին:

Մենք հավատում ենք ԽՍՀՄ կենտկոմին և հույսով սպասում ենք մեր մարզի հարցի արդարացի քննարկմանը:

Նամակի հեղինակների անունից.  
**Բ.Ա. Ուլուբաբյան, Լ.Գ. Գապարյան, Գ.Ս. Ստեփանյան,  
Ս.Ս. Շաքարյան:**

*Թարգմանությունը ռուսերենից:*

**ԽՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՐԱՐ Լ.Ի. ԲՐԵՃԵՆԿԻՆ  
ԱԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՐԱՐ Վ.ՅՈւ. ՄԵՌՈՒՆՂՈՒԿԻՆ  
ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՐԱՐ Ա.Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ\***

Սեզ հետ ուս ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացնելու, Լեռնային Ղարաբաղի մեր ազգակիցներին Հայկական ԽՍՀ կազմում տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը՝ լիովին հանրկնկուն է լեռնյան մեծ սկզբունքների հետ:

Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսաձևով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով:

Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է՝ հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եվ քանի որ գոյություն ունի հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել խորհրդային Հայաստանից:

Հավատում ենք, որ Ղուբ կդառնաք այս հարցի լուծման նախաձեռնողները:

Սենք հանդված ենք, որ այս հարցի վճռումը էլ ավելի կամրապնդի մեր ժողովուրդների համագործակցությունը, իսկ սահմանների անհրաժեշտ ծշտումը մեկ անգամ ևս կապացուցի մեր ժողովուրդների եղբայրությունը և կապիտալիստական աշխարհին ցույց կտա, որ սոցիալիզմի երկնակամարի տակ իշխում է փոխըմբռնման ոգին, որ ազգամիջյան բոլոր հարցերը վճռվում են կոունուցիստական բարձր գիտակցությամբ:

Սենք երկյուղածությամբ ենք փայփայում մեր լինելիության հիմքերի հիմքը, մեր բարեկամությունը:

Սեր երկու ժողովուրդները հոգեբանորեն վաղուց են հասունացել հարցի նման լուծման համար: Ղեռ ավելին, մենք վստահ ենք, որ յուրաքանչյուր արդրեջանցի հոգու խորքում հանդված է հայ եղբայրների պահանջների արդարացիության մեջ: Սեր երկու ժողովուրդները հոգեբանորեն պատրաստ են հարցի նման լուծմանը, քանի որ խորհրդային կարգերի 50 տարիների ընթացքում մենք

---

\* Փաստաթղթի բովանդակությունից երևում է, որ այն գրվել է 1966 թ.:

դաստիարակվել ենք ինտերնացիոնալիզմի ոգով, եղբայրության ոգով:

Մենք արմատախիլ ենք արել ազգամիջյան հակակրանքներն ու նախախորհրդային շրջանի բացասական տրամադրությունները, և նման հարցերի վճռման ժամանակ պետք է հենվենք ոչ թե ինչ-որ մտացածին տարածայնությունների, այլ մեր կոմունիստական փոխընթերցման և անկեղծ համագործակցության վրա:

Մենք առավել քան համոզված ենք, որ այս հարցի լուծումը վստահելի ձեռքբերում է և խիստ ցանկալի կլիներ, որ այն համընկներ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման տարեկիցին:

**Ծանոթագրություն.** Կցվում են ԳԱ, Երևանի պետհամալսարանի, հայկական մանկավարժական, ռուսական մանկավարժական, արվեստեխնիկական, անասնաբուժական և անասնաբուծական ինստիտուտների, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի, գրողների և նկարիչների միությունների, «Հայաստան» և «Լույս» հրատարակչությունների, ռադիոյի, Պոլիմերների գիտահետազոտական և նախագծային ինստիտուտների կոլեկտիվների անդամների ստորագրությունները:

**Հավելված** - 1906 անձանց\* ստորագրությունների բնագրերը 106 էջի վրա և պատճենները 47 էջի վրա ուղարկվում են ընկ. ընկ. Ախունդովին և Քոչինյանին:

*ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թ. 1-2*

---

\* Ստորագրողների թվում են Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Հանո Սահյանը, Պարույր Սևակը և այլք.:

## В ЦК КПСС

30 сентября, 1966 г.

В соответствии с поручением Секретариата ЦК КПСС нами рассмотрено письмо группы деятелей науки и культуры Армянской ССР, адресованное XXIII съезду КПСС.

В письме ставится вопрос о возвращении Нагорного Карабаха и Нахичеванской АССР Армянской ССР. Авторы письма ссылаются на исторические факты и свое предложение обосновывают экономическими, политическими и этническими факторами.

В письме указывается общеизвестный исторический факт о том, что 46 лет тому назад правительство Азербайджанской ССР огласило декларацию о признании этих территорий нераздельными частями Армянской ССР, однако их фактическое присоединение замянулось.

По мнению авторов, возвращение вышеуказанных земель Армянской ССР будет способствовать дальнейшему укреплению братства и дружбы между народами, еще раз продемонстрирует торжество ленинской национальной политики.

Вопросы, поднятые в письме группой деятелей науки и культуры Армянской ССР, ставятся не впервые. С многочисленными аналогичными заявлениями и письмами в ЦК КПСС и ЦК КП Армении, особенно за последние годы, обращались большие группы ученых, творческих работников, представителей интеллигенции, рабочих, работников сельского хозяйства, студенчества и другие. Постановка этих вопросов получила широкий отклик и одобрение среди общественности республики. Разделяя подобные настроения, подавляющая часть населения Армянской ССР как в письменной, так и в устной форме активно ставят вопрос о возвращении Карабаха и Нахичевани Армянской ССР.

К этому следует добавить, что подобные настроения широко распространены и среди населения Нагорной Карабахской Автономной области, о чем свидетельствуют многочисленные письма, поступающие в ЦК КП Армении от различных групп трудящихся НКАО.

Внимательно изучив все аспекты этих вопросов и проанализировав сложившееся сейчас в республике положение, считаем необходимым доложить ЦК КПСС о следующем.

*Для армянского народа, как и для других народов, территориальные вопросы всегда имели жизненно-важное значение. Для него было*

*величайшей национальной трагедией отторжение Турцией западных областей Армении, составляющих более 2/3 территории Армении, которое в период Первой мировой войны сопровождалось массовым истреблением полутора миллионов армян. Именно этим следует объяснить болезненную реакцию населения республики на коварство турецкой дипломатии, пытающейся фальсифицировать историю и уйти от ответственности за геноцид и отторжение армянских земель\*.*

На протяжении длительного времени Компартия Армении ведет большую разъяснительную работу среди народа, объясняя внешнюю политику нашей партии и правительства, направленную на претворение в жизнь принципа мирного сосуществования между государствами и укрепление мира и дружбы между народами.

Настроение трудящихся свидетельствует о понимании ими правильности и мудрости внешней политики, проводимой Советским Правительством и Центральным Комитетом Коммунистической партии.

Однако, если доводы о нецелесообразности постановки вопросов об отторгнутых Турцией территориях в настоящее время воспринимаются народом с пониманием, то по вопросам, связанным с возвращением Карабаха и Нахичевани Армянской ССР, мы испытываем серьезные трудности.

Дело в том, что действительно территории Нагорного Карабаха и Нахичевани с древних времен были составными частями Армении.

Принадлежность Нагорного Карабаха и Нахичевани к Армении в прошлом никем под сомнение не ставилась. Лишь в 1918–1920 годах в период образования буржуазных государств Армении и Азербайджана и господства в них националистических партий дашнаков и мусавистов земли Нахичевани и Нагорного Карабаха стали объектами провокаций империалистических держав Запада и реакционных правящих кругов Турции.

После установления Советской власти в Азербайджане и в Армении, возникают реальные условия и возможности для справедливого разрешения этого, искусственно созданного, территориального вопроса и предпринимаются практические шаги в этом направлении.

---

\* Выделенный абзац документа свидетельствует, что власти Советской Армении продолжали выступать и в защиту Армянского вопроса. Выдвигая проблему Геноцида армян в Османской империи и захвата Турцией Западной Армении, руководство Армянской ССР смело ставит вопрос об ответственности Турции, по сути – вопрос возмещения последствий Геноцида.

Действительно, 1 декабря 1920 года, т.е. через день после установления Советской власти в Армении на торжественном заседании Бакинского Совета, приветствуя победу Советской власти в Армении, председатель Азербайджанского ревкома, видный революционный деятель т. Н. Нариманов огласил Декларацию Правительства Советского Азербайджана, в которой было сказано: “Правительства мусават и дашнаков, продавшись Антанте, превратили народ в слепое орудие в руках последней и в своих империалистических вождениях направляли один народ на другой, создав Карабахский, Зангезурский, Нахичеванский и другие территориальные вопросы, которые не могли быть разрешены усилиями дашнако-мусаватистской реакции.

Советский Азербайджан [...] объявляет, что опыные территориальные вопросы не могут стать причиной взаимного кровопускания двух вековых соседних народов: армян и мусульман; территории Зангезурского и Нахичеванского уездов являются нераздельной частью Советской Армении, а трудовому крестьянству Нагорного Карабаха предоставляется полное право самоопределения [...]” (газета “Коммунист” - орган Центрального и Бакинского Комитетов Азербайджанской Коммунистической партии большевиков, от 2 декабря 1920 г.).

В резолюции, принятой на этом заседании указывается: “Торжественное заседание Бакинского Совета, Азревкома со всеми рабочими и Красноармейскими организациями, с чувством неподдельной пролетарской радости, отмечая факт победы Советской революции в Армении, приветствует и целиком одобряет историческую декларацию, оглашенную т. Н. Наримановым, которая, устраняя раз и навсегда вековые межнациональные распри и кровопролитные войны между Арменией и мусульманским миром открывает новую страницу счастливой жизни в истории народов Закавказья и всего Востока” (там же).

Как явствует из этой Декларации, территория Нахичеванского уезда была безоговорочно признана нераздельной частью Советской Армении. Что касается Нагорного Карабаха, то передача этой территории Армении была впоследствии закреплена правительственным декретом 12 июня 1921 года, опубликованным за подписью председателя Совнаркома Армянской ССР А. Мясникова, в котором было сказано, что на основании Декларации Ревкома Советской Социалистической Республики Азербайджана объявляется, что Нагорный Карабах опынее является неотъемлемой частью Советской Социалистической Республики Армении.

Декларация Азербайджанского Ревкома встретила самое горячее одобрение трудящихся Закавказья, Компартии Армении и особенно армянского народа.

Эти решения были широко обнародованы в печати и провозглашены перед всем миром, как образец блестящего решения национального вопроса, возможного только в условиях социализма.

Многие видные деятели Коммунистической партии Советского Союза, С.М. Киров, Г.К. Орджоникидзе и другие неоднократно как в публичных выступлениях, так и на заседаниях Кавбюро РКП (б) одобрили декларацию Азербайджанского Ревкома и безоговорочно высказывались за оставление Нахичевани и Карабаха в составе Армении.

В дальнейшем эти решения остались невыполненными.

Что касается Нахичевани, то это произошло по настоянию Турции, правящие круги которой преследовали в Закавказье свои собственные панпоркистские цели, направленные против интересов народов Советских республик.

Именно в результате вмешательства Турции в дела советских республик и вопреки позиции Советского Азербайджана и Советской России, Нахичеванская область не была включена в состав Армянской ССР.

В тот период, в 1921 году молодая Советская Россия, в силу ряда обстоятельств внутреннего и международного порядка (Кронштадтский мятеж эсеров, опасность перехода Турции в лагерь западного империализма, опасность высадки нового десанта Антанты в Батуми и т.д.) вынуждена была согласиться с настоянием Турции о передаче Нахичеванской области под протекторат Азербайджана.

Однако следует отметить, что даже по этому договору юридически Нахичеванская область не была включена в состав Азербайджана, а лишь передана в качестве автономной территории "под покровительство" Азербайджана, ибо и тогда было совершенно очевидно, что территориально и экономически Нахичеванская область, находясь в центре Армении и составляя ее неразрывную часть, не могла быть включена в состав Азербайджана.

Что касается включения Нагорного Карабаха в состав Армянской ССР, то это также не было осуществлено и Нагорный Карабах, несмотря на свое преобладающее армянское население (по данным сельскохозяйственной переписи Азербайджана 1924 г. армяне в НКАО составляли 94,4% населения), был односторонне включен в состав



Азербайджана на основе единственного довода, а именно, довода об экономическом тяготении населения Нагорного Карабаха к городу Баку.

После передачи Нагорного Карабаха Азербайджанской ССР прошло более 40 лет. В момент принятия решения не было никаких правовых и политических сомнений насчет принадлежности Нагорного Карабаха Армении. В условиях тогдашней крайней экономической отсталости Армении такой вопрос, как экономическое тяготение к Баку, мог бы быть поставлен, но не мог быть главным при решении этого вопроса, ибо не только Нагорный Карабах, но и вся Армения тогда экономически тяготела к Баку и Тбилиси, ввиду ее крайней экономической отсталости.

Ныне этот единственный довод снят: во первых, потому что Советская Армения за годы Советской власти, благодаря бескорыстной помощи великого русского народа, стала одной из передовых индустриальных республик Советского Союза и теперь вполне в состоянии обеспечить успешное экономическое развитие Нагорного Карабаха;

во-вторых, потому что сороколетнее пребывание Нагорного Карабаха в составе Азербайджана дает право говорить о том, что это не обеспечило должного экономического и культурного развития этого края.

Статистика указывает, что за эти годы население Карабаха не увеличилось. Более того, армянское население области в течение последних тридцати трех лет (1926 и 1959 гг.) уменьшилось. Если в 1926 году в Нагорном Карабахе насчитывалось 111. 694 армянина, то в 1959 году насчитывалось 110.053 армянина.

Население Карабаха и ныне состоит на 85% из армян и именно на этом основании за ним признана национальная автономия. Территориально область примыкает к Армении, являясь ее органическим продолжением.

Таким образом, основные доводы при решении любого территориального вопроса говорят о правомерности постановки вопроса о присоединении Нагорного Карабаха к Армянской ССР.

Мнение о том, что не стоит ставить вопроса о передаче Карабаха от Азербайджана к Армении, так как обе территории советские, нельзя считать обоснованным, поскольку если в политическом отношении это действительно все равно, то не все равно насколько успешно в культурном и экономическом отношении развивается тот или иной советский

край, в котором живут советские люди. С передачей Карабаха Армении решается и ряд других важнейших вопросов:

а) вполне понятно, что армянская социалистическая культура, т.е. культура коренного населения Карабаха может значительно лучше развиваться в общей системе культуры Армянской ССР. Искусство, печать, радио, культурно-просветительные учреждения, художественная самодеятельность Карабаха развивались бы более полноценно в общении с армянской культурой, тогда как ныне даже отдельные гастрольные группы из Армении в Карабахе являются редким явлением;

б) для развития среднего и высшего образования населения Карабаха Армения имеет больше возможностей в смысле обеспечения учительскими и другими кадрами. Юношья и девушки Карабаха, окончившие средние школы получают больше возможности продолжать образование на родном языке.

Передача Нагорного Карабаха устранил ненормальность создавшегося положения, когда малочисленный армянский народ в условиях Советского Союза имеет две государственности – одну Союзную Армянскую республику и одну, прилегающую к ней же автономную национальную область, но в составе другой союзной республики.

На основе вышеизложенного и учитывая нынешнюю обстановку в республике, считаем крайне необходимым рассмотреть вопросы, связанные с возвращением Нахичевани и Нагорного Карабаха Армянской ССР.

При рассмотрении поднятых вопросов, мы исходим из основной главной задачи обеспечения дальнейшего укрепления братской дружбы между народами Советского Союза и, в частности, между армянским и азербайджанским народами.

Нерешенность этого вопроса создает серьезные затруднения в деятельности партийных органов и проведении политико-воспитательной работы среди широких слоев населения республики.

По нашему мнению, было бы целесообразно рассмотреть и решить положительно вопрос передачи Нахичевани и Нагорного Карабаха Армянской ССР, при этом Нахичеванская АССР могла бы сохранить свою автономию в составе Армянской ССР, на территории которой она находится.

Однако, если возвращение Нахичевани Армянской ССР на современном этапе будет сопряжено с известными сложностями, то возвращение Нагорного Карабаха Армянской ССР не связано с какими-либо трудностями и может быть осуществлено безболезненно.

Опасения возможной нежелательной реакции лишены основания, так как вопрос ставится не об отторжении какой-либо части территории Азербайджанской ССР, а о слиянии автономной национальной области с союзной республикой, коренное население в которых однородно — армянское.

Положительное решение этого вопроса будет иметь исключительно важное политическое значение и явится новым свидетельством торжества мудрой национальной политики нашей партии, Ленинского Центрального Комитета и Политбюро ЦК КПСС.

Секретарь ЦК КП Армении **А. Кочинян**  
Председатель Совета Министров Армянской ССР **Б. Мурадян**

*НАА, ф.1, оп. 46, д. 65а, л. 1-9. Машинопись.*

№ 10<sup>1</sup>

**ԽՍՀԿ ԿԵՆՏՐՈՆ**

**30 սեպտեմբերի, 1966 թ.**

ԽՍՀԿ կենտրոնի քարտուղարության հանձնարարությանը քննարկվել է Հայկական ԽՍՀ գիտության և մշակույթի մի խումբ գործիչների՝ ԽՍՀԿ XXIII համագումարին հասցեագրված նամակը:

Նամակում բարձրացվում է Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանի ԻԽՍՀ-ը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը: Նամակի հեղինակները հենվում են պատմական փաստերի վրա և իրենց առաջարկությունը հիմնավորում տնտեսական, քաղաքական և էթնիկական գործոններով:

Նամակում նշվում է հանրահայտ պատմական փաստն այն մասին, որ 46 տարի առաջ Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունը հռչակեց այդ տարածքները Հայկական ԽՍՀ անբաժանելի մաս ճանաչելու մասին դեկլարացիան, սակայն դրանց փաստացի միացումը ձգձգվեց:

Հեղինակների կարծիքով, վերոհիշյալ հողատարածությունների վերադարձը Հայկական ԽՍՀ-ին կնպաստի ժողովուրդների եղբայրության և բարեկամության հետագա ամրապնդմանը, մեկ անգամ ևս կցուցադրի լեռնիյան ազգային քաղաքականության հաղթանակը:

Հայկական ԽՍՀ գիտության և մշակույթի մի խումբ գործիչների նամակում շոշափված հարցերն առաջին անգամ չէ, որ առաջադրվում են: Համանման բազմաթիվ նամակներով ու դիմումներով, հասկապես վերջին տարիներին, ԽՍՀԿ կենտկոմ և ՀԿԿ կենտկոմ են դիմել մեծ խումբ գիտնականներ, ստեղծագործողներ, մտավորականության ներկայացուցիչներ, բանվորներ, գյուղատնտեսության աշխատողներ, ուսանողներ և ուրիշներ: Այդ հարցերի առաջադրումը լայն արձագանք է գտել և արժանացել հանրապետության հասարակության հավանությանը: Բաժանելով նման տրամադրությունները, Հայկական ԽՍՀ բնակչության ճնշող մեծամասնությունն ինչպես զրավոր, այնպես էլ բանավոր ակտիվորեն առաջադրում են Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը: Սրան հարկ է ավելացնել, որ նման տրամադրությունները լայնորեն տարածվում են նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության շրջանում, ինչի մասին են վկայում ԼԴԽՍ-ի աշխատավորության տարբեր խմբերից ՀԿԿ կենտկոմում ստացվող բազմաթիվ նամակները:

Ուշադրությամբ ուսումնասիրելով այս հարցերի բոլոր ապեկանները և վերլուծելով ներկայումս հանրապետությունում ստեղծված իրավիճակը, անհրաժեշտ ենք համարում ԽՍՀԿ կենտկոմին տեղեկացնել հետևյալի մասին.

*Հայ ժողովրդի, ինչպես և մյուս ժողովուրդների համար տարածքային հարցերը միշտ էլ կենսական կարևոր նշանակություն են ունեցել: Սեր ժողովրդի համար ազգային մեծագույն ողբերգություն է եղել Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքի ավելի քան 2/3 կազմող Արևմտյան մարզերի բռնազավթումը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուղեկցվել է մեկ և կես միլիոն հայերի զանգվածային կոտորածներով: Հենց սրանով պետք է բացատրել հանրապետության բնակչության հիվանդագին արձագանքը թուրքական դիվանագիտության խաղաղվանքներին, որը փորձում է նենգափոխել պատմությունը և խուսափել եղեռնի և հայկական հողերի բռնազավթման պատասխանատվությունից:*

---

\* Փաստաթղթի ընդգծված այս հատվածը վկայում է, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները շարունակում էին հանդես գալ նաև Հայկական հարցի պաշտպանության դիրքերից: Առաջադրելով Հայոց ցեղասպանության և Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների խնդիրը մասին, ՀԽՍՀ ղեկավարությունը համարձակորեն դնում է Թուրքիայի պատասխանատվության հարցը, փաստորեն՝ հանդես է գալիս պահանջատիրության դիրքերից:

Հայաստանի կոմկուսը երկար ժամանակ է, ինչ բացատրական մեծ աշխատանք է տանում ժողովրդի շրջանում, պարզաբանելով մեր կուսակցության և կառավարության արտաքին քաղաքականությունը՝ որն ուղղված է պետությունների միջև խաղաղ գոյակցության սկզբունքների կենսագործմանը, ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ամրապնդմանը:

Աշխատավորների տրամադրությունները վկայում են, որ նրանք ըմբռնումով են ընկալում խորհրդային կառավարության և կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի վարած ճիշտ և իմաստուն արտաքին քաղաքականությունը:

Սակայն եթե Թուրքիայի կողմից բռնազավթված տարածքների մասին ներկայումս հարց բարձրացնելու աննպատակահարմարության փաստարկները ժողովուրդն ընդունում է ըմբռնումով, ապա Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հետ առնչվող հարցերում մենք լուրջ դժվարություններ ենք կրում:

Խնդիրն այն է, որ իրականում Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի տարածքները հնուց ի վեր հանդիսացել են Հայաստանի անբաժանելի մասը:

Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին պատկանելու հարցը անցյալում որևէ մեկի կողմից կասկածի չի ենթարկվել: Միայն 1918–1920 թվականներին Հայաստանի և Ադրբեջանի բուրժուական պետությունների կազմավորման և դրանցում դաշնակցական և մուսավաթական ազգայնամոլական կուսակցությունների տիրապետության շրջանում Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հողատարածքները ստորանքների առարկա են դարձել Արևմուտքի իմպերիալիստական տերությունների և Թուրքիայի հետադեմ ղեկավար շրջանների համար:

Ադրբեջանում և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իրական հնարավորություններ են ստեղծվում արհեստականորեն հրահրված տարածքային այդ հարցի արդարացի լուծման համար և ձեռնարկվում են գործնական քայլեր:

Իսկապես, 1920 թվականի դեկտեմբերի 1-ին, այսինքն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հաջորդ օրը, Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում, ողջունելով խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, Ադրբեջանի հեղկոմի նախագահ, ականավոր հեղափոխական գործիչ Ն. Նարինանովը հրապարակել է խորհրդային Ադրբեջանի կառավարության հռչակագիրը, որում ասված է. «Անտանտին ծախված մուսավաթի և դաշնակցների կառավարությունները ժողովուրդներին կույր գործիք էին

դարձրել վերջիններին ծեղքին և իրենց իմպերիալիստական նկրտումներով ժողովուրդներին հրահրում էին մեկ-մեկու դեմ, ստեղծելով Ղարաբաղի, Ջանգեզուրի, Նախիջևանի և այլ տարածքային հարցերը, որոնք դաշնակ-մուսավաթական ռեակցիայի ջանքերով լուծվել էին կարող:

Խորհրդային Ադրբեջանը [...] հայտարարում է, որ այսուհետև տարածքային հարցերը չեն կարող պայունահեղության պատճառ դառնալ երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև, Ջանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասն են, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը լիակատար ինքնորոշման իրավունք է տրվում [...]» (Ադրբեջանի կոմունիստական բոլշևիկյան կուսակցության կենտկոմի և Բաքվի կոմիտեի օրգան «Կոմունիստ» թերթ, 2 դեկտեմբերի 1920 թ., № 178):

Այդ նիստում ընդունված բանաձևում նշվում է. «Բաքվի Խորհրդի, Ադրիեդկոմի հանդիսավոր նիստը բանվորական և կարմիրբանակային բոլոր կազմակերպությունների հետ, անկեղծ պրոլետարական զգացումով, նշելով Խորհրդային հեղափոխության հաղթանակը Հայաստանում, ողջունում և ամբողջությամբ պաշտպանում է ընկ. Ն. Նարիմանովի հրապարակած պատմական հռչակագիրը, որը մեկընդմիջտ վերացնելով Հայաստանի և մուսուլմանական աշխարհի միջև դարավոր ազգամիջյան խժոժություններն ու պայունահեղ պատերազմները, նոր երջանիկ կյանքի էջ է բացում Անդրկովկասի և ամբողջ Արևելքի ժողովուրդների պատմության մեջ» (նույն տեղում):

Ինչպես պարզ է դառնում այս հռչակագրից, Նախիջևանի գավառի տարածքն անառարկելիորեն ճանաչվում է որպես Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այդ տարածքի հանձնումը Հայաստանին հետագայում վավերացված է 1921 թվականի հունիսի 12-ի դեկրետով, հրապարակված Հայկական ԽՍՀ ժողովմխորհի նախագահ Ա. Սյանիկյանի ստորագրությամբ, որում ասվում էր, որ Լեռնային Ղարաբաղը այսուհետև Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասն է:

Ադրբեջանի հեղկոմի հռչակագիրը ջերմ հավանություն գտավ Անդրկովկասի աշխատավորների, Հայաստանի կոմկուսի և հասկապես հայ ժողովրդի կողմից:

Այդ որոշումները լայնորեն տարածվեցին մամուլում և աշխարհով մեկ հռչակվեցին որպես ազգային հարցի փայլուն լուծման օրինակ, որը հնարավոր էր միայն սոցիալիզմի պայմաններում:

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ակադեմիկոս շատ գործիչներ՝ Ս.Ս. Կիրովը, Գ.Կ. Օրջոնիկձեն և ուրիշներ բազմիցս, ինչպես հրապարակային ելույթներում, այնպես էլ ՌԿ(բ)Կ կազմյուրոյի նիստերում հավանություն են տվել Ադրբեջանի հեղկոմի հռչակագրին և անվերապահորեն արտահայտվել Նախիջևանն ու Ղարաբաղը Հայաստանի կազմում թողնելու օգտին:

Հետագայում այդ որոշումները չիրականացվեցին:

Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա դա կատարվեց Թուրքիայի անդամը, որի ղեկավարող շրջաններն Անդրկովկասում հետաանրում էին իրենց սեփական պանթուրքական նպատակները՝ ընդդեմ Խորհրդային հանրապետությունների շահերի:

Հենց Խորհրդային հանրապետությունների գործերին Թուրքիայի միջամտության հետևանքով և հակառակ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշման, Նախիջևանի մարզը չընդգրկվեց Հայկական ԽՍՀ կազմի մեջ:

Այն ժամանակ 1921 թվականին, երիտասարդ Խորհրդային Ռուսաստանը, ներքին և արտաքին բնույթի մի շարք հանգամանքների պատճառով (Էսեռների կրոնշտադտյան խռովույունը, արևմտյան իմպերիալիզմի ճամբարին Թուրքիայի միանալու վտանգը, Բաթումում Անտանտի նոր դեսանտի ակհանման վտանգը և այլն) հարկադրված եղավ համաձայնել Նախիջևանի մարզն Ադրբեջանի հովանավորության ներքո թողնելու մասին Թուրքիայի պահանջի հետ:

Սակայն հարկ է ընգծել, որ անգամ այդ պայմաններում Նախիջևանի մարզը իրավաբանորեն չի ընդգրկվել Ադրբեջանի կազմում, այլ սոսկ հանձնվել է որպես ինքնավար տարածք՝ Ադրբեջանի «հովանավորության» ներքո, քանզի այն ժամանակ ակնհայտ էր, որ տարածքային և տնտեսական տեսակետից Նախիջևանի մարզը, գտնվելով Հայաստանի կենտրոնում և նրա անբաժանելի մասը կազմելով, չէր կարող միացվել Ադրբեջանին:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելուն, ապա այն ևս չիրականացվեց և Լեռնային Ղարաբաղը, չնայած հայ բնակչության գերակշռությանը (1924 թ. Ադրբեջանում անցկացված գյուղատնտեսական մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ-ում հայերը կազմում էին բնակչության 94,4 տոկոսը),

միակողմանիորեն մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ, հիմք ունենալով այն միակ փաստարկը՝ թե Լեռնային Ղարաբաղի բնակչությունը տնտեսապես հակված է դեպի Բայրուն:

Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ին հանձնելուց անցել է 40 տարի: Որոշման ընդունման պահին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու վերաբերյալ իրավական և քաղաքական կասկածներ չկային: Այն ժամանակվա Հայաստանի տնտեսական ծայրահեղ հետամնացության պայմաններում կարող էր առաջադրվել դեպի Բայրու տնտեսական հակվածության հարցը, սակայն այդ խնդրի լուծման համար այն գլխավորը լինել չէր կարող, քանզի ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև ամբողջ Հայաստանն այն ժամանակ տնտեսապես հակված էր դեպի Բայրու և Թբիլիսի, նկատի ունենալով նրա տնտեսական ծայրահեղ հետամնացությունը:

Ներկայումս այդ միակ փաստարկը վերացված է. նախ՝ որովհետև խորհրդային իշխանության տարիներին խորհրդային Հայաստանը ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնության շնորհիվ դարձել է խորհրդային Միության ամենաառաջավոր ինդուստրիալ հանրապետություններից մեկը և այժմ լիովին ի վիճակի է ապահովել Լեռնային Ղարաբաղի տնտեսական հաջող զարգացումը:

Երկրորդ՝ որովհետև Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու չորս տասնամյակների փորձ իրավունք են տալիս անդելու, որ չի ապահովվել երկրամասի տնտեսական և մշակութային անհրաժեշտ զարգացումը:

Վիճակագրությունը փաստում է, որ այդ տարիներին Ղարաբաղի բնակչությունը չի աճել: Ավելին՝ մարզի հայ բնակչության թվաքանակը վերջին երեսուներեք տարիների (1926–1959 թթ.) ընթացքում նվազել է: Եթե 1926 թվականին Լեռնային Ղարաբաղում ապրում էին 111.694 հայեր, ապա 1959 թվականին նրանց թիվը 110.053 էր:

Ներկայումս էլ Ղարաբաղի բնակչության 85 տոկոսը հայեր են և հենց դրա հիման վրա է ճանաչվում նրանց ազգային ինքնավարությունը: Տարածքային առումով մարզը կից է Հայաստանին, կազմելով նրա օրգանական շարունակությունը:

Այսպիսով, տարածքային ցանկացած հարցի լուծման հիմնական փաստարկները վկայում են՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցադրման օրինաչափության մասին:

Կարծիքներն այն մասին, որ չարժե առաջադրել Ղարաբաղը Ադրբեջանից Հայաստանին հանձնելու հարցը, քանի որ երկու



տարածքներն էլ խորհրդային են, հիմնավորված համարել չի կարելի, քանզի, եթե քաղաքական առումով դա իսկապես միևնույնն է, ապա միևնույնը չէ այն, թե մշակութային և տնտեսական առումով ինչպիսի հաջողությամբ է զարգանում այս կամ այն խորհրդային երկրամասը, որտեղ ապրում են խորհրդային մարդիկ: Ղարաբաղը Հայաստանին հանձնելով, լուծվում են նաև մի շարք այլ կարևորագույն հարցեր:

ա) Միանգամայն հասկանալի է, որ հայկական սոցիալիստական մշակույթը, այսինքն՝ Ղարաբաղի հիմնական բնակչության մշակույթը զգալիորեն ավելի լավ կարող է զարգանալ Հայկական ԽՍՀ մշակույթի ընդհանուր համակարգում: Ղարաբաղի արվեստը, մանուկը, ռադիոն, մշակութային-լուսավորական հիմնարկները, գեղարվեստական ինքնագործունեությունն առավել լիարժեք կզարգանային հայկական մշակույթի հետ շփվելով, այն դեպքում, երբ Հայաստանից Ղարաբաղ մեկնող առանձին հյուրախաղային խմբերն անգամ այժմ հազվագյուտ երևույթ են:

բ) Ղարաբաղի բնակչության միջնակարգ և բարձրագույն կրթության զարգացման համար Հայաստանն ավելի մեծ հնարավորություններ ունի՝ ուսուցչական և այլ կադրերով ապահովելու իմաստով: Միջնակարգ դպրոցներն ավարտած Ղարաբաղի պատանիներն ու աղջիկները մայրենի լեզվով կրթությունը շարունակելու ավելի լայն հնարավորություններ կստանան:

Լեռնային Ղարաբաղի հանձնումը կվերացնի այն անբնական իրավիճակը, երբ փոքրաքանակ հայ ժողովուրդը խորհրդային Միության պայմաններում ունի երկու պետականություն՝ մի միութենական Հայկական Հանրապետություն, մի՝ իրեն կից ինքնավար ազգային մարզ, սակայն արդեն մեկ այլ միութենական հանրապետության կազմում:

Վերոհիշյալի հիման վրա, և ի նկատի ունենալով հանրապետության ներկա իրավիճակը, անհրաժեշտ ենք համարում Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու հարցերի քննարկումը:

Բարձրացված հարցերի քննարկման ժամանակ մենք էլ նում ենք խորհրդային Միության ժողովուրդների և, մասնավորապես՝ հայ և ադրբեջանական ժողովուրդների եղբայրական բարեկամության հետագա ամրապնդման ապահովման գլխավոր հիմնարար խնդրից:

Այս հարցը չվճռելը լուրջ դժվարություններ է ստեղծում կուսակցական մարմինների գործունեության և հանրապետության

բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական դաստիարակչական աշխատանքների իրականացման համար:

Սեր կարծիքով, նախառակահարմար կլիներ քննարկել և դրական լուծել Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին հանձնելու հարցը, ընդամին, Նախիջևանի ԻԽՍՀ կարող է իր ինքնավարությունը պահպանել Հայկական ԽՍՀ կազմում, որի տարածքում էլ գտնվում է:

Սակայն, եթե ներկա փուլում Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը կապված է հայտնի բարդությունների հետ, ապա Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը չի կապված որևէ ղօժկարությունների հետ և կարող է իրականացվել անցավագին:

Հնարավոր անցանկալի արձագանքների մասին մտավախություններն հիմնադրուկ են, քանի որ հարց է դրվում ոչ թե Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի ինչ-որ մասի օտարման, այլ ինքնավար ազգային մարզը միութենական հանրապետության հետ միաձուլելու մասին, որոնց հիմնական բնակչությունը միատարր՝ հայկական է:

Այս հարցի դրական լուծումը քաղաքական բացառիկ կարևոր նշանակություն կունենա և կդառնա մեր կուսակցության, լեռնյան կենտրոնական կոմիտեի և ԽՄԿԿ կենտկոմի քաղքյուրոյի իմաստուն ազգային քաղաքականության մի նոր վկայությունը:

ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար՝ *Ա. Քոչինյան*  
ՀԽՍՀ Սինիստրների խորհրդի նախագահ՝ *Բ. Մուրադյան*

*ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թ. 1-9: Թարգմանություն ռուսերենից:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴՈՒՆ,  
ԿՈՒԿԱՐՈՒԹՅԱՆԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ,  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ\***

Թանկագին հայրենակիցներ.

Այս նամակով Ձեզ է դիմում Ղարաբաղի աղետոյալ ժողովուրդը, որի վիճակն այժմ ավելի ծանր է, քան երբևիցե եղել է խանական բռնակալների ու նուսավաթականների ժամանակ:

Սեզանից ոչ ոք տանից ելնելիս վստահ չէ, որ երեկոյան տուն կվերադառնա: Անարգվում է մեր պատիվը, բռնադատվում են մեր իրավունքներն ու արժանապատվությունը: Ոչ ոք չի լսում մեր բողոքի ձայնը, ոչ մեկը ականջ չի դնում մեր աղերսանքին: Հարյուրավոր դիմումներ ենք հղել Մոսկվա՝ կենտրոնական Կառավարությանը, Ադրբեջանի ղեկավարությանը և այդ բոլորի պատասխանը եղել է կամ քաղ լռությունը, կամ մոլի հալածանքը մեր և մեր զավակների հանդեպ: Այսօր տասնյակներով ղարաբաղցիներ ապրիհի բանտերն են լցված և կամ հեռացված աշխատանքից: Սեզ հասցրել են այնտեղ, որ մենք մեր ավանդական հողը լքել և դարձել ենք տարագիր և անհայրենիք մի ժողովուրդ: Հոշոտում են մեր զավակներին և հոշոտողները դրանով չեն բավականանում, արժում և անարգում մեր դիակները և ստիպում են մեզ, որ մենք էլ դիմենք հանցագործության:

Տասնյակ դեպքերից միայն մի քանիսը թվենք, որպեսզի պատկերացնեք, թե ինչ է կատարվում Ղարաբաղում:

Երկու տարի առաջ Ադրբանի կենտրոնում օրը ցերեկով սպանեցին մի երիտասարդի՝ Ավանեսյանին: Երբ չարագործ աղբրեջանցուն հարցրեցին, թե ինչու է զնդակ արձակել անմեղ անցորդի

---

\* Արցախահայրության այս տագնապալի կոչը եզակի է իր տեսակի մեջ: Մինչ այն արցախահայրությունն ուղղակի խնդրանքով չի դիմել Խորհրդային Հայաստանի հայությանը:

Կոչը հրապարակվել է «Յառաք» (Փարիզ), 1967 թ. սեպտեմբերի 1, «Ազրակ» (Բեյրութ), 1967 թ. սեպտեմբերի 8, «Ազատ Օր» (Աթենք), 1967 թ. սեպտեմբերի 9, «Ալիք» (Թեհրան), 1967 թ. սեպտեմբերի 13: Կոչը ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել նաև Արևմտյան Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտի «Պոստ» շաբաթաթերթում, 1967 թ. սեպտեմբերի 20:

վրա, նա լկտիաբար պատասխանեց. «Ծոխ վրա էի նշան բռնել, գնդակս նրան առավ: Ինչքան է տուգանքը, կարող եմ վճարել»:

Տարի ու կես առաջ Շուշիի կուսակցական շրջկոմի շենքի առաջ երկու ադրբեջանցի կանգնում են դարաբաղցի կոմունիստ գյուղատնտեսի դիմաց և ասում. «Այս բրաբեին մի հայի պիտի սպանեիր, դու ես հանդիպել»: Եվ տեղնուտեղը գնդակահարելով սպանում են: Մինչև այսօր դահիճն իր արժանի պատիժը չի ստացել, որովհետև նա Ադրբեջանի դատախազի ազգականն է և Ղարաբաղի մարզսովետի գործկոմի նախագահի տեղակալ Բայլարովի եղբայրը:

Մարտունու սովխոզի տեղամասի պետ Գրիշա Սողոմոնյանին սպանել, զգել են ճանապարհին:

Նորաշենի երկու երիտասարդ տրակտորիստների գիշերը վարի ժամանակ գնդակահարել են: Եվ այս բոլոր չարագործությունների հեղինակները չեն «հայտնաբերվել», որովհետև ադրբեջանցիներ են:

Մարտունու սովխոզի տեղամասի պետ Բենիկ Մովսիսյանի տասնամյա տղային սպանել են, զազանաբար հոշոտել և դիակը պղծել: Այս անգամ ևս հանցագործները «չէին հայտնաբերվի», եթե մարդկանց հանբերությունն արդեն սպառված չլիներ, և եթե զոհի տերերն իրենք բռնած չլիներին չարագործների հետքը:

Չարագործների ձերբակալության առաջին իսկ օրվանից սրանց հարազատները դատարանի դահլիճում ու բակում, մարզկոմի շենքի առաջ և քաղաքի փողոցներում բացեիբաց, անպատիժ հայտարարում էին, որ իրենք ոսկով փակելու են դատավորների բերանները, իսկ զոհված երեխայի հարազատները խոսքով և գրով, նամակներով ու հեռագրերով դատարանին ու մարզի ղեկավարությանը, Բաքվի ու Մոսկվայի ղեկավար բոլոր օղակներին հասկացնում էին, որ գլխավոր չարագործը պետք է դատապարտվի գնդակահարության, ապա թե ոչ՝ իրենք են կատարելու նրա դատաստանը: Այս հիմքի վրա քանի-քանի միջադեպեր են եղել դատարանի դահլիճում և շենքի բակում: Բաքվի ու մարզի ղեկավարությունը, գիտակցաբար չունկնորելով այս ամենին, բանը հասցրեց կազմակերպված սադրանքի, կաշառված դատավորն իր կեղտերը ծածկելու ուրիշ ելք չգտավ, քան վճիռը դատարանի դահլիճից հանել հրապարակ, կարդալ բացթոյա, երկարատև քաշքշուկից հավասարակշռությունը կորցրած ամբոխի առաջ, շիկացած մթնոլորտում: Եվ ինչ, չարագործության կազմակերպչին՝ մարզի ամբողջ բնակչության զայրույթի և ատելության առարկա-

յին տաս, տարվա ազատագրություն միայն և հինգ տարվա պայմանական [...]

Անարդարության դեմ զարյացած ժողովրդի վրա կեղտաքրի շիթեր ուղղեցին հորշեջ մեքենաներից: Անհույս կատարությունից իրեն դես ու դեն մետող տուժածի՝ զոհի հոր վրա կրակ բացեց պահակախումբը: Ապա մահաբեր զենքերից կրակներ տեղացին վիրավոր հորն օգնության հասնող հարազատների վրա, 12 հոգի մահացու վիրավորվեցին և այժմ հայտնի էլ չէ, թե որտեղ են և կա՞ն արդյոք: Եվ այսքանից հետո միայն զայրությանց եռացող ամբոխը հարձակվեց չարագործների վրա, սպանեց նրանց և դիակիզեց:

Ադրբեջանի շովինիստ ղեկավարները շատ լավ էին պլանավորել այս վախճանը և չուշացան վրա հասնել և եզրափակել ամեն ինչ: Մինիստրների խորհրդի նախագահ, Լեռնային Ղարաբաղի հայրենասերների հետ իր հատուկ հաշիվներն ունեցող Ալիխանովը Ստեփանակերտ հասնելուն պես հավաքեց բոլոր ղեկավարներին, հայտարարեց, թե մարզում կա հակասովետական նացիոնալիստական կազմակերպություն և այդ կազմակերպության գործն է այդ ցեղակիցների դատաստանը, թե այս բոլորը նացիոնալիզմ է, հրահրված Սովետական Հայաստանի կողմից: Եվ մարզից հեռանալուց առաջ նա հասցրեց անձամբ, ազգային շուքով, մոլլաների ուղեկցությամբ թաղել չարագործների դիակները: Ապա եկավ կուսակցական կենտկոմի քարտուղար Սխունդովը և միայն իրեն հատուկ խորամանկությամբ հակացավ, որ Ալիխանովը մերկացրել է իրենց քաղաքական խաղը: Ինչու՞ նացիոնալիզմ, երբ նրա տուտը քաշելիս Մոսկվայից եկածները կարող են պարզել, թե որտեղից է գալիս իսկական նացիոնալիզմը:

«Այստեղ ոչ մի նացիոնալիզմ չկա, – մարզային կուսակցական ակտիվի առաջ հայտարարեց ելքը գտած Սխունդովը: – Սա միայն երկու ընտանիքների թշնամանք է»:

Եվ այնուամենայնիվ, վերջում դահլիճի վրա բռունցք թափ տպով զգուշացրեց. «Մոռացե՛ք Հայաստանին միանալու ձեր պահանջը: Գիտցե՛ք, որ Լեռնային Ղարաբաղը եղել է, կա ու կմնա Ադրբեջանի անբաժանելի մասը»:

Ոչ ոք զլխից ձեռք չի քաշել, որ վեր կենա ու հակառակը պնդի [...] Սխունդովի գնալուց անմիջապես հետո սկսվեցին մարզի և հատկապես Ստեփանակերտի այն օրերը, որոնք հիշեցնում են 1918–1920 թթ. ահավոր ժամանակները:

Բայրվից անմիջապես եկող միլիցիայով և պետական անվտանգության այլազգի զինվորներով լցվել, պաշարվել է մարզի կենտրոնը, չդադարող հարցաքննությունների ու հետապնդումների միջոցով ստորացվում են նրա բնակիչները: Ամեն օր բանտ են քշվում ազնիվներն ու համարձակները: Պաշտոնագրվելու ու հալածվում են կանայականությունների դեմ բողոքողները: Մարզի հայության ճակատագրի տնօրեններ են կարգվում հին ու նոր դավաճանները, ուրացողներն ու մատնիչները: Այս բոլորի վերջը չի երևում: Իսկ եթե երևում է, ապա՝ դա վերջն է ամեն հայկականի, որ կենաց ու մահու գոտենարտերում պաշտպանվել ու պահպանվել է մինչև այսօր:

Աղբբեջանի շովինիստ ղեկավարների և դարաբաղյան նրանց ձեռնաձուլների երազած օրն է սա: Նրանք հիմա ձեռք-ձեռքի գործելով սպանում են հայության ոգին, ցեխի մեջ են թաղում նրա ազնիվ ու արդար դատը, որպեսզի հետագայում այլևս ոչ մի զնով հնարավոր չլինի բարձրացնել:

Հայ ժողովուրդ՝ քո հատվածներից մեկը, որ դարերի մռայլ ու դաժան ճանապարհին միշտ բարձր է պահել քո անունը և անեղծ՝ իր ինքնությունը, հիմա օրհասական վտանգի տակ է:

Լեռնային Ղարաբաղը՝ արդեն անուժ ու անօգնական, կորցրել է ամեն ապավեն: Մայր ժողովուրդ, որտեղ էլ որ կա, քեզ ենք դիմում: Դու ես մեր հույսն ու ապավենը: Դու սեփական կառավարություն ունես, ունես կուսակցական կենտկոմ: Նրանց ձայնը չեն կարող չլսել: Դու ունես զավակներ, որոնց անուններն աստղերին է հասել, որոնք աշխարհի մեծամեծների հետ են նստում, քննում են երկրագնդի ու ժողովուրդների ճակատագիրը: Հի կարող պատահել, որ նրանց ձայնը չհասնի Կրեմլին, երկրի ղեկավարներին չհասնի փոքրիկ Լեռնային Ղարաբաղի մեծ ողբերգությունը: [...]

*«Յարաջ», Փարիզ, 1 սեպտեմբերի, 1967 թ.:*

**ИЗ ЗАПИСКИ ПРЕДСЕДАТЕЛЯ КГБ АЗЕРБАЙДЖАНА Г. АЛИЕВА  
В КОМИТЕТ ПАРТИЙНОГО КОНТРОЛЯ ПРИ ЦК КПСС  
О «НАЦИОНАЛИСТИЧЕСКИХ ЭЛЕМЕНТАХ»,  
ДОБИВАЮЩИХСЯ ВЫХОДА НАГОРНО-КАРАБАХСКОЙ  
ОБЛАСТИ ИЗ СОСТАВА АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР И  
ПРИСОЕДИНЕНИЯ К АРМЕНИИ**

Апрель, 1969 г.

„Проявления националистического характера имеют место в Нагорно-Карабахской автономной области. В последние годы националистические элементы проживающие в этой области, а также некоторые жители Армянской ССР предпринимают попытки к разжиганию среди населения тенденции к выходу области из Азербайджана и присоединению ее к Армении.

Под влияние националистических элементов попадает определенная часть молодежи, в том числе и комсомолы... Националистические проявления молодежи в НКАО имели место и в 1968 году“.

*Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии. Составитель, ответственный редактор Ю.В. Барсегов, Москва, 2008, том 1, с. 658.*

## «ԾԱՆՐ, ՅՈՒՄԱՐԱՏ ՎԻՃԱԿ Է ԱՊՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՂԱՐԱՔԱՂԸ»

Սեծարգո Միխայիլ Սերգեևիչ

Վերջին օրերի իրադարձությունները ցույց տվեցին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն անհապաղ լուծում է պահանջում: Այդ հիմնահարցն այսօր չի ծնվել, այն ունի երկար պատմություն և ճիշտ լուծում կարող է ընդունվել շատ գործոնների հաշվառումով: Կատարելապես ակնհայտ է, որ այդ հարցը հարյուրհազարավոր մարդկանց զգացումներին է դիպել և դրա հետ հաշվի չնստելն անթույլատրելի է: Մինչդեռ այն հաղորդագրությունները, որոնք տրվել են հեռուստատեսությամբ և հրատարակվել մամուլում, համարյա կատարելապես քամահրում են հասարակական լայն ռեզոնանսը, ղարաբաղյան հիմնահարցի նշանակությունը: Պե տը

է արդյոք ասել, որ դա մեր ոչ վաղեմի անցյալն է հիշեցնում, երբ հիմնահարցի արմատական լուծման փոխարեն այն հանվել է որպէս այդպիսին, ինչի հետևանքով իրադարձութիւնն ավելի է բարդացել:

Սենք խնդրում ենք ամենալուրջ կերպով, բարձր մակարդակով, քննարկել Լեռնային Ղարաբաղի վարչական կարգավիճակի հարցը, քննարկել հեղինակավոր փորձագետ-պատմաբանների, տրնտեսագետների, ազգագրագետների մակարդակով, հրաժարվել հապճեպ եզրակացություններից և որոշում ընդունել այն հանգամանքի հաշվառումով, որ Լեռնային Ղարաբաղը հայերի աչքում իրենց պատմական հայրենիքի անկապտելի մասն է կազմում և որ ինքնավար մարզի հիմնական բնակչությունը հայերն են:

Ձեզ հետ միասին մենք գտնում ենք, որ վերակառուցումը և մեր հասարակության ժողովրդավարացումը թելադրված է ժամանակի կողմից, նրա հետ է կապված մեր առաջընթացը:

Սենք սպասում ենք, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ևս ճիշտ լուծում կստանա այն հեղափոխական վերափոխությունների համաձայն, որոնք նշանավորում են մեր դարաշրջանը:

*ԽՍՀՄ ԳԱ և Հայկական ԽՍՀ ԳԱ իսկական անդամ  
Ա.Լ. Թախտաշյան,  
Բանաստեղծ, սոցիալիստական աշխատանքի հերոս  
Ա.Ա. Դուրդին*

25 փետրվարի, 1988 թ.:

*Հրաչյա Բեգլարյան, Արցախ-Նախի, երրորդ գիրք, Արցախյան շարժում,  
Ստեփանակերտ, 2006, էջ 226:*

№40

## ПОСТАНОВЛЕНИЕ ПЛЕНУМА НАГОРНО-КАРАБАХСКОГО ОБКОМА КП АЗЕРБАЙДЖАНА

Степанакерт, 17 марта, 1988 г.

*О поддержке требований населения автономной области относительно  
присоединения НКАО к Армянской ССР*

Пленум Нагорно-Карабахского обкома КП Азербайджана  
*ПОСТАНОВЛЯЕТ:*

Выражая чаяния армянского населения автономной области, вопреки подавляющего большинства коммунистов Нагорного Карабаха, просить Политбюро ЦК КПСС рассмотреть и положительно решить вопрос присоединения Нагорно-Карабахской автономной области к Армянской ССР, исправив тем самым допущенную в начале 20-х годов историческую ошибку при определении территориальной принадлежности Карабаха.

*„Советский Карабах“, 18 марта, 1988 г.*

№41

### **ГОЛУБОКОУВАЖАЕМЫЙ МИХАИЛ СЕРГЕЕВИЧ!\***

Я решил обратиться к Вам по двум наиболее острым в настоящее время национальным вопросам: о возвращении крымских татар в Крым и о воссоединении Нагорного Карабаха и Армении. В каждом из этих случаев речь идет об исправлении несправедливости в отношении к одному из народов нашей страны. Автономная национальная область Нагорный Карабах была присоединена к Азербайджанской ССР в 1923 г. В настоящее время примерно 75 % составляют армяне, остальные - курды, русские, азербайджанцы. В 1923 году доля армян была еще выше - до 90 %. Исторически вся область Нагорный Карабах (Арцах) являлась частью Восточной Армении. Можно предполагать, что присоединение Нагорного Карабаха к Азербайджану было произведено

---

\* Даже в обстановке провозглашенной гласности это письмо осталось неопубликованным, поскольку на всякие не соответствующие с официальной точкой зрения упоминания о Карабахе и Сумгаите был наложен строжайший цензурный запрет. Хотя письмо получило широкое хождение в “самиздате”, “лишь в наиболее либеральной в то время газете (“Московские новости”, 3 апреля 1988) было опубликовано сжатое изложение письма Сахарова, причем даже в этом случае из публикации была исключена важнейшая для мировоззрения великого гуманиста мысль о том, что основанием для принятия конституционного решения должны стать “ясно выраженная воля большинства населения автономной области”. Подверглись цензуре и ключевые положения письма о гласности, судьбе перестройки, самой ситуации в Карабахе. Впрочем, даже эта небольшая публикация вплоть до ноября 1988 оставалась единственной из появившихся в центральной прессе, в которой была сделана попытка предложить конституционный путь решения проблемы. (*Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ереван, 1996, с. 8.*)



по инициативе Сталина, в результате внутренних и внешнеполитических комбинаций того времени, вопреки воле населения Карабаха и вопреки предыдущим заявлениям Сталина и руководства Азербайджана, на протяжении последующих десятилетий оно явилось постоянным источником межнациональных трений. Вплоть до самого последнего времени имеют место многочисленные факты национальной дискриминации, диктата, ущемления армянской культуры. В обстановке перестройки у армянского населения Карабаха возникла надежда на конституционное решение вопроса. 20-го февраля на сессии областного Совета депутатов было принято решение о ходатайстве перед Верховными Советами Азербайджана, СССР о передаче области в состав Армянской ССР. Ранее аналогичные решения были приняты на сессиях четырех из пяти районных советов депутатов. Решения районных и областных советов были поддержаны многотысячными мирными демонстрациями в области и в Армении. Несомненно, во всем проявились новые демократические возможности, связанные с перестройкой. Однако дальнейшее развитие событий не было благоприятным. Вместо нормального конституционного рассмотрения ходатайства органов Советской власти начались маневры и уговоры, обращенные преимущественно к армянам. Одновременно появились сообщения в прессе и по телевидению, в которых события излагались неполно и односторонне, а законные просьбы армянского населения объявлялись экстремистскими, и заранее как бы предопределялся негативный ответ. К сожалению, приходится констатировать, что уже не в первый раз в обострившейся ситуации гласность оказывается подавленной как раз тогда, когда она особенно нужна. Все это не могло не вызвать соответствующей реакции. В Ереване, в Нагорном Карабахе и в других местах произошли забастовки и новые демонстрации, которые носили законный и мирный характер. Но в Азербайджане в последние дни февраля произошли события совсем другого рода: трагические, кровавые, вольно или невольно напоминающие 1915 год. Я думаю, что события в Азербайджане, как и волнения 1986 г. в Алма-Ате, спровоцированы и, может, организованы силами местной антиперестроечной мафии в ее арьергардной борьбе. Так или иначе, перестройке брошен вызов. Я надеюсь, что руководство страны, Политбюро, ЦК КПСС, Верховный Совет найдут способ – соответствующий ситуации: решительный, демократический, конституционный.

Поднятые в этом письме проблемы стали пробным камнем для перестройки, ее способности преодолеть сопротивление и груз про-

шлого. Нельзя вновь на десятилетия откладывать справедливое решение этих вопросов и оставлять в стране постоянные зоны напряжения.

С глубоким уважением,  
академик *Андрей Сахаров*  
21 марта, 1988 г.

### ДОПОЛНЕНИЕ

Это письмо передано Генеральному секретарю 21 марта. Я считаю важным сделать к нему следующее дополнение. Я призываю к решениям, основанным на спокойном и по возможности беспристрастном учете интересов каждого из народов нашей страны. Мне представляется необходимым в соответствии с Конституцией СССР рассмотреть ходатайство Областного Совета народных депутатов Нагорного Карабаха в Верховном Совете Азербайджанской ССР и в Верховном Совете Армянской ССР. В случае разногласия арбитражное решение должен вынести Верховный Совет СССР. Я призываю Верховные Советы Азербайджана, Армении и СССР учесть ясно выраженную волю большинства населения автономной области и областного совета как главное основание для принятия конституционного решения. В эти тяжелые дни я обращаюсь с просьбой и призывом к народам Азербайджана и Армении полностью исключить насилие. Было бы величайшей трагедией, если бы ответом на уже совершенные чудовищные преступления стали бы новые. 24-го марта опубликовано постановление Президиума Верховного Совета СССР о положении в Нагорном Карабахе. Однако, в этом постановлении не высказано отношение к решению областного Совета. Я надеюсь, что это еще не последнее слово Верховного Совета СССР и его Президиума.

*Андрей Сахаров*

*Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ереван, 1996, с. 5–7.*

**ԲԱՑ ՆԱՍԿ**

*Ս.Ս. Ավերիցովին, Վ.Վ. Իվանովին,  
Վ.Ա. Կավերինին, Ս.Ա. Ուլյանովին:  
Գիտության, մշակույթի և մանուկի բոլոր ազնիվ գործիչներին*

Հարգելի բարեկամներ.

Մենք մեծագույն ուշադրությամբ կարդացինք «Իզվեստիա» թերթի մարտի 25-ի համարում տպագրված ձեր նամակը: Մենք զգացինք այն տազնաար, որ համակել է ձեզ՝ հեռվից-հեռու լսելով Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցած դեպքերի մասին: Իսկապես որ հեռվից-հեռու: Մեր մասսայական իմֆորմացիայի միջոցները, հատկապես կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ծրագիրը, միութենական օրգաններում տպագրված տեղեկություններն ու հարցազրույցները այնքան աղավաղված են ներկայացրել իրականությունը, որ երկի պեսք էր լինել շատ խորաթափանց, ինքնուրույն դատողության տեր մարդ, ինչպիսին դուք եք, որպեսզի վարպետորեն նյութած այդ թանձր ծխածածկույթի միջից ինչ-որ չափով գուշակեր իրողությունը և քիչ թե շատ մոտենար ճշմարտությանը: Մենք հասկանում ենք ձեր հունամիստական մտահոգությունը՝ հավասարապես խաղաղեցնել՝ իբր թե իրար դեմ փոխադարձաբար ոտքի ելած երկու ժողովուրդների [...]

Եվ ահա ես որոշեցի գրել Ձեզ, սիրելի բարեկամներ, ձեր միջոցով դիմել գիտության և մշակույթի ազնիվ գործիչներին, մտածելով, որ դուք կհասկանաք և գուցե, ո՛վ իմանա, կօգնեք մեզ՝ դուրս գալ այս փակուղային վիճակից:

Երևանի Թատերական հրապարակում, միտինգներից մեկի ժամանակ, երբ ես՝ իմ ելույթի վերջում խնդրեցի բորբոքված բազմությանը համբերել մինչև խնդրի արդար լուծումը, առաջին շարքերում գտնվող լարված, մկանուտ դեմքով մի երիտասարդ պրոթիպաց բարձրաձայն. «4-րդ դարից համբերում ենք, էլ մինչև ե՛րբ համբերենք» [...]

Հիրավի, հայ ժողովրդի համբերությունը ձգվում է հարյուրամյակներ: Մենք դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը եկանք 1915 թ. ցեղասպանությունը տեսած, ժողովրդի կեսը ու հայրենի հողերի մեծ մասը կորցրած, աշխարհով մեկ սփռված, հոգեպես ու ֆիզիկապես՝ ջարդված: Եվ ահա կարծես հերիք չէր այս ամենը,

Հայաստանում Սովետական կարգեր հաստատելուց հետո էլ՝ մեզ մնացած այդ որբաբաժին հողից անգամ կորեցին Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը, մաս-մաս արած ժողովրդի՝ վերջին, քիչ թե շատ ամբողջական մնացած հատվածն էլ բաժանեցին երկուսի: Ամեն տեսակ արդարությունից, տրամաբանությունից, պատմական, աշխարհագրական, դեմոգրաֆիական փաստարկումներից դուրս գտնվող մի գործողություն էր դա, որ երկար տարիներ անբացատրելի մնալով, միայն հիմա՝ դառնում է հասկանալի [...]

Ներշնչված հեղափոխության, դեմոկրատիզացիայի և հրապարակայնության գաղափարներով, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի՝ 1920 թվին՝ 93, իսկ ներկայումս 75 տոկոս կազմող հայ բնակչությունը՝ մայր ժողովրդին միանալու իր ցանկությունն այս անգամ անապայմանորեն ընթացք կստանա: 80 հազարի հասնող ստորագրություններով վավերացված ու հետագայում մարզ-գործկոմի սեփայով ու կուսակցական մարզկոմի պլենումով հաստատված որոշումով դիմեց Սիուսեանական կառավարությանը՝ պահանջելով, որ ինքնավար մարզը հանեն Ադրբեջանի հանրապետության կազմից և վերամիացնեն Սովետական Հայաստանին:

Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի՝ այս էլ 60 տարի տևող խնդրումները վերագրել ու հիմա էլ վերագրում են Հայաստանի մտավորականությանը, հատկապես գրողներին:

Ղարաբաղցիների դժգոհությունը հրահրում են ոչ թե դրսի մարդիկ, ոչ թե զանազան «ռադիո ծայներն» և օտար գործակալությունները, այլ 1921 թ. գործված անարդարության և դրա հետևանքների մշտական ներկայությունը ղարաբաղցու հոգում և առօրյայում, այդ ինֆեկցիոն օջախի առկայությունը, որը անընդհատ թունավորել է մարմինը, տվել անցանկալի երևույթներ: Այն է, մի կողմից՝ վիրավորվածություն, մայր ժողովրդից արհեստականորեն կտրված լինելու դառնություն և նրան միանալու անխափտելի ձգտում, խռովք, լարվածություն, հուսահատ արոթկումներ, մյուս կողմից՝ համառ ու անհեթեթ ջանքեր՝ կտրտելու, ամեն կերպ խզելու ղարաբաղցիների հոգեկան կապերը Հայաստանի հետ՝ ընդհուպ մինչև Երևանից հեռուստատեսային հաղորդումները դիտելու հետևողական խոչընդոտում: Նույնքան համառ ու անհեթեթ փորձեր՝ ժխտելու հինավուրց հայկական Արցախ աշխարհի, միայն 1388 թվականից, այսինքն՝ թուրք-մոնղոլական ցեղերի արշավանքներից հետո, Ղարաբաղ կոչվող երկրամասի հայերին պատկանելու պատմական ճշմարտությունը, ամեն կերպ, թույլատրելի, թե անթույլատրելի միջոցներով՝ հայկական հուշար-

ձանների ավերում կամ սեփականում, գերծարար գիտական աշխատությունների և այլոսների հրատարակում, մամուլով ու ռադիոհեռուստատեսությամբ տրվող տեղեկագին քարոզչություն, հաստատել աղբբեջանցիների բնիկությունը:

Սրան ավելացրած Ղարաբաղի հայ բնակչության վրա պարբերաբար գործի դրվող տնտեսական, վարչական ու բարոյական ճնշումները, մարզի աղբբեջանականացումը և այս ամենը՝ միակ մի նպատակի հետապնդումով՝ հարկադրել հայերին թողնել իրենց պատենական հողերը և արտագաղթել դեպի Միջին Ասիա, Ռուսաստան, Հայաստան, ինչպես որ դա արվեց Նախիջևանում, որտեղ 1920 թ. 40% կազմող հայ բնակչությունն այժմ հասել է 1–2 %:

Հենց այս կացությունն էր, որ դարձյալ ուրքի հանեց Ղարաբաղի հայերին, որոնք Միութենական դեկալարությանը պաշտոնապես դիմելուց հետո՝ բազմաթիվ նամակներ ու կոչեր ուղղեցին մեզ՝ Հայաստանի ժողովրդին՝ սատար կանգնել իրենց: Այս անգամ արդեն մեր կողմից լրիվ դավաճանություն կլիներ, ամոթալի մորթապաշտություն՝ չարձագանքել մեզմից օգնություն խնդրող կանչերին [..]

Ինչպես հասկանային «Հույզեր և բանականություն» հոդվածի պատվիրատուները, որ այդ բազմաազար մարդկանց՝ մտավորականներին, բանվորներին, օյուղի աշխատավորներին տեղից հանողն ու մայրաքաղաքը բերող միայն Լեռնային Ղարաբաղը չէր. ժողովրդի պատմական հիշողության գեներն էին, որ խլրտում էին այդ զանգվածների հոգում: Այնտեղ 1915 թ. ողբերգությունը կար, 70–75 տարի առաջ բնաջնջված գերդաստանների՝ հրաշքով փրկված որդիների, թոռների, ծոռների սրտերում վերարձարձված ցասումն ու լքված բնաշխարհի կարոտը, որ վաղուց մարած աստղերի՝ դեռ երկար հեռարձակվող լույսի պես հասել էր ներկա սերունդներին ու մղում էր նրանց միանալ, միասնականանալ, իրար մեջ ու իրարով գտնել կորցրածը: Այդ հոգիներում նաև անբավականությունը կար, որ Սովետական կառավարությունը լիաձայն տեր չի կանգնում հայ ժողովրդին ու հայկական դատին, իր վճռական մասնակցությունը չի բերում Միացյալ ազգությունների կազմակերպություններում՝ այս էլ քսան տարի քննարկվող ու լուծում չստացող հոդվածի դրական լուծմանը, որով պետք է դատապարտվի երիտթուրքերի կողմից 1915–1920 թվականներին հայերի վրա գործադրված ցեղասպանությունը:

Այս ամենի խտացումը կար երևանյան ցույցերին մասնակցած զանգվածների հոգում, որը դուրս էր արթնացել Ղարաբաղյան

արորբեմի առիթով և որին «Պրավդայի» հոդվածի հեղինակների՝ վերակառուցմանը բռնորոշվին խոստով գնացող, կարծրացած նտածողությունն այլ որակում չէր կարողացել տալ, քան «հակասոցիալիստական տրամադրություն» արտահայտություն: Եվ այս այն դեպքում, երբ կուսակցության օլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը Հարավսլավիայում հայտարարեց, որ Ղարաբաղի շուրջը տեղի ունեցող իրադարձություններն ունեն միայն էթնիկ, կուլտուրական և ոչ հակասովետական, հակասոցիալիստական բնույթ:

Հարկավոր էր գրկված լինել տարրական տաքտից, տվյալ հավաքականությունը նշույլ իսկ հարգելու կուլտուրայից, որայեսզի 700 հազարանոց բազմության բնագրական կազմակերպվածությունը, ինքնագապումը, իրար ջուր և ուտելիք հասցնելու, վատառողջներին շտապ օգնություն ապահովելու՝ մարդկային այս բարձր համերաշխության անօրինակ դրսևորումը ենթարկել ծաղրուծանակի, համարել ամիսներ, նույնիսկ տարիներ առաջ կոմիտեների և աստված գիտե, ինչ անդրօվկիանոսյան գործակալների կողմից «կազմակերպված» կազմակերպվածություն, դիտավորյալ սարքված օրինապահություն և այս ամենը միասին անվանել «վրդոցային դեմոկրատիա»:

Միայն քաղաքական մերկ նկատառումներով առաջնորդվող, աշխարհի և ճշմարտության հետ հաշվի չնստող ֆունկցիոներները կարող էին հավասար նժարի վրա դնել լում և դանակով խնդիրներ լուծող ջարդարարներին և երևանում ու Ղարաբաղում խաղաղ ցույցի էլած մարդկանց, որոնք մարտի 8-ին առավտից մինչ երեկո սուգի հոժ երթերով քայլեցին դեպի Ծիծեռնակաբերդ, դեպի Եղեռնի հուշարձան՝ ժողովրդի իմաստուն բնագրով զգալով, որ Սունգաիթը շարունակությունն է 1915 թ. ապրիլի 24-ի:

Գրեցի ես այս էջը և նտածեցի. ես վախենում եմ, թե ինչ քնժիծաղով նրանք պիտի ընդունեն ու հնատարազ սենտիմենտալություն համարեն «Արարատի երեսին ինչպե՛ս պիտի նայենք», «Ո՛ւն թողնենք մեր վանքերը, մեր խաչքարերը, մեր երևանը» դարձվածքները [...] Եվ, սակայն, ինչու , այդ ո՛ր օրերնքով ես պետք է նտահոգվեմ, թե ինչ արձագանք կգտնեն իմ խոսքերն այս կամ այն հոդվածագրի մոտ:

Թանկագին ընկերներ.

Այս օրերին մենք միփթարության և սրտակցության շատ նամակներ, հեռագրեր ու հեռախոսազանգեր ենք ստանում մեր այլազգի բարեկամներից՝ Միխայիլ Դուդինից, Դանիլ Գրանինից, Վալենտին Ռասպուտինից, Անդրեյ Բիտովից, Միխայիլ Սատու-

սովսկուց, Ֆազիլ Իսկանդերից, Ստանիսլավ Ռասսադինից, Միխայիլ Լոտմանից և շատ ուրիշ հայտնի ու անհայտ դեմքերից:

Թուրքական «Հուրիեթ» թերթը՝ անդրադառնալով Ղարաբաղյան դեպքերին այս տարվա մարտի 11-ի «Սովետական մարդը և նացիոնալիզմը» հոդվածում գրում է. «Սովետական հայերը Սովետական Ադրբեջանի համեմատությամբ շատ ավելի մեծ պատրաստականությամբ են իրենց զոհել հանուն կոմունիզմի: Բայց և այնպես Կրեմլը, ուսումնասիրելով հայերի և ադրբեջանցիների միջև տեղի ունեցող դեպքերը, հաշվի է առել ոչ միայն թուրքազերների կշիռը, այլ բոլոր թուրքերի: Իսկապես, ՍՍՄ-ում թուրքերի թիվը հասնում է 50 միլիոնի: Թուրքական այս վիթխարի զանգվածի հանդեպ, ինչպիսին էլ որ լինի հայերի արժեքը ՍՄԿ-ի աչքում, նրանք Կրեմլի աչքում թուրքերի արժեքը չեն ունենա»:

Սեզ, հայերիս, մնում է հիշել հայկական հիմնավորց մի ասացվածք. «թուրքը անիծված է, բայց նրա խոսքը՝ օրհնված» [...]

Սակայն թողնենք Երևանի թատերական հրապարակը և տեղափոխվենք Ղարաբաղ, որն ամբողջ երկրով մեկ ծավալված դրամայի իսկական թատերաբեմն է, գործողությունների կենտրոնատեղին, և որտեղ, ենթադրում են, ձեռքից-ձեռք է անցնում ՍՄԿ կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշումը՝ մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային բարեփոխումների մասին:

Երկի որոշման տակը ստորագրող հարգելի ընկերներ Ս.Ս. Գորբաչովը և Ն.Ի. Ռիժկովը զարմացած են, որ Լեռնային Ղարաբաղի մարդկանց չեն ուրախացնում այդ որոշման բավական շռայլ նախատեսումները և նրանք շարունակում են համառել իրենց Ադրբեջանից ազատվելու պահանջի մեջ:

Ես շատ պիտի ուզեմայի, որպեսզի դուք, «Իզվեստիայում» տպագրված նամակի հարգելի հեղինակներ, դիտելիք այն հեռուստատեսային նկարահանումները, որտեղ պատկերված են ղարաբաղյան դեպքերը: Ցնցող այդ նկարահանումների մեջ՝ Ղարաբաղին սահմանակից Ադրբեջանի ադրբեջանցիների կողմից ջարդուփշուր արված ավտոմեքենաները, կրպակներն ու նույնիսկ հիվանդանոցներում՝ ծեծված, խեղանդամված, բիստ ու գիպսի մեջ փաթաթված, սրտաճնլիկ տեսքով հայերը չեն, այլ Ստեփանակերտի քառակուսի հրապարակում հավաքվածների վիճակը: Մարդը, եթե կրծքի տակ սիրտ ունի, և ոչ թե ապարատային աշխատողին հատուկ ապարատ, չի կարող առանց սարսուռ զգալու նայել այդ մարդկանց, որոնք՝ ասես քառակուսի վանդակի մեջ,

սրտապատառ խփվում են ճաղերին, անընդհատ վանկարկելով «Ար-մեն-իա», «Ար-մեն-իա»:

Եվ այդ նրանք են՝ հպարտ, դարերով ոչ մեկի չհնազանդված, իրենց քաջությամբ համբավված, երկրին 4 մարշալներ, 20 Սովետական Սիւրբյան հերոսներ, Հայրենական պատերազմի ռազմադաշտերին 44 հազար ռազմիկներ տված դարաբաղցիները, որ հիմա հասցված են այդ վիճակին [...] Եվ ահա նրանց՝ Հայաստանի փոխարեն մատուցում են «սոցիալ-տնտեսական բարեփոխումներ» այն էլ Ադրբեջանի զանազան միմիստրությունների և հիմնարկների միջոցով կիրառելու հանձնարարությամբ: Այդ բարեփոխումների գինը դարաբաղցիները լավ գիտեն: Չէ՞ որ արդեն քանի անգամ՝ թղթի վրա այդքան գեղեցիկ, մի ամբողջ դրախտ խոստացող որոշումները՝ այն կիրառողների խորամանկ ձեռքերում տվել են հակառակ արդյունքներ՝ դարձել են միջոց մարզը ավելի խոշոր թափով ադրբեջանականացնելու:

Շնորհակալություն և կուսակցությանն ու կառավարությանը բնակտարածությունն ընդլայնելու, նոր դպրոցներ, նոր ճանապարհներ բացելու համար, բայց Ղարաբաղն առանց այդ էլ նոր բնակարանների կարիք չուներ, որովհետև նախ՝ բնական աճ չկա, և ամենազլխավորը, շատ դարաբաղցիներ՝ նեղված ազգային ու բարոյական կեղեքումներից, թողել են իրեց տները և գնացել ուրիշ վայրեր: Ղարաբաղցիներին բնակարանային տարածությունից ավելի ազատ շնչելու տարածություն է պետք, մարդուն վայել գոյություն: Նրանք չեն ուզում սնունդը, թեկուզ առատ ու որակավոր, ընդունել վանդակի ճաղերի արանքից:

Այդ հաշվեհարդարի ժամանակ սոււնգախթյան ջարդերը լուրջան մատնելու ֆոնի վրա՝ չափածո և անչափ բարձրագոյ ներբողներով լեգենդացրած Խուրիման Աբասովան, որը՝ ելնելով իրենց տոհմային ադաթից, օլխաշորը նետեց՝ հանդարտացնելու հայերի վրա նետվող աղդանցիներին, հազիվ թե կարողանա հանդարտեցնել այդ վրեժխնդիր պետական պաշտոնյաներին [...]

Ահա թե ինչու են այդպես պատեպատ խփվում դարաբաղցիները, ինչու են այդպես համառությամբ տեսնում միանալ իրենց հայ ժողովրդին, և պետք է ունենալ ոչ միայն հոգեկան, այլ քաղաքական խլություն, որպեսզի դեպի մայրը պարզված ձեռքերը և նոր՝ մանկան ձեռքերին ընդառաջ գնալու մղունը համարել «տեր-խորդալ հավակնություններ», և կամ, ինչպես ասվում է Ադրբեջանի 250 գիտնականների՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձում-



յանին ուղղված հեռագրում «Աղբբեջանից արկել կարկանդակի ամենահամեղ կտորը»:

Ի սեր աստճո, մեզ հարկավոր չէ այդ «ամենահամեղ կտորը»: Ղարաբաղի 4.500 քառակուսի կիլոմետրի ավելացումով մենք, մինևույն է, Չինաստան չենք դառնա: Հավաստցե՛ք մեզ, մեր հարգելի նամակագիրներ, անսահման շնորհակալ կլինենք բոլոր նրանց, որոնք՝ ոչ թե շանտաժով, ռեպրեսիաներով, արհամարհելի մի անպատկառությամբ, այլ հանդարտ գիտական փաստերով ու հանդգլածությամբ կապացուցեին մեզ, որ Ղարաբաղը ոչ մի առնչություն չունի հայկական պապենական հողերի հետ, և իրենք՝ աղբբեջանցիներն են այդ հողի բնիկները, որ հայ գրերի հիմնադիր Սետրոպ Մաշտոցը դեռևս 5-րդ դարում Ղարաբաղում, այն ժամանակ Արցախ կոչվող գավառում չէ, որ բացել է առաջին հայկական դպրոցները, որ աշխարհի ամենատարբեր գիտական ուսումնասիրություններում, այբուններում ու հանրագիտարաններում 13-րդ դարի հայկական ճարտարապետության գլուխգործոցը համարվող Գանձասարի վանքն ու Ղարաբաղի հարյուրավոր մյուս հուշարձաններն ու խաչքարերը հայերը չեն, որ կերտել են, այլ աղվան-աղբբեջանցիները, որ հայերենով հանրահռչակ աշխատություններ թողած պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Մովսես Կաղանկատվացին, Մխիթար Գոշը և անգամ հայկական այբուբենի սկզբնաստառերով ակրոստիքոս հյուսած Դավթակ Քերթոզը նույնպես աղվան-աղբբեջանցիներ են, ու հուր ու սրով Ղարաբաղ մտած ու աղվանական արժեքները ոչնչացրած բարբարոս հայերը այրել են վերոհիշյալ գրքերի բնագրերը, նախորոք թարգմանելով դրանք հայերենի [...]

Չէ՞ որ Նազիմ Չիքմեթը և ես երկարամյա բարեկամներ էինք, թեև սահմանից այն կողմ գտնվող գերված հողերն ու որբացած հուշարձաններն մշտապես ներկա էին իմ մեջ: Ամեն անգամ հանդիպելիս սովորություն ունեինք մտերմորեն, քույր ու եղբոր պես ողջագուրվելու, և ամեն անգամ ես մի պահ ընկրկում էի և կեսլուրջ-կեսկատակ կրկնում. «Հողերը, նախ հողերը տվեք, հետո նոր կողջագուրվենք»: Հիքմեթը՝ լուսավոր ու ժպտերես՝ պատասխանում էր. «Հեղափոխություն կլինի՝ կտանք անպայման» [...]

Սուևգաիթը՝ մարդուն ֆիզիկապես սպանելը, արհմիտիվ մի բան է, գոյության դասական ծնն ու «ազգային իդեալը» այն ցեղի, որի վերաբերյալ Վիկտոր Հյուգոյի դեռ 150 տարի առաջ գրած «Հույն տղան» բանաստեղծության «թուրքերն անցան այստեղից՝ ամենուր մահ ու ավեր» տողը աշխարհի համար դարձել է թևավոր

խոսք, և «թուրքերն անցան այստեղից» ասելուց հետո, այլևս լրացուցիչ բացատրությունների կարիք չի զգացվում [...]

Ահա այս իսկ պատճառով տեսնելով, որ Ղարաբաղի ու Հայաստանի ամեն կարգի կոչերն ու խնդրանքները՝ ինքնավար մարզը Հայաստանին վերամիցնելու մասին, մնացին անհետևանք, մենք դիմում ենք ձեզ, բարեկամներ, եղբայրներ, արվեստի, գիտության ու մշակույթի նվիրյալներ, մեծ Ռուսաստանի խղճի ձայնն արթուն պահող մարդիկ, օգնեցե՛ք Լեռնային Ղարաբաղին, դուք նույնպես բարձրացրե՛ք ձեր ձայնը՝ ի պաշտպանություն այդ տառապած աշխատավոր մարդկանց, այն ամենն հիացմունքի արժանի հերոսներին: Եթե այդքան անհնար է Ղարաբաղի մարզը վերամիավորել Հայաստանին, թող մտցնեն Ռուսաստանի կազմի մեջ, թող հատուկ ստառուսով կցնեն Սիուֆենական Գերագույն սովետին, թող տան նրան գոնե ինքնուրույն ապրելու և աշխատելու հնարավորություն:

Իսկ ինչ վերաբերում է մեզ, Հայաստանի ժողովրդին, ողջ հայ ժողովրդին, մենք դանդաղորեն, ծանր, դժվարությամբ, բայց նորից կհավաքենք մեզ: Կհավատա՞նք մենք նորից վերակառուցմանը՝ հայտնի չէ դեռ: Ռա ցույց կտա կյանքի ընթացքը: Սակայն հայտնի է մի բան, որ մենք նորից կզինակոչվենք, նորից գործի կդնենք մեր՝ հազարամյակներ չսպառվող հոգեկան պոտենցիալը և կշարունակենք ապրել: Մենք սովոր ենք թեթևորեն հավատալուն և ծանրորեն խաբվելուն: Մենք այդ տեսակետից դարավոր ինու-նիստես ենք ձեռք բերել:

Ինչքան էլ որ անվանարկեն ու տրորեն մեզ բոլոր փոքր ու մեծ, տեղական ու ոչ տեղական բարձրագույնները, այնուամենայնիվ մենք 1988 թվականի մեր յոթնօրյա հոգու գեղեցիկ վեհացուներով լեցուն ընդվզումները, հանրապետության շրջաններից ուրծով եկած ու երևանցիներին միացած փետրվարի 27-ի 700 հազարի հասնող բազմության ցույցերը և աշխարհի բոլոր ծայրերում գտնվող հայերի համազգային արձագանքները, համարում ենք մեր բազմադարյա պատմության աստղային ժամերից մեկը, համարում ենք ժողովրդական ոգու հաղթանակ, այդ ոգու միասնության հաղթանակ: Այդ հաղթանակը մեզ կօգնի ապրել, հուսալ, արարել:

Ժողովուրդն ինքն է շահել իր ապրելու իրավունքը ...

*Միլվա Կապուտիկյան*

5 ապրիլի, 1988 թ.

*Միլվա Կապուտիկյան, Էջեր փակ գգրոցներից, Երևան, 1997, էջ 301–321:*

ԱՊՐԲԵՋԱՆԻ ԿՈՍԿՈՒՄԻ ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՐԻ ՍԱՐՉԿՈՒՄԻ  
ՊԼԵՆՈՒՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

17 մարտի, 1988 թ.

*ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ  
ինքնավար մարզի աշխատավորների,  
կոմունիստների պահանջի մասին*

Աղոթեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի պլե-  
նումը ՈՐՈՇՈՒՄ է.

Հաշվի առնելով ինքնավար մարզի հայ բնակչության իղծերը,  
Լեռնային Ղարաբաղի կոմունիստների ճնշող մեծամասնության  
կամքը, խնդրել ՍՍԿԿ կենտկոմի քաղբյուրոյին քննարկել և դրա-  
կանորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկա-  
կան ՍՍՀ-ին միացնելու հարցը, դրանով իսկ ուղղելով 20-ական  
թվականների սկզբին Լեռնային Ղարաբաղի տերիտորիալ պատ-  
կանելիությունը որոշելու ժամանակ թույլ տրված պատմական  
սխալը:

*«Խորհրդային Ղարաբաղ», թիվ 64, 18 մարտի, 1988 թ.:*

ՀՍՍՐ ՊԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻՆ

*1988 թվականի հունիսի 12-ին երևանի Թաատրական  
հրապարակում ժողովրդի հավաքի (ժողովի) կողմից ընդունված*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1. Հրատապ կարգով (հացադուլ անողների շահերից ելնելով)  
քննարկել և դրական որոշում կայացնել ԼՂԻՄ-ի մարզային  
սովետի որոշման, 20.02.88 թ.՝ Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ  
մտնելու մասին:

2. Որոշում կայացնել ՍՐՄ Գերագույն Սովետին դիմելու՝ ԼԴԽ-ի վերոհիշյալ որոշումը քննարկելու և դրականորեն լուծելու նախն: Այսինքն՝ հարգել ամբողջ հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը և ԼԴԽ-ը վերամիավորել Հայկական ՍՐ կազմի մեջ:
3. Պահանջել ՍՐՄ Գերագույն Սովետից և ՍՐՄ Գերագույն դատարանից՝ կասեցնել Սումգաիթի անօրինական, անարդարացի, խայտառակ դատավարությունը և ՍՐՄ Գերագույն դատարանում, նոր կազմով, վերսկսել այն՝ ճիշտ որակում տալով բոլոր ոճրագործություններին:
4. Դիմել ՍՐՄ Գերագույն Սովետին՝ վերանայելու ՍՐՄ Սահմանադրության՝ ազգային ինքնորոշմանը վերաբերող հոդվածները և համապատասխան լրացումներ, փոփոխություններ ու ճշտումներ մտցնելու՝ լիակատար դեմոկրատիայի իրականացմամբ:
5. Պահանջել հանրապետության իշխանության, կառավարության և կուսակցության բոլոր ղեկավար-ղեկապետներից իրենց ղեկապետական բլանկի վրա ներկայացնել Հայկ. ՍՐ Գերագույն Սովետին այն հարցապնդումները, որոնք ընդունվել են իրենց ընտրողների պատվիրաններով և սույն որոշմամբ: Սիսիանական հարցապնդման մի օրինակը ներկայացնել ժողովրդին՝ Սահմանադրության համաձայն:
6. Պահանջել Հայկ. ՍՐ Գերագույն Սովետի նստաշրջանն անցկացնել հրապարակայնության և դեմոկրատիայի սկզբունքներից ելնելով, այսինքն՝ անմիջական և ուղղակի հեռուստատեսային հաղորդման կազմակերպում և շեմքի դրսի ռադիոֆիկացում:

*ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 26, ք. 84:*

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

*«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Աղբրեջանական ՍՐ-ի կազմից Հայկական ՍՐ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Աղբրեջանական և Հայկական ՍՐ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» Աղբրեջանական ՍՐ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման մասին*

Հայկական ՍՐ Գերագույն Սովետը նշում է, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցը, ինչպես և ազգամիջյան հարաբերությունների շատ այլ չլուծված պրոբլեմներ գտնվում են ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի ուշադրության կենտրոնում, որի վկայությունն է ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով համակված դիմումը Աղբրեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին: Այդ դիմումը երախտագիտությամբ և հանուն սովետական ժողովուրդների բարեկամության ամրապնդման մեծ պատասխանատվության զգացումով ընդունվեց Սովետական Հայաստանի հասարակայնության, բոլոր աշխատավորների կողմից:

ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշմամբ կենտկոմի քարտուղարությանը հարձնարարված է կազմակերպել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կուտակված պրոբլեմների, նրա շուրջ ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների խոր ու համակողմանի ուսումնասիրությունը, համապատասխան առաջարկությունների մշակումը և ըստ դրանց պատրաստության աստիճանի ներկայացնել ՍՄԿԿ կենտկոմի և ՍՄՄ կառավարության քննարկմանը: Լեռնային Ղարաբաղի պրոբլեմների, մարզի աշխատավորների կարիքների նկատմամբ մեծ ուշադրության վկայությունն է հանդիսանում նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին ՍՄԿԿ Մինիստրների խորհրդի որոշումը:

Հանրապետության Գերագույն Սովետը միահամուռ պաշտպանում է համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսին ուղղված ՍՄԿԿ կենտկոմի թեզիսները, որոնցում նշվում է, որ քա-

դաքական սիստեմի շրջանակներում անհրաժեշտ է քննարկել և հասունացած միջոցներ ձեռնարկել ֆեդերացիայի հետագա զարգացման ուղղությամբ, պահանջվում է մշտական ուշադրություն ազգամիջյան հարաբերությունների հարցերին, յուրաքանչյուր ազգի և ազգության զարգացման:

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Սովետը որոշում է.

1. Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ՍՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՄՍ Սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն:

2. Ինդրել ՍՄՍ Գերագույն Սովետին քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու հարցը:

3. Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետը, դիմելով Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն Սովետին, հույս է հայտնում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջև եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները և այն ընթրնումով կրնկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից:

Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության  
նախագահ *Գ. Ոսկանյան*  
Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի  
նախագահության քարտուղար *Ն. Ստեփանյան*

15 հունիսի, 1988 թ., քաղ. երևան:

«Սովետական Հայաստան», թիվ 1254, 16 հունիսի, 1988 թ.:

ПОСТАНОВЛЕНИЕ  
ВЕРХОВНОГО СОВЕТА АРМЯНСКОЙ ССР

Ереван, 15 июня 1988 г.

*О решении внеочередной сессии Областного совета народных депутатов НКАО Азербайджанской ССР от 20 февраля 1988 года «О ходатайстве перед Верховными советами Азербайджанской и Армянской ССР о передаче Нагорно-Карабахской Автономной Области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР»*

[...]

Верховный Совет Армянской Советской Социалистической Республики постановляет:

1. Всесторонне изучив решение внеочередной сессии областного Совета народных депутатов Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР от 20 февраля 1988 года и учитывая сложившуюся напряженную обстановку в Нагорном Карабахе и вокруг него, а также волеизъявление армянского населения НКАО и Армянской ССР, руководствуясь статьей 70 Конституции СССР о праве свободного самоопределения наций, дать согласие на вхождение Нагорно-Карабахской автономной области в состав Армянской ССР.

2. Просить Верховный Совет СССР рассмотреть и положительно решить вопрос о переходе Нагорно-Карабахской автономной области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

3. Верховный Совет Армянской ССР, обращаясь к Верховному Совету Азербайджанской ССР, выражает надежду, что такое решение не нарушит традиционно добрососедски отношений между обеими республиками, и оно с пониманием будет воспринято азербайджанским народом.

Председатель Президиума Верховного Совета Армянской ССР

*Г. Восканян*

Секретарь Президиума Верховного Совета Армянской ССР

*Н. Степанян*

*15 июня, 1988 г., г. Ереван.*

*„Коммунист“, Ереван, 16 июня, 1988 г.*

**РЕШЕНИЕ  
ВОСЬМОЙ СЕССИИ СОВЕТА НАРОДНЫХ ДЕПУТАТОВ  
НКАО 20-ГО СОЗЫВА**

Степанакерт, 12 июля 1988 г.

**«О провозглашении выхода Нагорно-Карабахской Автономной  
Области из состава Азербайджанской ССР»**

1. Учиывая создавшееся положение, считать необходимым еще раз подчеркнуть следующее: выражая государственную волю подавляющего большинства населения Нагорного Карабаха и исходя из необходимости последовательного осуществления лежащего в основе национально-государственного устройства нашего единого союзного многонационального государства ленинского принципа о праве наций на свободное самоопределение, провозгласить выход Нагорно-Карабахской автономной области из состава Азербайджанской ССР.

2. Учиывая, что за последнее время ситуация в автономной области крайне обострилась, принимая во внимание, что связи с Азербайджанской ССР практически прерваны, Совет народных депутатов НКАО считает единственно приемлемой для области реализацию решения сессии Верховного Совета Армянской ССР от 15 июня 1988 года по вопросу Нагорного Карабаха.

3. Совет народных депутатов НКАО выражает надежду, что вхождение Нагорного Карабаха в состав Армянской ССР будет с пониманием воспринято трудящимися и народами Союза Советских Социалистических Республик.

4. Поручить исполкому Нагорно-Карабахского областного Совета народных депутатов возбудить в установленном порядке ходатайство о переименовании Нагорно-Карабахской автономной области в Арцахскую автономную область.

И. о. председателя Нагорно-Карабахского облисполкома  
**Петросян ШМ**  
Секретарь Нагорно-Карабахского облисполкома  
**Хачиян Р.В.**

„Советский Карабах“, 13 июля, 1988 г.



# ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ

|   |    |
|---|----|
| Առաջաբան .....  | 5  |
| Предисловие .....   | 16 |
| <b>Փաստաթղթեր և նյութեր</b><br>Документы и материалы  |    |
| № 1. Выписка из Декрета АЗ ЦИК об образовании Автономной Области Нагорного Карабаха, 1923 г. ....   | 28 |
| № 2. Выписка из протокола заседания президиума ЦК АКП (б) об утверждении Конституции Автономной Области Нагорного Карабаха, 1924 г. ....        | 28 |
| № 3. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի Սահմանադրությունը, 1924 թ. ....  | 29 |
| № 3 <sup>1</sup> . Положение об Автономной Области Нагорного Карабаха, 1924 г. ....   | 33 |
| № 4. Письмо секретаря ЦК КП (б) Армении Гр. Арутинова в ЦК ВКП (б) И. Сталину, 1945 г. ....   | 36 |
| № 5. Լեռնային Ղարաբաղի մի խումբ բնակիչների նամակը ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն.Ս. Խրուշչովին, 1962 թ. ....                                | 37 |
| № 6. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և հարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի «Հուշագիրը» Ն.Ս. Խրուշչովին, 1962 թ. ....                  | 39 |
| № 7. Լեռնային Ղարաբաղի մի խումբ մտավորականների նամակը ԽՍՀՄ կենտկոմի նախագահություն՝ Լ.Ի. Բրեժնևին, Ա.Ն. Կոսիգինին, Ա.Ի. Միկոյանին, 1965 թ. .... | 45 |
| № 8. Լեռնային Ղարաբաղի մի խումբ մտավորականների նամակը ԽՍՀՄ կենտկոմի նախագահություն, 1965 թ. ....  | 55 |

№9. ՀԽՍՀ մտավորականության, կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչների նախկին ԽՄԿԿ կենտկոմի Գլխավոր քարտուղար Լ.Ի. Բրեժնևին, ԱՄԿԿ կենտկոմի Առաջին քարտուղար Վ.Յու. Ախունդովին, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա.Ե. Քոչինյանին, 1966 թ. ....59

№ 10. Письмо секретаря ЦК КП Армении А. Кочиняна и председателя Совета Министров Армянской ССР Б. Мурадяна в ЦК КПСС, 1966 г. ....61

№ 10<sup>1</sup>. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի և ՀԽՍՀ Սինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի նախկին ԽՄԿԿ կենտկոմ, 1966 թ. ....67

№ 11. Արցախահայության կոչը խորհրդային Հայաստանի հայությանը, կառավարությանը, կուսակցության կենտկոմին, հասարակական կազմակերպություններին, 1967 թ. ....75

№ 12. Из записки председателя КГБ Азербайджана Г. Алиева в комитет партийного контроля при ЦК КПСС о «националистических элементах», добивающихся выхода Нагорно-Карабахской области из состава Азербайджанской ССР и присоединения к Армении, 1969 г. ....79

№ 13. Բեյրութի «Ազդակ» օրաթերթի հրատարակած թղթակցությունն Արցախի կացության մասին, 1972 թ. ....80

№ 14. Письмо представителей интеллигенции, искусства, науки и образования Армянской ССР Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1972 г. ....84

№ 15. Письмо представителей интеллигенции Нагорного Карабаха Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1973 г. ....85

№ 16. Письмо писателя-публициста Л. Гурунца Первому секретарю ЦК КП Армении К.С. Демирчяну, 1975 г. ....91

№ 17. Телеграмма Л. Гурунца Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1975 г. ....94

|  |     |
|--|-----|
| № 18. Письмо Сильвы Капутикян Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1975 г. ....   | 95  |
| № 19. Письмо начальника архивного управления Армянской ССР А. Арутюняна Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1975 г. ....                                   | 97  |
| № 20. Письмо группы армян Нагорного Карабаха Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1975 г. ....  | 99  |
| № 21. Письмо-справка экономиста Б. Мирзояна в ЦК КП Армении и К. С. Демирчяну о социально-экономических и демографических проблемах НКАО, 1975 г. ....               | 104 |
| № 22. Սերո Խանգաղյանի նամակը ԽՍՀՄ կենտրոնի Գլխավոր քարտուղար Լ.Ի. Բրեժնևին, 1977 թ. ....   | 111 |
| № 23. Выписка из протокола заседания Президиума Совета Министров СССР от 23 ноября 1977 г. о целесообразности присоединения Нагорного Карабаха к Армянской ССР ..... | 115 |
| № 24. Письмо Джона Киракосяна в ЦК КП Армении, 1977 г. ....  | 116 |
| № 25. Արցախահայերի նամակը ԽՍՀՄ կենտրոնի Գլխավոր քարտուղար Լ.Ի. Բրեժնևին, 1980 թ. ....  | 117 |
| № 26. Письмо представителей армянской интеллигенции Генеральному секретарю ЦК КПСС Л.И. Брежневу, 1982 г. ....   | 120 |
| № 27. Телеграмма представителей армянской интеллигенции НКАО в ЦК КПСС, Генеральному секретарю ЦК М.С. Горбачеву, 1988 г. ....                                       | 128 |
| № 28. Решение IV внеочередной сессии Степанакертского городского Совета Народных депутатов XX созыва от 20 февраля 1988 года .....                                   | 130 |

№ 29. ԼՂԻՄ ժողպատգամավորների խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը ..... 132

№ 29<sup>1</sup>. Решение внеочередной сессии Совета Народных депутатов НКАО 20-го созыва от 20 февраля 1988 года ..... 133

№ 30. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կոլեկտիվի ժողովի 1988 թ. փետրվարի 23-ի որոշումը ..... 134

№ 31. Резолюция общего собрания коллектива Ереванского государственного университета от 24 февраля 1988 года ..... 135

№ 32. Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի կոլեկտիվի 1988 թ. փետրվարի 24-ի ընդհանուր ժողովի առաջարկությունը ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը ..... 136

№ 33. Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների արդիֆետորա-դասախոսական կազմի 1988 թ. փետրվարի 24-ի ընդհանուր ժողովի որոշումը ..... 137

№ 34. Резолюция общего собрания коллектива Матенадарана от 25 февраля 1988 г. .... 139

№ 35. Քաղվածք ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվի 1988 թ. փետրվարի 29-ի ժողովի որոշումից ..... 141

№ 36. Քաղվածք ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի կուսակցական կազմակերպության 1988 թ. մարտի 1-ի դռնբաց ժողովի արձանագրությունից ..... 142

№ 37. Резолюция открытого собрания партийной организации Института истории АН Армянской ССР от 1 марта 1988 г. .... 144

№ 38. Обращение Президиума АН Армянской ССР «О Нагорном Карабахе», 1988 г. .... 146

№ 39. ԽՍՀՄ ԳԱ և Հայկական ԽՍՀ ԳԱ իսկական անդամ Ա.Լ. Թախտաջյանի և բանաստեղծ Մ.Ա. Դուրդևի նամակը ԽՍՀՄ Կենտկոմի Գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին, 1988 թ. .... 150

№ 40. Постановление пленума Нагорно-Карабахского обкома КП Азербайджана «О поддержке требований населения автономной области относительно присоединения НКАО к Армянской ССР», 1988 г. .... 151

№ 41. Открытое письмо академика Андрея Сахарова М. Горбачеву, 1988 г. .... 152

№ 42. Սիլվա Կասարտիկյանի բաց նամակը ԽՍՀՄ գիտության, մշակույթի և մանուկի բոլոր ազնիվ գործիչներին, 1988 թ. .... 155

№ 43. Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի այլեմուծի որոշումը՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ ինքնավար մարզի աշխատավորների, կոմունիստների պահանջի մասին, 1988 թ. .... 163

№ 44. Երևանի Թատերական հրապարակում 1988 թ. հունիսի 12-ին տեղի ունեցած հանրահավաքի որոշումը ..... 163

№ 45. Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի որոշումը՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման մասին ..... 165

№ 45<sup>1</sup>. Постановление Верховного Совета Армянской ССР от 15 июня 1988 г. о решении внеочередной сессии Областного Совета народных

депутатов НКАО Азербайджанской ССР от 20 февраля 1988 года «О  
ходатайстве перед Верховными Советами Азербайджанской и  
Армянской ССР о передаче Нагорно-Карабахской Автономной  
Области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР»  
.....167

№46. Решение Восьмой сессии Совета Народных депутатов НКАО 20-  
го созыва «О провозглашении выхода Нагорно-Карабахской Авто-  
номной Области из состава Азербайджанской ССР» .....168

**ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԼՂԻՄ-Ի ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԻԿՈՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ**

**Փաստաթղթերի և նյութերի ժողովածու**

**Կազմողներ՝ պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյան  
պ.գ.դ. Հրանտ Աբրահամյան**

**БОРЬБА АРМЯН ЗА ВОССОЕДИНЕНИЕ  
НКАО С СОВЕТСКОЙ АРМЕНИЕЙ**

**Сборник документов и материалов**

**Составители: к.и.н., доцент Карен Хачатрян  
д.и.н. Грант Абраамян**

Տեխնիկական խմբագիր՝  
Համակարգչային շարվածքը՝  
Տպագրիչ՝

ՆԻՆԵՏԱ ԱՂԱՄՅԱՆ  
ԹՎԱՄԱՐԱ ՍՈՒՔԻԱՄՅԱՆԻ  
ԼԸՈՆ ՍՈՒՐԱԳՅԱՆ

**Հանձնվել է տպագրության 02.09.2011 թ.:  
Տպաքանակը՝ 300 օրինակ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՏՈՒՏ**

0019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 24/4